«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Հայկական բժշկական ինստիտուտի (այսուհետ՝ ՀԲԻ կամ ինստիտուտ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ) առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 3 տեղացի և 2 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 11

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 20

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 24

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 24

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 24

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 27

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 28

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 28

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 31

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 36

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 44

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 50

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 56

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 61

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 65

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 68

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 71

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 76

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 77

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 77

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 79

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 81

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 83

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 84

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 85

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Հայկական բժշկական ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել ՀԲԻ-ի գործունեության առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ ինստիտուտը պատրաստում է բժշկական ոլորտի մասնագետներ՝ ուղղված ազգային առողջապահական շուկայի կարիքների բավարարմանը: Այս համատեքստում կարևոր դեր ունի ՀԲԻ-ի տեղակայումը՝ «Էրեբունի» բժշկական կենտրոնի հարևանությամբ, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսումնական գործընթացի մի շարք ցիկլեր անցկացնել անմիջապես կլինիկական միջավայրում՝ փորձառու բժիշկների ղեկավարությամբ:

Բուհը սերտ համագործակցության մեջ է նշված կենտրոնի հետ, ինչը նպաստում է ուսանողների մասնագիտական զարգացմանը՝ տեսական ուսուցումը համադրելով գործնական փորձառության հետ: Բացի այդ, ՀԲԻ-ի հիմնադիրները բժիշկներ են, ովքեր սեփական մասնագիտական կապերի և հեղինակության շնորհիվ ապահովում են որակյալ դասախոսական կազմ՝ ներգրավելով ոլորտում գործող պրակտիկ բժիշկներին, ովքեր նաև մասնակցում են ուսումնական գործընթացին որպես դասախոսներ: Այս բոլոր գործոնները պայմանավորում են ՀԲԻ-ի կրթական առանձնահատուկ միջավայրը, որտեղ ուսանողները վաղ փուլից անմիջական շփում են հաստատում բժշկական պրակտիկայի հետ՝ նպաստելով իրենց մասնագիտական ինքնության ձևավորմանը և գործնական հմտությունների վաղամյա զարգացմանը:

Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ ինստիտուտը 2021 թվականին առաջին անգամ անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում բուհին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով: ՀԲԻ-ին, փորձագիտական զեկույցում նշված թերությունների և խորհրդատվությունների հիման վրա կազմել է թերությունների վերացման ծրագիր և ժամանակացույց: Համեմատելով նախորդ հավատարմագրման արդյունքների հետ՝ ՀԲԻ-ում տեղի է ունեցել կառուցվածքային բարելավում՝ հատկապես կրթական գործընթացի կազմակերպման, որակի մշակույթի ձևավորման և կառավարման գործընթացների բարելավման ուղղությամբ:

Հայկական Բժշկական Ինստիտուտում որակավորումների արժանահավատությունը պայմանավորված է կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային արդիականացմամբ, պրոֆեսիոնալ դասախոսական կազմի ներգրավվածությամբ և ռեսուրսների նպատակային կիրառմամբ:

Կրթական ծրագրերը զարգանում են շարունակական բարելավման տրամաբանությամբ՝ ներառելով վերջնարդյունքների հստակեցում, ուսուցման ինտեգրված ձևեր, իրական դեպքերի վերլուծություն և կլինիկական հմտությունների զարգացում հիվանդանոցային միջավայրում: ՄԿԾ-ները ապահովում են գործնական կարողությունների զարգացում՝ շնորհիվ կլինիկական ցիկլերի անմիջական անցկացման գործընկեր

հաստատություններում, ինչն ապահովում է ուսանողի մասնագիտական հմտությունների ձևավորումը իրական պայմաններում:

Դասախոսական կազմը համալրվում է ոլորտում գործող բժիշկ մասնագետներով, ովքեր ոչ միայն ներգրավված են ուսուցման գործընթացում, այլև նպաստում են ուսումնական նյութի արդիականացմանը և ուսանողների մասնագիտական կողմնորոշմանն ու մենթորությանը: Սա բարձրացնում է ուսուցման կայունությունը և նպաստում դասավանդման որակի պահպանմանը:

Ռեսուրսային բազան զարգացվում է փուլ առ փուլ՝ հատկապես շեշտը դնելով կլինիկական ուսուցման համար անհրաժեշտ միջավայրի և սիմուլյացիոն լաբորատորիաների ապահովման վրա: ՀԲԻ-ն նաև օգտագործում է գործընկեր հիվանդանոցների ռեսուրսները՝ լրացնելով սեփական լաբորատոր և տեխնիկական ենթակառուցվածքների բացերը: Բացի այդ, գրադարանային համալրումները, մասնագիտական ուղեցույցների մատչելիությունը և փորձառու բժիշկ դասախոսների կողմից տրամադրվող արդի տեղեկությունները ձևավորում են մասնագիտական կրթության համապատասխան միջավայր:

Հայկական Բժշկական Ինստիտուտում արձանագրվել է առաջընթաց ռազմավարական պլանավորման և կառավարման մշակույթի ձևավորման ուղղությամբ: Առաքելությունը հստակորեն արտահայտում է բուհի հիմնական նպատակները՝ մասնագետների պատրաստում ազգային առողջապահական ոլորտի համար: ՀԲԻ ընթացիկ գործունեությունն ընդհանուր առմամբ համահունչ է որդեգրած նպատակներին: Բուհում որոշումները կայացվում են սահմանված ընթացակարգերով՝ համապատասխան նիստերի, տվյալների վերլուծության և ներգրավված ստորաբաժանումների մասնակցությամբ, ինչը թույլ է տալիս իրականացնել համակարգված և հետևողական կառավարում: Այդուհանդերձ, ռազմավարական որոշումների կայացման գործընթացում դեռևս սահմանափակ է արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը կառավարման խորհուրդներում: Բացի այդ, ֆինանսական դիվերսիֆիկացիայի բացակայությունը կարող է խոչընդոտել ռազմավարական ծրագրի կայուն իրագործման ընթացքին:

Որակի ապահովման համակարգը կառուցվածքային առումով ամրապնդված է . գործում է որակի պատասխանատուների ցանց ամբիոնների և ֆակուլտետների մակարդակում, գործում է կրթության որակի ապահովման կենտրոն, կիրառվում են տվյալահեն գործիքներ՝ հարցումներ, դասալսումներ, վերանայումներ: Դրական միտում է գրանցվել նաև ՊԻԳԲ շրջափուլի կիրարկման ուղղությամբ: Այնուամենայնիվ, որակի ապահովման գործառույթները դեռևս հիմնականում կենտրոնացած են կրթական բաղադրիչի վրա և չեն ընդգրկում ինստիտուցիոնալ մյուս ոլորտները՝ կառավարում, միջազգային համագործակցություն: Բուհը, որպես մասնավոր բժշկական կրթական հաստատություն, ունի ներուժ ձևավորելու արդյունահեն կառավարման և ինստիտուցիոնալ որակի ապահովման ամբողջական համակարգ: Այդ նպատակով անհրաժեշտ է ամրապնդել ռազմավարական և ֆինանսական պլանավորման փոխկապակցումը, ապահովել հաշվետվությունների համադրելիություն, ընդլայնել որակի ապահովման ոլորտները և խորացնել արտաքին շահակիցների ներգրավվածությունը՝ ռազմավարական գործընթացների բոլոր փուլերում:

Ինչ վերաբերվում է բուհի երկարաժամկետ զարգացմանը, ՀԲԻ-ում առկա են ուսանողական գիտական ակտիվության խթանման միտումներ. գործարկված է ՈԻԳԸ, դասախոսների ու ուսանողների մասնակցությամբ իրականացվում են գիտական նախաձեռնություններ, իսկ որոշ դեպքերում ուսանողները մասնակցում են իրական հետազոտական գործընթացների:

Միևնույն ժամանակ, բացակայում է հստակ հետազոտական քաղաքականություն, որը կուղղորդի գործունեությունը բուհի պրոֆիլին համահունչ ուղղությամբ, ինչպես նաև հետազոտական ծրագրերի համակարգման, խթանման և արդյունքների համակարգային օգտագործման գործիքակազմ։

Միջազգայնացման ուղղությամբ նկատվում են առաջին քայլերը . առկա են համագործակցային նախաձեռնություններ ռուսական, գերմանական, իտալական բուհերի հետ։ Սակայն միջազգային համագործակցության ինստիտուցիոնալ շրջանակները սահմանափակ են . չկան շարժունության ծրագրեր, միջազգային դասընթացներ կամ կրթական նախագծեր, և չի ձևավորվել միջազգայնացման ռազմավարություն։ Համակարգող ստորաբաժանման բացակայությունը խոչընդոտում է գործընթացի շարունակական և համակարգված զարգացումը։ Հասարակության հետ կապի և սոցիալական պատասխանատվության ուղղությամբ ձևավորվել են մշակույթային հիմքեր . իրականացվում են դպրոցականների իրազեկման և մասնագիտական կողմնորոշման նախաձեռնություններ։ Սակայն համակարգային հանրային կապերի քաղաքականությունը դեռևս ձևավորված չէ, իսկ որոշ հաշվետվություններ՝ այդ թվում ռեկտորի, չեն հրապարակվում՝ սահմանափակելով տեղեկատվության հասանելիությունը արտաքին շահակիցների համար։ Ուսանողական ծառայությունների մասով արձանագրվում են ուսանողակենտրոն մոտեցման տարրեր՝ խորհրդատվություն, աջակցություն, ուսանողական կարծիքների հավաքագրում, անհատականացված պարապմունքներ։ Առկա են նախադրյալներ կարիերայի կենտրոնի, շրջանավարտների տվյալների բազայի ստեղծման և շրջանավարտների միության ձևավորման ուղղությամբ, սակայն դրանք պետք է ձևակերպվեն հստակ կառուցվածքով, պատասխանատուներով և ընթացակարգերով։

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ՀԲԻ-ի և բժշկական հաստատությունների սերտ կապը՝ համատեղ ռեսուրսների կիրառման և բժիշկ դասախոսների ներգրավման միջոցով ուսուցման պրակտիկ բաղադրիչի ուժեղացման համար,
2. Ուսուցման գործընթացի կազմակերպումը հիվանդանոցային միջավայրում, ինչը նպաստում է գործնական հմտությունների իրական պայմաններում ձևավորմանը,
3. Կլինիկական մտածողության զարգացմանն ուղղված առաջադրանքների ներգրավումը, որոնք կազմվում են պրակտիկ բժիշկների կողմից՝ ապահովելով մասնագիտական մտածելակերպի ձևավորում,
4. Ուսանողակենտրոն ուսուցման տարրերի աստիճանական ներդրումը՝ ներառյալ ակտիվ ուսուցման մեթոդներ և ուսումնական խմբերի սահմանափակ քանակ,
5. Որակի ապահովման մշակույթի ձևավորումը, ներառյալ ամբիոնային պատասխանատուների, ԿՈԱ կենտրոնի, պլանավորելու–իրականացնելու–վերլուծելու–բարելավելու մոդելի կիրառման տարրերի միջոցով,
6. Հետազոտական աշխատանքների ակտիվացումը՝ ուսանողների և դասախոսների մասնակցությամբ գիտաժողովների, թեմատիկ ուղղությունների ձևակերպմամբ և ՈԻԳԸ-ի գործունեության միջոցով հետազոտական մշակույթի ձևավորման տեսանկյունից։

Հաստատության թույլ կողմերն են.

1. Միջազգայնացման ռազմավարության և շարժունության ծրագրերի բացակայությունը,
2. Հետազոտությունների համար բյուջետային սահմանափակ աջակցությունը,
3. Բուհի ֆինանսավորման կախվածությունը ուսանողական վճարներից,
4. Արտաքին շահակիցների մասնակցության սահմանափակ հնարավորությունները կառավարման գործընթացներում,
5. Հաշվետվողականության մեխանիզմների ոչ ամբողջական կիրառությունը՝ ներառյալ ռեկտորների հաշվետվությունների ոչ հրապարակային լինելը և հաշվետվությունների տարբեր կառուցվածքները։

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Մշակել բիզնես պլան, որը կներառի ռազմավարական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկ, ռիսկերի գնահատում և ֆինանսավորման աղբյուրների հստակեցում՝ ապահովելով կայուն և իրատեսական պլանավորում։
2. Ռազմավարական ծրագրի հաջորդ վերանայման ընթացքում դիտարկել հետազոտական և միջազգայնացման ուղղությունների ամրագրումը՝ սահմանելով դրանց զարգացումն ապահովող նպատակներ և գործողություններ։
3. Վերանայել ռազմավարական ծրագրում ներառված ԳԱՑ-երը՝ ապահովելով դրանց չափելիությունը և փոխկապակցվածությունը կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունների և ռազմավարական ծրագրի պարբերական գնահատման մեխանիզմների հետ։

Կառավարումն ու վարչարարությունը

4. Սահմանել և ներդնել լիազորված կառավարման խորհուրդ, որը կներառի արտաքին շահակիցների՝ շրջանավարտների, գործատուների և ոլորտային մասնագետների մասնակցություն՝ ապահովելով ռազմավարական որոշումների բազմակողմ քննարկում և արտաքին վերահսկողություն։
5. Մշակել ֆինանսական դիվերսիֆիկացիայի ռազմավարություն՝ ներառելով միջազգային դրամաշնորհների ներգրավում, գործընկերային ծրագրեր, լրացուցիչ կրթական ծառայություններ և ներդրումային ուղղություններ։
6. Սահմանել ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների միասնական կառուցվածք և գնահատման ձևաչափ՝ ներառելով ռազմավարական ծրագրի իրականացման վերլուծություն և համապարփակ գնահատում երկու տարին մեկ անգամ։
7. Բարելավել արտաքին գործոնների (սոցիալ-տնտեսական, կրթական, օրենսդրական, շուկայական) վերլուծության մեխանիզմները՝ ապահովելով ռազմավարական պլանավորման և որոշումների կայացման արտաքին համատեքստի գնահատում։

Մասնագիտության կրթական ծրագրերը

8. Ամբողջացնել թեմատիկ և մեթոդաբանական ինտեգրումը կրթական ծրագրերում՝ ամրապնդելով առարկայական կապակցվածությունը համատեղ դասերի, ուսումնական պլանների և դասավանդման մոտեցումների մակարդակներում։

9. Կրթական ծրագրերում ներդնել գործնական հմտությունների համատարած և կառուցվածքային գնահատման գործիքներ (օրինակ՝ OSCE)։
10. Ապահովել ավարտական ատեստավորման հանձնաժողովների նախագահների առաջարկությունների վերլուծություն և ներմուծում կրթական ծրագրերի շարունակական բարելավման գործընթացում։
11. Տարածել կլինիկական մտածողության ձևավորման ուսումնական մեթոդները՝ հիմքում դնելով հիվանդանոցային միջավայրում դեպքերի ուսումնասիրման գործնական փորձառությունը և պրակտիկ բժիշկների կողմից առաջադրանքների տրամադրումը։
12. Շարունակել կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունը միջազգային ճանաչում ունեցող համալսարանների հետ՝ արդիական փորձերի ներմուծման և շարժունության հնարավորությունների ընդլայնման նպատակով։

Ուսանողները

13. Գնահատել դիմորդների հավաքագրման միջոցառումների արդյունավետությունը և արդյունքների հիման վրա ձևավորել ավելի համակարգված և երկարաժամկետ քաղաքականություն
14. Համակարգել ուսանողական աջակցության ծառայությունները, մասնավորապես՝ կրթական, սոցիալական և կարիերայի ուղղությամբ, հստակեցնելով գործառույթները և պատասխանատու ստորաբաժանումները։
15. Մշակել շրջանավարտների հետ կապի ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ներառյալ շրջանավարտների տվյալների բազա և կարիերայի զարգացման ուղղորդում՝ գործատուների հետ համագործակցությամբ։
16. Ձևավորել շրջանավարտների միավորում՝ շրջանավարտների հետ կապը պահպանելու և ինստիտուցիոնալ զարգացումը խթանելու համար։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

17. Շարունակել դասավանդման որակի գնահատման բազմաբնույթ մեխանիզմների զարգացումն ու արդյունքների վերլուծական կիրառումը՝ դասընթացների արդիականացման և վերապատրաստման ուղղությունների ճշգրտման համար։
18. Մշակել և իրականացնել պլանային վերապատրաստման համակարգ, որը կհիմնվի դասախոսական կազմի կարիքների պարբերական վերլուծության վրա, ներառելով դասավանդման մեթոդների, թեստերի կազմման հմտությունների, օտար լեզուների իմացության և հետազոտական կարողությունների զարգացումը։
19. Ստեղծել հնարավորություններ բժիշկ դասախոսների կողմից փորձի փոխանակման միջոցառումների իրականացման համար։
20. Խթանել երիտասարդ մասնագետների ներգրավումը՝ ձևավորելով աջակցման ծրագրեր՝ հետազոտական մենթորություն, փորձի փոխանակում փորձառու դասախոսների հետ և կարիերայի զարգացման հստակ ուղիներ։

Հետազոտությունը և զարգացումը

21. Մշակել և հաստատել գիտահետազոտական հստակ քաղաքականություն, որը կհիմնվի առկա ներուժի վրա՝ ներառյալ դասախոսական կազմի գիտական կարողությունները, համագործակցությունները տեղական և միջազգային

գիտահետազոտական ինստիտուտների, ինչպես նաև ուսանողների ներուժի և ներգրավվածության վրա։

22. Հաստատության ֆինանսական քաղաքականությունը՝ գիտահետազոտական գործունեությունը ճանաչելով որպես ներդրումային առաջնահերթ ուղղություն։
23. Գիտահետազոտական բաղադրիչը դարձնել կրթական ծրագրերի պարտադիր մաս՝ ապահովելով ուսանողների մասնագիտական աճը՝ հիմնված վերլուծական և հետազոտական հմտությունների վրա։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

24. Մշակել միջնաժամկետ պլան՝ նախակլինիկական և բազային առարկաների լաբորատոր ապահովման բարելավման համար՝ ներառյալ ռեսուրսների գնահատում, անհրաժեշտ սարքավորումների ցանկ և փուլային ներդրման մեխանիզմ։
25. Ներգրավել այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրներ՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով։
26. Ստեղծել հասանելի և թարմացվող էլեկտրոնային կատալոգ՝ ուսանողների և դասախոսների համար գրականության որոնումը հեշտացնելու և գրադարանից օգտվելու մշակույթը խթանելու նպատակով։
27. Շարունակել ամրապնդել համագործակցությունը կլինիկական բազաների հետ՝ արդիականացնելով մուլյաժային ու սիմուլյացիոն հնարավորությունները։

Հասարակական պատասխանատվությունը

28. Մշակել հանրային կապերի ռազմավարություն և հանրային հաղորդակցության քաղաքականություն, որն ուղղված կլինի ՀԲԻ-ի կողմից իրականացվող հանրօգուտ նախաձեռնությունների համակարգված ներկայացմանը տարբեր մեդիա հարթակներում։
29. Վերլուծել և բարելավել վեբկայքի և սոցիալական ցանցերի կառավարման գործառույթները, այդ թվում՝ դիտումների, ներգրավվածության և հաղորդակցության ցուցանիշները՝ համապատասխան տեղեկատվություն հասանելի դարձնելու և հետաքրքրված լսարանին ուղղվելու համար։
30. Հրապարակել տարեկան հաշվետվությունները և կրթական ծրագրերի հիմնական փաստաթղթերը՝ ապահովելով հանրային հաշվետվողականություն։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

31. Մշակել հստակ ռազմավարություն, որը կհամապատասխանի բուհի առաքելությանը և կներառի ուսանողների, դասախոսների շարժունությունը, միջազգային համագործակցության զարգացումը, դասավանդման լեզուների բազմազանությունը, և համատեղ կրթական ծրագրերի իրագործումը։
32. Մշակել և կիրառել չափելի ցուցիչներ՝ միջազգայնացման գործընթացի գնահատման համար, օրինակ՝ միջազգային ուսանողների թիվը, շարժունության ծրագրերին մասնակցության տոկոսը, համատեղ ծրագրերի քանակը և այլն։
33. Ստեղծել միջազգայնացման պատասխանատու համակարգող կամ բաժին՝ որը կղեկավարի միջազգային ծրագրերը, կկազմակերպի շարժունություն, կաջակցի

դիմումների պատրաստման գործընթացներին և կապահովի համակարգային իրականացում։

34. Վերանայել առկա համագործակցության պայմանագրերը՝ ապահովելով դրանց կենսունակությունը և իրական համագործակցային նախագծերի իրագործումը՝ ուսանողների, դասախոսների փոխանակման, համատեղ գիտաժողովների կամ հետազոտական նախագծերի միջոցով։
35. Բարելավել անգլերենի և այլ միջազգային լեզուների ուսուցումը՝ ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսական կազմի համար, այդ թվում նաև մասնագիտական լեզվով հաղորդակցման հմտությունների զարգացումը։

Որակի ներքին ապահովման համակարգը

36. Ընդլայնել որակի ապահովման գործընթացների շրջանակը՝ ներառելով կառավարման, ֆինանսական պլանավորման, ռեսուրսների բաշխման և միջազգային համագործակցության ուղղություններով մշտադիտարկում և ներքին գնահատում։
37. Խորացնել գործատուների ներգրավվածությունը կրթական ծրագրերի գնահատման և բարելավման գործընթացներում՝ ապահովելով ոչ միայն պարբերական հարցումներ, այլ նաև շրջանավարտների կարիերային հետագծման համակարգված իրականացում, ոլորտային քննարկումներ և գործատուների մասնակցությամբ դասընթացների համատեղ մշակում։
38. Մշակել և ներդնել գործողությունների պլանավորման և վերահսկման մեխանիզմ, որի միջոցով ուսանողական, շրջանավարտների, գործատուների հարցումների և դասալսումների վերլուծության արդյունքները կվերածվեն բարելավման հստակ գործողությունների, և կսահմանվի դրանց կատարողականի հետևման ու գնահատման գործընթացը։

Հերմինե Գրիգորյան
Փորձագիտական խմբի ղեկավար

19-ը հունիսի, 2025 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Վերլուծությունը կառուցված է՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակում ներկայացված 10 չափանիշների: Յուրաքանչյուր չափանիշի մասով ներկայացված են հիմնական ուժեղ կողմերը, բացահայտված թերությունները, խորհրդատվությունները:

Չափանիշ 1. Առաքելություն և նպատակներ

Ուժեղ կողմեր

Հայկական բժշկական ինստիտուտն ունի հստակ և յուրահատուկ առաքելություն, որն արտահայտում է հաստատության ռազմավարական ուղղվածությունը և նպատակադրումները: Առաքելության գործնական կիրառումն արտացոլված է 2022–2026 թվականների ռազմավարական պլանում: Հաշվետվողականության ապահովման նպատակով սահմանվել են հիմնական կատարողականի ցուցիչներ: Ներքին շահակիցներն ակտիվորեն ներգրավված են ռազմավարական պլանավորման և որոշումների կայացման գործընթացներում, իսկ արտաքին շահակիցների մասնակցությունը մասնակի է: Փաստաթղթավորման մշակույթը հաստատության ուժեղ կողմերից է: Ներքին գնահատման մեխանիզմները (հարցումների անցկացում, հաշվետվությունների պատրաստում և վերլուծություն) նպաստում են գործունեության թափանցիկությանը և հիմք հանդիսանում շարունակական բարելավման համար: 2021 թվականի հավատարմագրման գործընթացում ներկայացված առաջարկությունները հաշվի են առնվել ռազմավարական պլանավորման շրջանակում:

Թույլ կողմեր

Բուհը դեռևս հստակ չի ձևակերպել միջազգայնացման ռազմավարությունը: Ավելին, հետազոտության դերի և գործառույթների հստակ սահմանումը ռազմավարական փաստաթղթում կունենա իր դրական ազդեցությունը: Ռազմավարական պլանը պետք է ամբողջությամբ համընկնի ինստիտուտի առաքելության, տեսլականի և տարեկան գործողությունների հետ՝ ներառյալ կրթական, գիտահետազոտական և ծառայությունների մատուցման ուղղությունները:

Խորհրդատվություններ

- Ավելի հստակ ձևակերպել հաստատության տեսլականը:
- Մշակել միջազգայնացման ամբողջական ռազմավարություն:
- Վեր հանել և հստակեցնել գիտահետազոտական գործունեության դերը ռազմավարական պլանավորման մեջ:

Չափանիշ 2. Կառավարում ու վարչարարություն

Ուժեղ կողմեր

ՀԲԻ կառավարման կառուցվածքում հստակ սահմանված են կառավարման մարմինների դերերն ու պատասխանատվությունները: Ուսանողները և դասախոսական կազմը ներգրավված են գիտական և ֆակուլտետային խորհուրդների աշխատանքներում, ինչը

հնարավորություն է ընձեռում արտահայտել և ներկայացնել իրենց կարիքներն ու ակնկալիքները: Տարբեր հարցումների և մանրամասն հաշվետվողականության համակարգի միջոցով ձևավորված է տվյալների բազա, որն օգտագործվում է ինստիտուտի կառավարման և ռազմավարական որոշումների կայացման գործընթացներում: ՀԲԻ պաշտոնական կայքէջը հանրությանը տրամադրում է տեղեկատվություն հաստատության գործունեության հիմնական ուղղությունների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

Թույլ կողմեր

Կառավարման խորհրդի կազմը սահմանափակ է, և որոշումների կայացման գործընթացն իրականացվում է սահմանափակ թվով անձանց կողմից: Ռեկտորի պաշտոնը ռոտացիոն է՝ յուրաքանչյուր տարի ընտրվում է կառավարման խորհրդի անդամներից որևէ մեկը: Հաստատությունում բացակայում է հստակ ձևակերպված և տարանջատված էթիկայի կանոնակարգ: ՀԲԻ-ի ֆինանսական մուտքերը հիմնականում կախված են ուսանողական վարձավճարներից, ինչը բարձր ռիսկայնություն է ենթադրում: Արտաքին շահակիցների հետ հաղորդակցությունը համակարգային բնույթ չի կրում: Չկան զբաղվածության վերաբերյալ տվյալներ, բացակայում է շրջանավարտների հետ հետադարձ կապը, և ուսանողների արտահոսքը մշտադիտարկման չի ենթարկվում:

Խորհրդատվություններ

- Ընդլայնել Կառավարման մարմնի կազմը՝ ներառելով ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակ՝ հաշվի առնելով նաև 2021 թվականի հավատարմագրման ընթացքում տրված համապատասխան խորհրդատվությունները:
- Զարգացնել հաստատության հաղորդակցման գործընթացները:
- Մշակել և հաստատել էթիկայի կանոնակարգ:
- Ակտիվացնել շրջանավարտների հետ համագործակցությունը՝ ստեղծելով շրջանավարտների հետ կապի և հետագծի ուսումնասիրման համակարգ:
- Մշակել հնգամյա ֆինանսական բիզնես պլան և դիվերսիֆիկացնել ֆինանսական մուտքերի աղբյուրները:
- Ձևավորել տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգ՝ ներառելով տեղեկատվություն զբաղվածության, շրջանավարտների և արտահոսքի վերաբերյալ, կազմակերպության կայուն զարգացման համար:

Չափանիշ 3. Մասնագիտության կրթական ծրագրեր

Ուժեղ կողմեր

Կրթական ծրագրերը կառուցվածքային առումով հստակ են և տրամաբանական: Սահմանված են ուսումնառության վերջնարդյունքները, և ուսուցման գործընթացը համընկնում է ծրագրային նպատակների և արդյունքների հետ: Կիրառվում են ուսուցման տարբեր մեթոդներ: Ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքները համադրված են առարկայական վերջնարդյունքների հետ: Ինստիտուտում առկա են սիմուլյացիոն կենտրոններ՝ կլինիկական հմտությունների զարգացման նպատակով: Մշակվել են քաղաքականություններ՝ պրակտիկաների իրականացման և ակադեմիական ազնվության ապահովման նպատակով: Կրթական վերջնարդյունքները համեմատական վերլուծության են ենթարկվել ազգային և միջազգային համանման ծրագրերի հետ: Ծրագրերի որակի

վերահսկումն ապահովվում է պարբերական հարցումների միջոցով: Իրականացվում է նաև արտաուսումնական գործունեություն:

Թույլ կողմեր

Ուսանողների առաջընթացը, մասնավորապես՝ կլինիկական հմտությունների զարգացման գործընթացը, գնահատվում է տարբեր ձևաչափերով և մեթոդներով: Բացակայում է արհեստական բանականության կիրառման վերաբերյալ քաղաքականություն՝ ուսուցման, ուսումնառության և գնահատման գործընթացներում: Չկա ուսանողների արտահոսքի վերաբերյալ համակարգված մշտադիտարկման գործընթաց: Միջազգային համագործակցությունները սահմանափակ են, և ուսանողների շարժունության դեպքեր գրեթե չկան:

Խորհրդատվություններ

- Զարգացնել մասնագիտական և ակադեմիական համագործակցությունը ինչպես Հայաստանի, այնպես էլ արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:
- Փոխանակել լավագույն փորձը՝ ուսանողների առաջընթացի գնահատման, հատկապես՝ կլինիկական հմտությունների չափման մեթոդների վերաբերյալ:
- Մշակել և ներդնել արհեստական բանականության կիրառման քաղաքականություն՝ կրթության գործընթացում:

Չափանիշ 4. Ուսանողներ

Ուժեղ կողմեր

Բուհն ունի ուսանողների ընդունելության և ուսանողների հավաքագրման քաղաքականություններ: Ստեղծվել են խթաններ՝ լավագույն դիմորդների ներգրավման համար: Առկա են աջակցության մեխանիզմներ՝ ուսման առաջընթացում դժվարություն ունեցող ուսանողների համար: Իրականացվում է կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի վերաբերյալ ուսանողական կարծիքների պարբերական գնահատում: Ուսանողները ներգրավված են գիտական խորհրդի աշխատանքներում: Հնարավորություն կա անհատական խորհրդատվության, թեև այն դեռևս համակարգային բնույթ չունի: Ամեն տարի կազմակերպվում են հանդիպումներ փորձառու կլինիկական մասնագետների հետ: Որոշ ուսանողներ ներգրավված են հետազոտական աշխատանքներում: Ուսանողական խորհուրդն ունի լիազորություն զբաղվելու ուսանողների իրավունքների պաշտպանությամբ, թեև իրականացվող նախաձեռնությունները սակավ են: Բուհն ունի ուսանողների ուղեցույց: Շրջանավարտներն ակտիվորեն ներգրավված են ինստիտուցիոնալ գործընթացներում:

Թույլ կողմեր

Կրթական ծրագրերը ներկայումս իրականացվում են բացառապես հայերենով, ինչի արդյունքում գրեթե բացակայում են միջազգային ուսանողները: Չկան անհատական մենթորներ կամ կարիերայի կենտրոն: Ուսանողական ծառայություններից բավարարվածության մակարդակը միջին է՝ շուրջ 60%: Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ համապարփակ և վավերացված տվյալներ չկան: Արտալսարանային

աշխատանքներ իրականացվում են, սակայն դրանց խրախուսման մեխանիզմները սահմանափակ են։ Ուսանողների հեռացման մակարդակը բարձր է։

Խորհրդատվություններ

- Ստեղծել խթաններ այն արտալսարանային գործողությունների համար, որոնք ուղղված են հանրային շահին և բուհի հասարակական պատասխանատվությանը։
- Ձեռնարկել քայլեր՝ ապագայում միջազգային ուսանողներ ընդունելու համար (օրինակ՝ լեզվի դասընթացներ, ընդունելության տեղեկատվական փաթեթներ ոչ հայախոս ուսանողների համար, հատուկ ծրագրեր սփյուռքահայ ուսանողների ինտեգրման նպատակով)։
- Վերլուծել ուսանողների հեռացման բարձր ցուցանիշների պատճառները։
- Համակարգված ձևով հավաքագրել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալներ։
- Ակտիվորեն օգտագործել գործատուների ներգրավվածությունը՝ ուսումնական միջավայրի շարունակական բարելավման համար։

Չափանիշ 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

Ուժեղ կողմեր

Դասախոսական և վարչական անձնակազմի քանակն ընդհանուր առմամբ բավարար է հաստատության նպատակների իրականացման համար։ Կազմում ընդգրկված են բարձրակարգ մասնագետներ։ Երիտասարդ և տաղանդավոր դասախոսները խրախուսվում են։ Գործում են կադրերի հավաքագրման և ընտրության քաղաքականություններ։ Ամեն տարի շնորհվում է «Լավագույն դասախոս» մրցանակ։ Վերջին տարիներին դասախոսական կազմի աշխատավարձերն աճել են։ Ակտիվորեն խրախուսվում է դասախոսների մասնագիտական զարգացումը։ Դասախոսները ներգրավված են ներքին որակի ապահովման գործընթացներում, ինչպես նաև մասնակցում են որոշումների կայացման գործընթացին՝ ֆակուլտետային խորհրդի միջոցով։ ՀԲԻ-ի նախկին շրջանավարտներից շատերը հետագայում ներգրավվում են որպես դասախոսներ։

Թույլ կողմեր

Թեև դասախոսների համար կազմակերպվում են վերապատրաստման ծրագրեր, դրանց մասնակցության մակարդակը կարող է բարելավվել։ Մինչ այժմ վերապատրաստման ծախսերը հիմնականում հոգացել են դասախոսները՝ սեփական միջոցներով։

Խորհրդատվություններ

- Շարունակել և ուժեղացնել բարձրակարգ դասախոսների պահպանման (retainement) ռազմավարությունները։
- Ստեղծել խթաններ՝ դասախոսներին վերապատրաստումների և արտաուսումնական նախաձեռնությունների մասնակցության համար։
- Ընդլայնել հետազոտական հնարավորությունները ՀԲԻ-ում։
- Ստեղծել ֆինանսական և ինստիտուցիոնալ խթաններ՝ դասախոսական կազմի հետազոտական ակտիվության և հրապարակումների համար։

- Ստանձնել ֆինանսական պատասխանատվություն դասախոսների վերապատրաստումների համար։

Չափանիշ 6. Հետազոտություն և զարգացում

Ուժեղ կողմեր

Ուսումնական հաստատությունն ակտիվորեն խթանում է գիտահետազոտական գործունեության զարգացումը. այս ուղղությամբ կատարվել են մի շարք փուլային քայլեր։ Առկա են խթանման միջոցներ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու համար։ Բուհն ունի ճանաչված դասախոսներ և հրավիրյալ մասնագետներ, որոնք նաև այլ հաստատություններում իրականացնում են գիտահետազոտական գործունեություն։ Բացի այդ, գիտահետազոտական գործունեության համար առկա է նպաստավոր միջավայր՝ կլինիկաներ, ենթակառուցվածքներ, մասնագիտական անձնակազմ և այլն։

Թույլ կողմեր

ՀԲԻ-ն դեռ չունի հստակ ձևակերպված գիտահետազոտական ռազմավարություն և արտահայտված գիտահետազոտական պրոֆիլ։ Չկա գիտահետազոտական կենտրոն։ Գիտահետազոտական գործունեության համար նախատեսված բյուջեն շատ սահմանափակ է։ Մագիստրոսական ծրագրերում գիտական թեզը որպես պարտադիր բաղադրիչ ներառված չէ։ Գիտահետազոտական համագործակցության պայմանագրերը շատ սակավաթիվ են։ Գիտահետազոտական արդյունքներն ու տեսանելիությունն այս պահին դեռ ցածր են, սակայն կան որոշակի որակյալ ներդրումներ՝ դասագրքերի և մեթոդական ձեռնարկների տեսքով։ Ուսանողների ներգրավվածությունն առայժմ շատ սահմանափակ է։

Խորհրդատվություններ

- Մշակել համապարփակ գիտահետազոտական ռազմավարություն և համապատասխան գործողությունների ծրագիր։
- Զարգացնել համագործակցությունն ազգային և միջազգային գիտահետազոտական գործընկերների հետ։
- Հայթայթել արտաքին ֆինանսավորման աղբյուրներ՝ գիտահետազոտական ծրագրերի իրականացման համար։
- Սահմանել գիտահետազոտական գործունեության համար առանձին բյուջե։
- Սահմանել խթանային մեխանիզմներ՝ դասախոսների գիտահետազոտական ներգրավվածությունը բարձրացնելու համար, ինչպես նաև աջակցել նրանց՝ որակյալ գիտական ամսագրերում հոդվածներ հրապարակելու հարցում։

Չափանիշ 7. Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ

Ուժեղ կողմեր

Ուսումնական հաստատությունում իրականացվել են զգալի ներդրումներ՝ ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծման և արդիականացման ուղղությամբ։ Գործում են ժամանակակից կլինիկական լսարաններ և լաբորատորիաներ, իսկ սիմուլյացիոն լաբորատորիաների ստեղծումը գտնվում է իրականացման փուլում։ Դասախոսների աշխատավարձերն ամեն տարի ավելացվում են, ֆինանսական ծախսերը համահունչ են նոր ընդունվող ուսանողների թվին (ուսման վարձավճարների հիման վրա)։ Ներկայումս

ինստիտուտում սովորում է ավելի քան 800 ուսանող, և ուսանողների թիվը կայուն է։ Հաստատությունում առկա է պատշաճ փաստաթղթավարման համակարգ։ Գործում է առողջապահական ծրագիր, և համապարփակ անվտանգային միջոցառումներ են իրականացվել ուսումնական հաստատության տարածքում։ Ուսանողների և դասախոսների համար օգտագործվող ռեսուրսների արդյունավետության գնահատման նպատակով ներդրված է բազմաչափ մոնիթորինգային համակարգ։

Թույլ կողմեր

Ուսումնական հաստատության ֆինանսական եկամուտները հիմնականում հիմնված են ուսանողների ուսման վարձավճարների վրա. եկամուտների դիվերսիֆիկացիան դեռևս բացակայում է։ Բացակայում են երրորդ կողմի ֆինանսական ներգրավվածության մեխանիզմներ։ Չկա հաստատված հնգամյա բիզնես ծրագիր։ Թեև դասախոսների աշխատավարձերի տարեկան աճը գործում է որպես խրախուսման մեխանիզմ՝ բարձրորակ կադրերի պահպանման համար, սակայն դրա երկարաժամկետ կենսունակությունը հարցականի տակ է։

Խորհրդատվություններ

- Շարունակել և ավարտին հասցնել ենթակառուցվածքների արդիականացման նախաձեռնությունները։
- Զգտել ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացիայի՝ ներգրավելով երրորդ կողմի միջոցներ, մասնավորապես գիտահետազոտական և ծառայությունների ոլորտներում։
- Մշակել և հաստատել հնգամյա բիզնես պլան։
- Շարունակել կառավարման տեղեկատվական համակարգի զարգացումը և դրա, ինչպես նաև որակի ապահովման համակարգի արդյունքների հիման վրա իրականացնել հաստատության ռազմավարական կառավարում։

Չափանիշ 8. Հասարակական պատասխանատվություն

Ուժեղ կողմեր

Հաշվետվողականության կարգավորումն իրականացվում է իրավական փաստաթղթերով։ Տարեկան հաշվետվությունները նպաստում են թափանցիկության բարձրացմանը։ Ներքին հաշվետվողականությունն ապահովվում է ուսանողների առաջընթացի, կիսամյակային և ավարտական տվյալների հիման վրա, իսկ արտաքին հաշվետվողականությունը՝ ընդունելության փաստաթղթերով, ՀԲԻ-ի պարբերական հրապարակումներով և նախարարությանը ներկայացվող հաշվետվություններով։ Կայքը ծառայում է որպես արդյունավետ հաղորդակցության և թափանցիկության գործիք, ինչպես նաև օգտագործվում են «Էրեբունի Նյուզ»-ը և տեղական «Viber խմբի» տեղեկատվական հարթակը։ Հասարակությանը գիտելիքի փոխանցումն ու աջակցությունը ինստիտուտն իրականացրել է թե՛ COVID-19 համավարակի ընթացքում, թե՛ պատերազմի ժամանակ՝ ցույց տալով իր ներգրավվածությունը և հետաքրքրվածությունը համայնքի կարիքների նկատմամբ։ Ուսումնական հաստատությունում գործում է անատոմիայի թանգարանը, որը բաց է հանրային այցելությունների համար ուղեկցվող շրջայցերով։

Թույլ կողմեր

Ուսումնական հաստատության տեսանելիությունն ու ճանաչելիությունը հասարակության շրջանում դեռևս սահմանափակ է: Գիտելիքի փոխանցման և ծառայությունների տրամադրման ներուժը լիարժեք կերպով չի օգտագործվում: Դասախոսների մոտ համայնքային կամավոր գործունեության մասնակցության մոտիվացիան սահմանափակ է: Բացակայում է հաստատված մարքեթինգային հայեցակարգը: Կազմակերպության սոցիալական ազդեցության գնահատում դեռևս չի իրականացվում:

Խորհրդատվություններ

- Մշակել և ներդնել մարքեթինգային հայեցակարգ՝ ՀԲԻ-ի տեսանելիությունն ու հանրային իմիջը բարձրացնելու նպատակով:
- Մշակել սոցիալական ազդեցության գնահատման հայեցակարգ և համապատասխան ցուցանիշներ:
- Մշակել խթանման մեխանիզմներ՝ դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը սոցիալական ծրագրերում ապահովելու համար:
- Շարունակել կայքի բարելավումն ու արդիականացումը, ինչպես նաև ապահովել տեղեկատվության թարգմանությունը երեք լեզուներով:
- Ներդնել համակարգված մոտեցում՝ ուսանողներին և դասախոսներին ներգրավելու հասարակությանն ուղղված նախաձեռնություններում:

Չափանիշ 9. Արտաքին կապեր և միջազգայնացում

Ուժեղ կողմեր

Ուսումնական հաստատության առաքելությունը հստակ ազգային ուղղվածություն ունի, առկա է նաև ուղղվածություն դեպի Սփյուռքահայ համայնքներ: Կան սահմանված ընդունելության կարգեր օտարերկրյա ուսանողների համար, և 2019 թվականից սկսած հնարավոր է օտարերկրյա ուսանողների ընդունելություն ՀԲԻ-ում (չնայած նման դեպքերը դեռևս սակավաթիվ են): Իրականացվել են որոշ հաջող համագործակցային ծրագրեր Ռուսաստանի, Վրաստանի և Գերմանիայի հետ:

Թույլ կողմեր

Միջազգայնացման գործընթացը որոշակի թերահավատությամբ է ընկալվում ՀԲԻ-ի կառավարման մարմինների կողմից, ինչի արդյունքում դեռևս բացակայում է միջազգայնացման ռազմավարություն: Այս ուղղությամբ իրականացված միջոցառումների ծավալը փոքր է: Ուսումնական գործընթացն ամբողջությամբ իրականացվում է միայն հայերենով: Այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համատեղ կրթական ծրագրեր կամ գիտահետազոտական նախաձեռնություններ դեռևս չեն ձևավորվել:

Խորհրդատվություններ

- Ընդլայնել համագործակցությունները տեղական, ազգային և միջազգային մակարդակներում:
- Մշակել միջազգայնացման ռազմավարություն և համապատասխան գործողությունները ներառել ՀԲԻ-ի հնգամյա ռազմավարական ծրագրում:

- Ստեղծել հնարավորություններ ուսանողների և դասախոսների միջազգային ակադեմիական շարժունության համար՝ համագործակցելով այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների (օր.՝ Ռուսաստանում, Եվրոպայում և այլն) հետ։
- Մշակել և իրականացնել համատեղ ազգային և միջազգային կրթական ու գիտահետազոտական նախագծեր։
- Միջազգայնացման գործընթացը սկսել փուլային.
    - նախապատրաստական քայլերով՝ կազմակերպել լեզվական դասընթացներ ուսանողների և դասախոսների համար,
    - սահմանել շարժունության ժամանակային պատուհաններ (mobility windows),
    - կազմակերպել միջազգային գիտաժողովներ և հանդիպումներ,
    - ստորագրել փոխհամաձայնության հուշագրեր այլ բուհերի և մասնագիտական կառույցների հետ։

Չափանիշ 10. Որակի ներքին ապահովման համակարգ

Ուժեղ կողմեր

ՀԲԻ-ում առկա է ներքին որակի կառավարման համակարգի երկարամյա ավանդույթ, և տարեցտարի արձանագրում է առաջընթաց։ Մշակվել, ներդրվել և գնահատվել են որակի ապահովման քաղաքականություններ։ Գործում է ՊԻԳԲ շրջափուլը։ Առկա է մանրամասն նկարագրված ՈԱ ձեռնարկ, որը ներառում է հաստատությունում կիրառվող բոլոր գործընթացներն ու ՈԱ միջոցառումները։ Ստեղծվել է հստակ կառուցվածքով ներքին որակի ապահովման համակարգ։ ՈԱ կենտրոնի ղեկավարությամբ պարբերաբար իրականացվում են տարբեր հարցումներ՝ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների շրջանակում։ Գործում է խիստ հաշվետվողականության համակարգ, որը լրացնում է կառավարման տեղեկատվական համակարգը՝ հիմնված ՈԱ-ի վրա։ Ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն արտահայտելու իրենց կարիքներն ու առաջարկները, և լուրջ խնդիրների դեպքում ձեռնարկվում են համապատասխան միջոցներ։ ՈԱ կենտրոնը կազմակերպում է վերապատրաստումներ։

Թույլ կողմեր

ՈԱ կենտրոնի աշխատակիցների թիվը փոքր է՝ հաշվի առնելով նրանց պարտականությունների ծավալը։ Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող վերլուծության և բարելավման շարունակական կապն առկա է, սակայն ոչ բոլոր դեպքերում։ ՈԱ տվյալների և հաշվետվությունների օգտագործումը պետք է առավել ակտիվ կիրառվի կառավարման նպատակով։ Որակի մշակույթը դեռ ամբողջությամբ ձևավորված չէ, սակայն ՀԲԻ-ն այս ուղղությամբ դրական ուղով է շարժվում։

Խորհրդատվություններ

- Բոլոր գործընթացների համար ապահովել վերլուծության և բարելավման շարունակական կապը։
- Ակտիվորեն կիրառել ՈԱ արդյունքները՝ հաստատության ռազմավարական կառավարումը բարելավելու նպատակով։
- Պահպանել և զարգացնել սերտ համագործակցությունը ներքին և արտաքին շահակիցների հետ։

- Հաստատուն քայլերով առաջ շարժվել դեպի որակի մշակույթի ամրապնդում։

Ընդհանուր դիտարկումներ

Միջազգային փորձագետը ՀԲԻ-ի գործունեության վերաբերյալ ստացել է ընդհանուր դրական պատկեր։ Նախորդ հավատարմագրման այցից հետո առաջընթաց և բարելավումներ են արձանագրվել։ Ուսանողները բարձր են գնահատում կրթական ծառայությունների մատուցումը, դասախոսական կազմը մասնագիտական բարձր որակավորում ունի և ցուցաբերում է բարձր մոտիվացիա։ Կառավարման մարմիններն ու գործատուները ևս իրենց դրական ու ոգևորված մոտեցումն են արտահայտել։

Ռոլֆ Հոյսեր՝ *Բարձրագույն կրթության որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում միջազգային խորհրդատու, Շվեյցարիա։*

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Այցի ընթացքում համալսարանի աշխատակազմի ակտիվ մասնակցությունն ու համագործակցությունը զգալիորեն նպաստեցին գնահատման գործընթացի արդյունավետ իրականացմանը՝ դարձնելով այն առավել հստակ և կառուցվածքային: Մասնավորապես, հնարավոր դարձավ ավելի հստակ սահմանել ուսումնական հաստատության ուժեղ կողմերն ու զարգացման ենթակա ուղղությունները: Չնայած նախորդ փորձագիտական այցին՝ համալսարանի կառուցվածքը և կառավարման համակարգը շարունակում են կարիք ունենալ համապարփակ վերանայման: Որոշումների կայացումը պետք է իրականացվի բացառապես ապացուցահենք մոտեցմամբ՝ բացառելով անհատական հայեցողության ազդեցությունը, ինչը հատկապես կարևոր է ֆինանսական պլանավորման և բյուջետավորման գործընթացներում: Ֆինանսական ռեսուրսների բաշխումը պետք է համապատասխանի իրական կարիքներին, որոնք անհրաժեշտ է հստակորեն արտացոլել համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրում: Ֆակուլտետներին և կառուցվածքային ստորաբաժանումներին անհրաժեշտ է տրամադրել ավելի լայն լիազորություններ և ինքնավարություն՝ որոշումների կայացման գործընթացում:

Անհրաժեշտ է նշել, որ հետխորհրդային երկրների համար, որոնք իրականացնում են բժշկական կրթական ծրագրեր, ամենախնդրահարույց ոլորտները, որպես կանոն, կապված են կլինիկական ուսումնական բազաների և որակավորված ակադեմիական անձնակազմի հետ: Սակայն հենց այս երկու՝ բարձրորակ բժշկական կրթության ապահովման համար վճռորոշ բաղադրիչներն ինստիտուտում զարգացած են պատշաճ մակարդակով: Սա ամուր հիմք է ստեղծում ուսանողների համար՝ համապարփակ և արդյունավետ կերպով ինչպես տեսական գիտելիքներ, այնպես էլ գործնական հմտություններ ձեռք բերելու համար:

Խրախուսելի է այն հանգամանքը, որ հաստատության վարչակազմը գիտակցում է փոփոխությունների անհրաժեշտությունը: Այդ համատեքստում արդեն իսկ ձեռնարկվել են ենթակառուցվածքային բարելավման քայլեր. ձեռք են բերվել նոր սիմուլացիոն մանեկեններ, և ընթացքի մեջ է սիմուլացիոն կենտրոնի ստեղծման գործընթացը՝ նպատակ ունենալով աջակցել Օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննությունների (OSCE) ներդրմանը:

Մեկ այլ ուշագրավ հանգամանք է հաստատության գիտահետազոտական բաղադրիչի զարգացման նկատմամբ աճող ուշադրությունը: Այցի ընթացքում հնարավոր եղավ հանդիպել երիտասարդ հետազոտողների և ուսանողների հետ, ովքեր դրսևորեցին բարձր մոտիվացիա և պատրաստակամություն՝ ակտիվորեն ներգրավվելու գիտական գործունեության մեջ: Ինստիտուտն արդեն ձեռնարկել է խոստումնալից քայլեր այս ուղղությամբ, մասնավորապես՝ ստեղծվել է Ուսանողական գիտական խորհուրդ, որը ղեկավարում է բարձր մասնագիտական կարողություններ ունեցող երիտասարդ հետազոտող: Ավելին, դասախոսական անձնակազմի փորձը և հետազոտական ներուժը լրացուցիչ կերպով հաստատում են այն տեսակետը, որ ինստիտուտն ունի գիտական աշխատանքն առաջ մղելու զգալի ներուժ:

Ենթակառուցվածքային տեսանկյունից՝ հաստատության ղեկավարությունը պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնի ներառական միջավայրի ձևավորմանը՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական միջավայրին հարմարեցման գործընթացի լիարժեք ապահովմանը: Թեև շենքը հագեցած է վերելակներով և

հարմարեցված սանհանգույցներով, առկա ենթակառուցվածքները դեռևս ամբողջությամբ չեն համապատասխանում միջազգային չափանիշներին. օրինակ՝ մուտքի դռների լայնությունը բավարար չէ սայլակով մուտք գործելու համար:

Բացի այդ, համալսարանի գրադարանը պահանջում է էական բարելավումներ ոչ միայն ֆիզիկական ենթակառուցվածքների տեսանկյունից, այլև էլեկտրոնային գրադարանային ցանցերին ինտեգրվելու ուղղությամբ: Այս երկու բաղադրիչների համապարփակ կատարելագործումը կարևոր նախադրյալ է ուսանողների և դասախոսական կազմի համար՝ ժամանակակից ակադեմիական աղբյուրներին լիարժեք և շարունակական հասանելիություն ապահովելու նպատակով:

Մասնավորապես, գնահատելի է, որ ուսանողներն ակտիվորեն ներգրավված են հաստատության անունից իրականացվող տարբեր կամավորական նախաձեռնություններում: Նրանց մասնակցությունը COVID-19 համավարակի ժամանակահատվածում առանձնակի կարևորություն ուներ և արտացոլում է բարձր սոցիալական պատասխանատվության զգացում և հանրային առողջության հանդեպ անբեկանելի նվիրվածություն:

Հավասարապես ուշադրության արժանանում են ատամնաբուժական ֆակուլտետի ուսանողների գործունեությունը, մասնավորապես նրանց տարածաշրջանային համայնքներում իրականացվող իրազեկման և տվյալահավաք աշխատանքները: Հավաքված վիճակագրական տվյալներն օգտագործվում են նաև գիտական հոդվածների պատրաստման և հրապարակման համար, ինչը բարձրացնում է նրանց գիտահետազոտական և պրակտիկ գործունեության արդյունավետությունը և ակադեմիական արժեքը:

Բացի այդ, ինստիտուտը ներդրել է վճարումների ճկուն համակարգ, որը հաշվի է առնում Հայաստանի գործող տնտեսական պայմանները: Այս ուսանողակենտրոն մոտեցումը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում անհատականացնել վճարման գրաֆիկները, ինչն իր հերթին նպաստում է կրթության ավելի լայն շերտերի հասանելիության ապահովմանը:

Այս փուլում միջազգայնացման և միջազգային համագործակցության զարգացումը հաստատության ամենամեծ խոցելի կողմերից են: Թեև վարչակազմի մի քանի անդամներ նշել են, որ միջազգային ուսանողների ներգրավումը այս պահին առաջնահերթություններից չէ:

Միջազգայնացման ամրապնդումը, ընդհակառակը, կբարձրացնի հայ ուսանողների մասնագիտական հնարավորությունները՝ հնարավորություն ընձեռելով նրանց ունենալ ավելի լայնածավալ ակադեմիական և մասնագիտական միջավայր, որը համեմատելի կլինի եվրոպական համալսարաններում իրենց հասակակիցների փորձին:

Կարևոր է նշել, որ ավելի լայն միջազգային ներգրավվածության ցանկությունն արտահայտվել է նաև ուսանողների հետ հարցազրույցների ընթացքում: Հստակ երևում է, որ ակադեմիական անձնակազմը կշահեր միջազգային փոխանակման ծրագրերում ակտիվ մասնակցությունից, ինչը կհեշտացնի նորարար ուսուցողական մեթոդների ինտեգրումը ուսումնական ծրագրերում և կհարստացնի կրթական գործընթացը:

Ի հավելումն, միջազգային հետազոտական նախագծերում ներգրավվածությունը զգալիորեն կբարձրացնի ֆակուլտետի և ուսանողների վարկանիշն ու ճանաչումը միջազգային ակադեմիական շրջանակներում, ինչը կարևոր գործոն է հաստատության երկարաժամկետ զարգացման համար:

Ուստի կարևոր է, որ համալսարանը մշակի հստակ ռազմավարություն և կոնկրետ մոտեցումներ միջազգայնացման խթանման համար: Սա ներառում է առկա գործընկեր

հաստատությունների հետ համագործակցության առավել արդյունավետ օգտագործումը, նոր փոխըմբռնման հուշագրերի ստորագրումը ուսանողների և աշխատակազմի փոխանակման ծրագրերի աջակցման նպատակով, ակտիվ մասնակցությունը միջազգային հետազոտական համագործակցություններին, ինչպես նաև անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների հատկացումն այս նախաձեռնությունները ամրապնդելու համար: Այս ոլորտի զարգացումը ռազմավարական նշանակություն կունենա հաստատության մրցունակության բարձրացման առումով տարածաշրջանային բարձրագույն կրթության ոլորտում:

Որակի ներքին ապահովման համակարգի առումով, որակի ապահովման կենտրոնը մշակել է հարցաթերթերի շարք և պարբերաբար կազմակերպում է հարցումներ՝ ուսանողների և աշխատակիցների բավարարվածության գնահատման համար: Արդյունքներն օգտագործվում են ծրագրերի բարելավման նպատակով:

Այնուամենայնիվ, չնայած դեռևս ամբողջությամբ համակարգված չլինելուն, իրականացվում են փորձեր նաև ծրագրային արդյունքների մշտադիտարկման ուղղությամբ: Այս ոլորտը սակայն պահանջում է հետագա կատարելագործում և ստանդարտացված ընթացակարգերի ներդրում: Ինչպես օրինակ՝ որակի ապահովման կենտրոնը պետք է հստակ չափորոշիչներ սահմանի ծրագրային հատուկ արդյունքների գնահատման համար և սահմանի համապատասխան հիմնական կատարողականի ցուցիչներ (KPI-ներ): Այս ցուցիչների համեմատական վերլուծությունը՝ հատկապես գործընկեր համալսարանների հետ, կտրամադրի արժեքավոր տեղեկատվություն և կխթանի շարունակական բարելավումը:

Լիարժեք ՊԻԳԲ շրջափուլի արդյունավետ իրականացումն ապահովելու համար որակի ապահովման կենտրոնը պետք է ներգրավված լինի ոչ միայն մշտադիտարկման գործընթացներում, այլ նաև առաջարկությունների մշակման և հետևողականության ապահովման գործում: Բացի այդ, այն պետք է պատասխանատվություն ստանձնի ռազմավարական զարգացման նպատակների իրականացման մշտադիտարկման համար: Այցի ընթացքում ակնհայտ դարձավ, որ ինստիտուտն իրական ջանքեր է գործադրում որակի մշակույթի ամրապնդման ուղղությամբ, ինչը խորապես գնահատելի է: Տրված առաջարկությունները հաշվի առնելը կնպաստի այս մշակույթի արդյունավետ և կայուն ներդրմանը՝ ինստիտուցիոնալ մակարդակով:

Տարիների ընթացքում ինստիտուտը եղել է այնպիսի նշանավոր գիտնականների և բժիշկների դարբնոց, ովքեր ոչ միայն հիմնադրել են Հայաստանի Հանրապետությունում տարբեր բժշկական ոլորտների զարգացման հիմքերը, այլ նաև հանդիսացել են ոգեշնչման և մոտիվացիայի աղբյուր՝ հաջողակ բժիշկների և մանկավարժների մի քանի սերունդների համար: Այս ակադեմիական ժառանգությունը պահանջում է պահպանել և շարունակաբար բարձրացնել այն բարձր որակի կրթության մակարդակը, որի հիմքերը հաստատությունն արդեն ամրապնդել է:

Հատկապես խրախուսիչ էր այն փաստը, որ ինստիտուտի ակադեմիական անձնակազմը շարունակում է մնալ ամենաուժեղ ռեսուրսներից մեկը: Բարձր որակավորմամբ պրոֆեսորադասախոսական կազմը, հրավիրված պրակտիկ մասնագետներն ու ոլորտային փորձագետները էական դերակատարում ունեն ուսանողների ակադեմիական հաջողությունների ապահովման գործում: Առաջիկա հիմնական մարտահրավերը կայանում է այդ մասնագետների շարունակական աջակցման և նրանց միջազգային փորձ ձեռքբերելու հնարավորությունների ընդլայնման մեջ: Սա կնպաստի նրանց ուսուցման հարստացմանը՝ նոր տեսանկյունների, մեթոդաբանությունների և նորարարական մոտեցումների ինտեգրման

միջոցով: Նման արդյունքի կարելի է հասնել միջազգայնացման գործընթացների ամրապնդմամբ և ֆակուլտետի մասնագիտական կարողությունների զարգացման ծրագրերին՝ հատկապես ուսուցման մեթոդաբանության և միջազգային գիտահետազոտական համագործակցության ուղղությամբ, առավել լայն հասանելիության ապահովմամբ:

Ի վերջո, ինստիտուտի հաջողության ամենակարևոր ցուցիչը նրա ուսանողներն են և նրանց բավարարվածության մակարդակը: Կարևոր է նշել այն հանգամանքը, որ այցի ընթացքում ոչ մի ուսանող ինստիտուտի մասին չխոսեց առանց հպարտության և ոգևորության: Նրանց ակադեմիական պատրաստվածության մակարդակը նույնպես գնահատման արժանի էր: Ուսանողների կողմից առավել հաճախ արտահայտվող ցանկությունն էր փոխանակման ծրագրերին մասնակցելու և միջազգային փորձառություն ձեռք բերելու հնարավորությունների ընդլայնումը: Այս համատեքստում հատուկ ուշադրություն պետք է դարձվի անգլերենի ուսուցման իրականացմանը: Լեզվական կարողությունների բարելավումը կնպաստի, որ ՀԲԻ-ի ուսանողներն ունենան հավասար հնարավորություններ մասնակցելու միջազգային ծրագրերին, հաղորդակցվելու արդի գիտական գրականության և ակադեմիական հրապարակումներին, ինչպես նաև օգտվելու այն ակադեմիական ռեսուրսներից, որոնք հասանելի են եվրոպական համալսարանների ուսանողներին:

Հայկական բժշկական ինստիտուտը ցուցաբերում է հստակ հանձնառություն որակյալ բժշկական կրթության ապահովման նկատմամբ և ունի զարգացման մեծ ներուժ:

Նինո Չիչիվեիշվիլի՝ *Վրաստանի կրթության որակի բարելավման ազգային կենտրոնի փորձագետ, «Գեոմեդի» համալսարանի դասախոս, Վրաստան:*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Հայկական բժշկական ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Հերմինե Գրիգորյան՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, Հայաստան, փորձագիտական խմբի ղեկավար,

Նինո Չիչիվեիշվիլի՝ Վրաստանի Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնի փորձագետ, «Գեոմեդի» համալսարանի դասախոս, Վրաստան, փորձագիտական խմբի միջազգային անդամ,

Ռոլֆ Հոյսեր, Բարձրագույն կրթության որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում միջազգային խորհրդատու, Շվեյցարիա, փորձագիտական խմբի միջազգային անդամ,

Նաիրա Հունանյան՝ կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Մխիթար Գոշ Հայ-Ռուսական միջազգային համալսարանի դասախոս, Հայաստան, փորձագիտական խմբի անդամ,

Աստղիկ Համբարձումյան՝ Երևանի պետական համալսարանի ուսանող, Հայաստան, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավար **Վարդուհի Գյուլազյանը**:

Թարգմանությունը կատարել է **Վարդանուշ Բաղդասարյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Հայկական բժշկական ինստիտուտը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ինստիտուտի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծությունը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, ինստիտուտի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ինստիտուտի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբի աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են փորձագետների վերապատրաստումներ:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև դասալսումներ: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախնական այց

2025 թվականի ապրիլի 15-ին Հայկական բժշկական ինստիտուտում տեղի է ունեցել հանդիպում հաստատության ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը [2], ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը [3], քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2025թ. ապրիլի 28-ից մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետների հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց
[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են Հիմնարկի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր պարտադիր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն և ռեսուրսների դիտարկում[4]:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է ինստիտուտի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է ինստիտուտին:

ՀԲԻ-ին փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը վերջնականացրել է զեկույցը և տրամադրել բուհին 19-ը հունիսի 2025թ.:

Վարդուհի Գյուլազյան
Փորձագիտական խմբի համակարգող

16-ը հունիսի, 2025 թ.

[4] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Հայկական բժշկական ինստիտուտը (ՀԲԻ) հիմնադրվել է 1990թ.-ին՝ որպես հետխորհրդային տարածքում առաջին մասնավոր բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություն: Հաստատությունն իր սկզբից նպատակ էր դրել ստեղծել բարձրակարգ մասնագիտական կրթության միջավայր՝ կապելով գիտությունը կրթության հետ: 2001 և 2021 թվականներին ՀԲԻ-ն ստացել է պետական հավատարմագրում՝ հաստատելով իր կայուն տեղը ՀՀ բուհական համակարգում:

Իր պատմության առանցքային փուլերում ՀԲԻ-ն կարևոր ձեռքբերում է ունեցել գիտահետազոտական կառույցների հետ համագործակցության շնորհիվ՝ հիմնելով ամբիոններ, որոնք ապահովում էին միջդիսցիպլինար կրթական փորձ և վեր հանելով մասնագիտական առարկաների նորարարական դասավանդման մոդելներ:

Կրթություն. ՀԲԻ-ում գործում են երկու ֆակուլտետներ՝ Բուժական գործ և Ստոմատոլոգիա: Ինստիտուտն ունի 16 ամբիոն, որոնք տեղակայված են ինչպես սեփական մասնաշենքում, այնպես էլ 27 առաջատար կլինիկական բազաներում: Հիմնական ուսումնա-արտադրական բազան շարունակում է մնալ «Էրեբունի» բժշկական կենտրոնը, որտեղ ուսանողները ձեռք են բերում թե՛ տեսական գիտելիքներ, թե՛ գործնական հմտություններ: Տարիների ընթացքում ՀԲԻ-ի լսարանները, լաբորատորիաները և ֆանտոմային սենյակները համալրվել են ժամանակակից սարքավորումներով: 2017 թվականից մեկնարկել են նոր լաբորատոր լսարանների կառուցման աշխատանքները, որոնք զբաղեցնում են երկրորդ հարկը:

Դասախոսական կազմը բաղկացած է շուրջ 150 բարձրակարգ մասնագետներից՝ ներառյալ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ, գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ և դոցենտներ: Այս կազմի կայունությունը և փորձառությունը նպաստում է որակյալ կրթական գործընթացի ապահովմանը:

Հետազոտություն. Ինստիտուտը կարևորում է ուսանողների և դասախոսների մասնակցությունը գիտահետազոտական գործընթացներին: Ուսանողներն ակտիվորեն ներգրավվում են լաբորատոր աշխատանքներում՝ դասախոսների անմիջական ղեկավարությամբ: ՀԲԻ-ում իրականացվում է գիտաժողովների կազմակերպում և հանդեսների հրատարակում:

Միջազգայնացում. ՀԲԻ-ն իր նպատակների շրջանակում ձգտում է բարձրացնել միջազգային ճանաչելիությունը՝ զարգացնելով ուսումնական ծրագրերի բենչմարքինգը, ապահովելով արդիական ուսումնական միջավայր և խթանելով դասախոսական կազմի շարժունությունը:

Որակի ապահովում. Ինստիտուտը որակի ապահովման նպատակով շարունակում է ներդնել ժամանակակից կրթական և գիտական մոդելներ՝ վերահսկելով ուսումնական գործընթացի արդյունավետությունն ու համապատասխանությունը մասնագիտական չափանիշներին:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1.ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Հայկական բժշկական ինստիտուտի (այսուհետ՝ ՀԲԻ) առաքելությունն ամրագրված է համալսարանի 2022-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԶԾ), համաձայն որի՝ «Հայկական բժշկական ինստիտուտը բժշկական ուղղվածություն ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է մեր երկրի բժշկագիտական բնագավառում լինել մրցունակ, ունենալ բարձր վարկանիշ, տրամադրել իր ուսանողներին որակյալ կրթություն՝ պատրաստելով բազմակողմանի զարգացած բժիշկ-մասնագետներ՝ պատասխանատվության բարձր զգացումով օժտված, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող և դրանք տարածող, պատրաստ ծառայելու հանրությանը»: ՀԲԻ-ի տեսլականն է՝ կատարելագործել և զարգացնել իր կրթական, գիտական, խորհրդատվական, կառավարման և տեղեկատվական համակարգերը, որի իրագործման համար ՌԶԾ-ում սահմանվել են յոթ ռազմավարական ուղղություններ.

- բարձրորակ կրթություն,
- մարդկային ռեսուրսների կառավարում,
- արդիական հետազոտություն և նորարարություն,
- կողմնորոշված դիմորդներ և ուսանողներ,
- արդյունավետ կառավարում, ֆինանսական կայունություն, ժամանակակից ենթակառուցվածք,
- հանրային ներգրավում, սոցիալական համագործակցություն և ծառայություններ,
- արտաքին կապեր և միջազգային համագործակցության ընդլայնում:

ՀԲԻ-ին կրթական ծառայություններ է մատուցում ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի (այսուհետ՝ ՈԱՇ) 7-րդ մակարդակում, և ավարտելուց հետո ուսանողները շարունակում են ուսումը կլինիկական օրդինատուրայում՝ բժշկական գործունեությանը պատրաստ լինելու նպատակով: Հայկական բժշկական ինստիտուտը շեշտադրում է իր կարևոր դերակատարությունը որպես տեղական կողմնորոշում ունեցող բժշկական բուհ՝ ապահովելով կրթական գործընթացի կազմակերպումը հայերենով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզվեց, որ նոր ՌԶԾ-մ մշակելիս իրականացվել է նախորդի վերլուծություն, կատարողականի գնահատում և վերջինիս իրականացման ընթացքում չկատարված գործողությունները տեղ են գտել 2022-2026 թվականների ՌԶԾ-ում: Ռազմավարական ուղղություններից բխող նպատակների ներքո, պլան–ժամանակացույցում սահմանվել են խնդիրները, դրանց իրականացման համար անհրաժեշտ քայլերը, ակնկալվող արդյունքները, սահմանված

գործողությունների պատասխանատուները և կատարման ժամկետները: Առկա է ՌԶԾ գործողությունների կատարման միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում: Նախորդ հավատարմագրման խորհրդատվության համաձայն նոր ՌԶԾ-ում ներառվել են գնահատման առանցքային ցուցիչներ:

Առկա չէ համապատասխան բյուջե կամ հաշվարկ, որը կարտահայտի ռազմավարական նպատակի իրականացման համար պահանջվող ֆինանսական ծավալները: Ռազմավարական ծրագիրը չի ընդգրկում գիտահետազոտական գործունեության և միջազգայնացման ուղղություններով զարգացման հստակ մոտեցումներ:

ՌԶԾ-ում սահմանված նպատակների իրագործման ուղղությամբ ձեռնարկվում են հետևողական քայլեր: Մասնավորապես, նախորդ հավատարմագրման շրջանակներում կազմած փորձագիտական զեկույցի արդյունքներից ելնելով՝ վերանայվել են երկու մասնագիտական կրթական ծրագրերը, առարկայական մասնագրերը, հստակեցվել են կրթական ծրագրերի վերջնարդյունքները: Բուհն, իր սահմանած նպատակներին համահունչ, իրականացրել է կրթական ծրագրերի բենչմարքինգ՝ ապահովելով դրանց շարունակական զարգացումը: Կառուցվել և վերանորոգվել են լսարաններ, որոնք համալրվել են անհրաժեշտ գույքով: Պատվիրվել է սիմուլյացիոն կենտրոնների գույքը, իսկ կենտրոնների կառուցման գործընթացը ներկայումս ընթացքի մեջ է:

1.2.ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

2022 թվականին ՀԲԻ-ն մշակել և հաստատել է «ՀԲԻ շահակիցների հետ աշխատանքների կանոնակարգը», որն ամրագրում է ներքին շահակիցների՝ ուսանողների, դասախոսների, վարչական և օժանդակ անձնակազմի և արտաքին շահակիցների՝ շրջանավարտների, դիմորդների, հետդիպլոմային կրթության կենտրոնների և գործատուների (բժշկական կազմակերպությունների և դրանց ղեկավարների) հետ կապի ձևերն ու միջոցները: Կանոնակարգում սահմանվում են նաև կարիքների հետազոտման արդյունքների կիրառման ուղղությունները՝ բուհի ռազմավարական ծրագրերի և տեսլականի մշակման, գործունեության հիմնական ոլորտների գնահատման գործընթացում և այլն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ շահակիցների կարիքների վերհանման եղանակները հարցումներն են, հանդիպումները, ֆոկուս խմբային քննարկումները: Արտաքին շահակիցների շրջանում հարցումները իրականացվել են Google Forms հարթակի միջոցով, ինչպես նաև վերջին տարիներին փորձ է արվել հարցաշարն ուղարկել բժշկական կենտրոններ:

Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, նաև որ բուհի հիմնադիրները շաբաթական մեկ անգամ քննարկում են ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը, խնդիրները: Անհրաժեշտության դեպքում այդ հանդիպումներին մասնակցում են այլ ստորաբաժանումների ղեկավարներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը, շահակիցների հետ համագործակցությունն ակտիվացնելով և նախորդ հավատարմագրման ընթացքում ստացած խորհրդատվությունները հաշվի առնելով, կարողացել է ձևավորել ընդհանուր պատկերացում համալսարանի առաքելության և նպատակների վերաբերյալ: Արդյունքում, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները հիմնականում կիսում են բուհի որդեգրած առաքելությունը, որի կենտրոնում տեղական աշխատաշուկայի համար մրցունակ բժիշկների պատրաստումն է: Բուհի սահմանված նպատակներն ուղղված են այդ առաքելության

արդյունավետ իրականացմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ներքին շահակիցները կարևորում են, որ բուհը քայլեր ձեռնարկի միջազգայնացման ուղղությամբ, օրինակ ծրագրերի ներգրավվածություն, շարժունության ապահովում, որը ներկայում չի շեշտադրվում առաքելությամբ:

1.3.ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ում առաքելության և նպատակների իրագործման արդյունքների գնահատման և բարելավման համար գործում են որոշակի մեխանիզմներ: Ըստ ինքնավերլուծության, ռազմավարական ծրագրի արդյունքների գնահատման հիմնական գործիքներից է հաշվետվողականության գործընթացը, որն իրականացվում է «ներքևից վերև» սկզբունքով՝ սկսած դասախոսներից մինչև ռեկտոր:

Փորձագիտական խմբի ուսումնասիրություններով պարզվեց, որ բուհում առկա է ռազմավարական նախորդ ծրագրի արդյունքների գնահատման մեխանիզմ, որտեղ նշված են կատարված և չկատարված նպատակները: Հաշվետվությունները նույնպես դիտարկվում են ՌԾ գնահատման մեխանիզմ: Միևնույն ժամանակ ռեկտորների տարեկան ռոտացիայի հետևանքով հաշվետվությունները տարբեր տարիներին ունենում են տարբեր ձևաչափեր: Որոշ հաշվետվություններ փոխկապակցվում են ռազմավարական ծրագրում սահմանված նպատակների հետ՝ ներկայացնելով դրանց իրագործման մակարդակն ու առկա խնդիրները: Սակայն ֆակուլտետների տարեկան հաշվետվությունները հաճախ կրկնում են ուսումնական վարչության փաստաթղթերը՝ առանց ռազմավարական ծրագրի նպատակների հետ հստակ կապի:

Բացի այդ, ռազմավարական ծրագրում կիրառվող ԳԱՑ-երը հիմնականում ունեն նկարագրական բնույթ և շատ դեպքերում չեն արտահայտվում քանակական կամ չափելի ցուցանիշներով: Օրինակ՝ տվյալներ վերապատրաստումների մասին, համագործակցության պայմանագրերի քանակը, ուսանողական գիտաժողովների անցկացումը, գրադարանային ֆոնդի թարմացումները և այլն՝ ներկայացվում են փաստական տեսքով՝ առանց չափելիության և արդյունքային գնահատման հստակ մեխանիզմի:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ նախորդ հավատարմագրման արդյունքում բուհում նկատելի առաջընթաց է գրանցվել ռազմավարական պլանավորման մշակույթի ձևավորման ուղղությամբ: Ռազմավարական ծրագիրը ձևավորվել է առաքելության հիման վրա, իսկ ընթացիկ գործունեությունն, ընդհանուր առմամբ, համահունչ է որդեգրած նպատակներին: Ռեկտորատի և ստորաբաժանումների միջև պարբերական խորհրդակցությունների անցկացումը հիմք է հանդիսանում գործընթացների համակարգված կառավարման համար: Նշանակալի է ներքին շահակիցների ակտիվ մասնակցությունը ռազմավարական նպատակների իրագործման գործընթացներում, ինչը վկայում է շահակիցների ներգրավման բարձր մակարդակի և զարգացման ներուժի մասին:

Բուհի ռազմավարական կառավարման բարելավման համար կարևոր է ռազմավարական ծրագրի և բյուջետավորման համակարգի փոխկապակցումը: Յուրաքանչյուր ռազմավարական ուղղություն կամ գործողություն պետք է ունենա հստակ նախանշված ֆինանսական ապահովում և ռեսուրսների բաշխման հաշվարկ: Դրա համար բուհին

նպատակահարմար է մշակել նաև բիզնես պլան, որը կներառի ռեսուրսների գնահատում, ռիսկեր, կանխատեսումներ և հնարավոր մոդելներ ռեսուրսների ներգրավման և ծախսարդյունավետ կառավարման համար:

Առաքելության ներկայիս տարբերակը բավարար հստակությամբ արտահայտում է բուհի հիմնական գործունեությունը՝ մասնագետների պատրաստում տեղական աշխատաշուկայի համար: Սակայն, հաշվի առնելով գիտահետազոտական բաղադրիչի և միջազգայնացման ուղղությամբ զարգանալու կարիքը, ռազմավարական ծրագրի առաջիկա վերանայման ընթացքում բուհին նպատակահարմար է վերաիմաստավորել առաքելությունը՝ ներառելով այդ առանցքային ուղղությունները:

Չնայած առկա են ԳԱՑ-եր, և բուհը փորձում է հետևել ռազմավարական ծրագրի ժամանակացույցին, ոչ բոլոր գործողությունների հաշվետվությունները ցուցադրում են հստակ կապ ռազմավարական նպատակների հետ: Բացի այդ, ռազմավարական ծրագրում կիրառվող ցուցանիշները հիմնականում ընդհանրական են և չունեն չափելի բնույթ, ինչն ընկալելի պատկեր չի ձևավորում ծրագրի կատարման առաջընթացի և արդյունքների մասին: Բուհին առաջարկվում է վերանայել ԳԱՑ-երի կառուցվածքը՝ ապահովելով դրանց չափելիությունը և ռազմավարական նպատակների հետ ուղիղ կապը: Ինչն էլ կապահովի ռազմավարական նպատակների արդյունավետ և իրատեսական գնահատում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման արդյունքներից հետո բուհում նկատելիորեն զարգացել են ռազմավարական պլանավորման գործընթացները, ձևավորվել է առաքելությանը և նպատակներին համահունչ գործունեության մշակույթ, ներգրավվել են շահակիցներ և որոշ հաշվետվություններ կապվում են ռազմավարական ծրագրի նպատակների իրագործման հետ, ինչպես նաև առկա են պլանային խորհրդակցությունների մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հայկական բժշկական ինստիտուտի կառավարումն իրականացվում է ՀՀ սահմանադրության, բուհի կանոնադրության և ներքին իրավական ակտերի հիման վրա՝ միանձնյա և կոլեգիալ ղեկավարման սկզբունքով:

Համաձայն ինստիտուտի կանոնադրության ինստիտուտի կառավարման մարմիններն են. հիմնադիր խորհուրդը, ռեկտորը և գիտական խորհուրդը։

ՀԲԻ-ի կառավարման բարձրագույն մարմինն է հիմնադիր խորհուրդը, որն ունի ինստիտուտի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք։ Փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ հիմնադիր խորհուրդը նիստեր է հրավիրում շաբաթական մեկ անգամ, որտեղ քննարկվում են հաստատության ուսումնական, կազմակերպչական և ֆինանսական կարևոր հարցեր։ Նախորդ հավատարմագրումից հետո Ինստիտուտը 2022 թվականին լրամշակել է «Կառավարման մարմինների շրջանակներ» փաստաթուղթը, ըստ որի հստակեցվել են կառավարման մարմինների իրավունքները և պարտականությունները։ Ըստ փաստաթղթի հիմնադիր խորհրդի անդամները չորսն են, սակայն փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ այժմ այն բաղկացած է 9 անդամներից, որի մեջ ներառված չեն արտաքին շահակիցներ։ Հիմնադիրների խորհրդի չորս անդամները նաև ռոտացիոն սկզբունքով յուրաքանչյուր տարի զբաղեցնում են ռեկտորի պաշտոնը։

ՀԲԻ-ի կազմակերպական կառուցվածքի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առկա է հորիզոնական համագործակցություն բոլոր ստորաբաժանումների միջև։ Մասնավորապես Որակի ապահովման կենտրոնը համագործակցում է բոլոր ստորբաժանումների հետ տվյալների հավաքագրման և բարելավման գործընթացների ուղղությամբ։ Առկա է նաև ուղղահայաց ներքևից վերև համագործակցություն։ 2023 թվականին հաստատությունը կառուցվածքային փոփոխություն է կատարել՝ կրճատվել է ուսումնական աշխատքների և կլինկական ուղղվածության պրոռեկտորների հաստիքները, այժմ ուսումնական աշխատքների գծով պրոռեկտորի գործառույթի հիմնական մասը կատարում է ուսումնական մասը, իսկ կլինիկական ուղղվածությամբ աշխատանքները համակարգում է պրակտիկայի ղեկավարը, որը «Էրեբունի» ԲԿ-ի գլխավոր բժշկի խորհրդականն է։

Ինստիտուտի բոլոր ստորաբաժանումները ապահոված են աշխատանքի համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով (աշխատասենյակ, տեխնիկական միջոցներ)։

Ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀԲԻ-ի ֆինանսական միջոցներն ձևավորվում են վճարովի ուսուցման ծառայությունների մատուցումից, ուսանողների վարձավճարները կազմում են 98,31%-ը։ Հաստատության ֆինանսական ելքերի հոդվածներն են՝ աշխատավարձ (55,35%), ուսման վարձերի զեղչեր (1.17%), ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսեր (ընդհանուր 11%), կոմունալ ծախսեր (5%), առկա են նաև գործուղման և ներկայացուցչական ծախսեր։

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Ըստ բուհի կանոնադրության դասախոսներին ու ուսանողներին հնարավորություն է տրվում մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը։ Ըստ բուհի կանոնադրության գիտական խորհրդի 25%-ը ուսանողներ են, որոնց ընտրում է ուսանողական խորհուրդը, սակայն գիտական խորհրդի կազմի դիտարկման ժամանակ պարզվեց, որ ուսանողներն չորսն են ընդհանուր 31 անդամների ցուցակում, իսկ պրոֆեսորադասախոսական անձնակազմից գիտական խորհրդի անդամներ ընտրում է ֆակուլտետի խորհուրդը։ Ֆակուլտետի

խորհուրդները կազմված են ինը անդամներից, որի երկու անդամները ուսանողական համակազմից են։

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում տեղի է ունենում ոչ ֆորմալ կերպով՝ հիմնականում անմիջական շփումների, անհատական դիմումների և պարբերական հանդիպումների միջոցով։ Մասնավորապես, ուսանողները ներկայացրել են խնդրահարույց դասընթացի վերաբերյալ մտահոգություն, նշելով, որ դասավանդման մեթոդները բավարար արդյունավետություն չեն ապահովում։ Դիմելով դեկանատին՝ ուսանողները ստացել են արձագանք. կազմակերպվել է քննարկում դասախոսի հետ, որի արդյունքում վերջինս վերանայել է իր մեթոդական մոտեցումները։

Ուսանողների հետ պահվում է մշտական կապ, սակայն համակարգված մեխանիզմների բացակայությունը՝ օրինակ ուսանողական խորհրդի լիարժեք ներգրավումն կրթական գործընթացում դեռ տեսանելի չէ։ Դասախոսների կարիքները քննարկվում են ֆակուլտետի խորհուրդներում։

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՀԲԻ-ն 2022 թվականին մշակել և ընդունել է երկարաժամկետ 2022-2026 թթ. համար ռազմավարական ծրագիր, ապա այն իրականացնելու համար կազմվել է պլան-ժամանակացույց։ Ինստիտուտը մշակել է նաև ռազմավարական ծրագրի կատարման միջնաժամկետ պլան-ժամանակացույց, որը ենթադրում է հիմնականում 2022-2024թթ. համար նախատեսված գործողությունները։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀԲԻ-ի ֆակուլտետները, ամբիոնները և առանձին ստորաբաժանումները ևս ունեն իրենց կարճաժամկետ տարեկան աշխատանքային պլանները, որոնք հիմնականում կապված չեն ՌԾ նպատակներին։

Ինստիտուտում պլանավորված գործողությունների իրականացման և մշտադիտարկման նպատակով գործում է հաշվետվողականության մեխանիզմ։ Այնուամենայնիվ, հաստատությունում դեռևս մշակված չէ փաստաթղթերի ներկայացման և կատարողականի արձանագրման միասնական ձևաչափ։ Դասախոսները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքի ամփոփ նկարագիրը ամբիոնի նիստերի ընթացքում, ինչի հիման վրա ամբիոնի վարիչը պատրաստում է ամփոփ տեղեկատվություն՝ ներկայացնելու ֆակուլտետի խորհրդին։ Ամբիոնների կողմից ներկայացված տվյալները հիմք են դառնում դեկանների կողմից կազմվող ամփոփ փաստաթղթերի համար, որոնք փոխանցվում են ռեկտորին և ուսումնական վարչությանը։ Վերջիններս իրենց հերթին հաշվետու են ռեկտորին և Գիտական խորհրդին։ Կրթության որակի ապահովման կենտրոնը ևս պատասխանում է իր գործառույթների կատարման վերաբերյալ՝ ուղղակիորեն ռեկտորին։

Ռեկտորների 2022-2023թթ և 2023-2024թթ տարեկան հաշվետվությունները ընդհանուր առմամբ փոխկապակցված են ՌԾ պլան ժամանակացույցում տեղ գտած քայլերի և դրանց իրականացման վերջնարդյունքների հետ։ Ֆակուլտետների տարեկան հաշվետվությունները բովանդակայնորեն կրկնում են ուսումնական մասի տարեկան հաշվետվությունները և փոխկապակցումը ռազմավարական ծրագրի հետ նկատելի չ։

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Ըստ ինքնավերլուծության ՀԲԻ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոններից են՝ դիմորդների քանակը ուսումնական տարում, որը ազդում է ֆինանսական ներհոսքի վրա, քանի որ այն միակ ուղղությունն է, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի փոփոխությունները, երիտասարդ կադրերին խրախուսելու, նոր կադրեր ներգրավելու ուղղությամբ, նյութատեխնիկական բազայի վիճակը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհի գործունեության վրա ազդող գործոնները վեր են հանվում հիմնականում ներքին շահակիցների շրջանում հարցումների և ֆոկուս-խմբային քննարկումների միջոցով, որոնք տալիս են ներքին ազդակները: Սակայն առկա չեն համակարգված և պլանավորված արտաքին ազդակների ուսումնասիրություններ և տվյալների հավաքագրում: Արտաքին գործոններն ուսումնասիրվում են բուհում դասավանդող բժիշկ մասնագետների հետ քննարկումներով:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ՀԲԻ-ին որդեգրել է ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության գործընթացում: Մի շարք փաստաթղթեր վերանայվել են՝ հաշվի առնելով նախորդ հավատարմագրման արդյունքները և ԿՈԱ կենտրոնի կողմից իրականացված հարցումների արդյունքները: Մասնավորապես՝ ՀԲԻ-ի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, որն հաստատվել է 2015թ, 2022 թվականին լրամշակվել է, իսկ 2022-2023 ուստարում գործակելուց հետո այն նորից ենթարկվել է փոփոխության: Գնահատվել է նախորդ ռազմավարական ծրագիրը, որի հիման վրա մշակվել է 2022-2026 թթ ՌԾ-ն, վերանայվել է բուհի կազմակերպական կառուցվածքը: Փոփոխությունների են ենթարկվել ՀԲԻ կրթական ծրագրերը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռազմավարական պլանով նախատեսված գործընթացները հիմնականում գտնվում են բարելավման փուլում, բացի գրադարանի թարմացման, միջազգային համագործակցային ծրագրերում հաստատության ներգրավածության ավելացման ուղղություններից, որոնք դեռ պլանավորման փուլում են:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Ըստ ինքնավերլուծության մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման արտաքին շահակիցների, շրջանավարտների շրջանում, կատարվել է մասնագիտական կրթական ծրագրերի բենչմարքինգ, պրակտիկայի կազմակերպման արդյունավետության գնահատում:

2022-2023 ուստարում հաստատության ուսումնական մասի և ԿՈԱԿ-ի կողմից կատարվել է մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում, կազմվել է հաշվետվություն, ըստ որի խնդիր է դրվել ուսումնասիրել ուսանողների և շրջանավարտների կարծիքները ծրագրի որակի վերաբերյալ, ինչպես նաև գործատուների բավարարվածությունը

շրջանավարտներից, գնահատել ծրագրի կառուցվածքում կատարված փոփոխությունների ազդեցությունը ծրագրի որակի վրա, նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ: Սակայն պետք է նշել, որ ծրագրերի արդյունավետության գնահատման մեխանիզմները զարգացած չեն՝ բացակայում է շրջափուլից հետո ծրագրերի համապարփակ ինքնավերլուծությունը, որում համակարգված կլիներ գործատուների, շրջանավարտների և ուսանողների հետադարձ կապը, ծրագրերի բարելավման նպատակով:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հաստատությունը որպես տեղեկատվությունների հրապարակման հիմնական միջոց օգտագործում է պաշտոնական կայքէջը՝ *www.armedin.am*, Էրեբունի ամսաթերթը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ չնայած հաշվետվություններում առկա են որոշակի քանակական տվյալներ (օրինակ՝ ուսանողների ընդունելության և ավարտական արդյունքների վերաբերյալ), սակայն բացակայում է համակարգված, օբյեկտիվ և հանրամատչելի տեղեկատվության հրապարակումները, քանի որ հաշվետվությունները չեն տեղադրվում պաշտոնական կայքէջում, ինչպես նաև մասնագիտությունների և որակավորումների վերաբերյալ թարմացված և համապարփակ տեղեկությունները՝ օրինակ՝ շրջանավարտների զբաղվածության մակարդակ, աշխատաշուկայի արձագանքներ և այլ ցուցանիշներ, ներկայացված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո բուհում արձանագրվել են դրական տեղաշարժեր կառավարման համակարգում: Բուհն ունի գործող կառավարման մոդել, ձևավորվել են պլանային որոշումների կայացման մեխանիզմներ, իսկ ղեկավար կազմը ցուցաբերում է բաց վերաբերմունք ներքին շահակիցների կարծիքների նկատմամբ: Ուսանողներն, օրինակ, հնարավորություն ունեն անմիջական կապի միջոցով բարձրաձայնելու իրենց կրթական խնդիրները, որոնք որոշ դեպքերում հանգեցնում են բովանդակային փոփոխությունների:

Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը նկատում է, որ բուհում դեռևս չկան կառավարման այն մեխանիզմները, որոնք կխթանեն արտաքին շահակիցների՝ շրջանավարտների, գործատուների և ոլորտային ներկայացուցիչների համակարգված ներգրավումը կառավարման գործընթացներում: Չնայած հիմնադիր խորհուրդը, որի կազմում ռոտացիոն սկզբունքով ընդգրկվում են բուհի ղեկավարները, ապահովում է որոշումների շարունակականություն և ներքին կայունություն, արտաքին հայացքի ներգրավման բացակայությունը սահմանափակում է ռազմավարական նպատակների բազմակողմ գնահատման հնարավորությունները: Այս համատեքստում, լիազորված կառավարման խորհրդի ձևավորումը՝ արտաքին շահակիցների ներգրավմամբ, կարող է ոչ միայն նպաստել թափանցիկ և հավասարակշռված որոշումների կայացմանը, այլև դառնալ ռեսուրսների ներգրավման նոր հարթակ: Արտաքին շահակիցների մասնակցությունն ի պաշտոնե կարող է բացել գործընկերային համագործակցությունների, ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների (օր.՝ նվիրատվություններ, հիմնադրամներ, նպատակային ծրագրեր) և զարգացման հնարավորությունների նոր հեռանկարներ՝ աջակցելով բուհի ֆինանսական դիվերսիֆիկացիային:

Բուհը տեսանելիորեն ունի առաքելությունը ընդլայնելու ներուժ, հատկապես գիտահետազոտական բաղադրիչի ամրապնդման և միջազգայնացման ուղղություններով: Սակայն ռազմավարական զարգացման համար անհրաժեշտ են կայուն ֆինանսական հիմքեր: Ֆինանսական միջոցների շուրջ 98%-ը ձևավորվում է ուսանողական վճարներից, ինչը խիստ կախվածություն է առաջացնում սահմանափակ եկամուտներից և մեծացնում է ռիսկերը արտաքին միջավայրի փոփոխությունների դեպքում: Բուհը ներկայումս կիրառում է կարճաժամկետ ֆինանսական պլանավորում, որը հնարավորություն է տալիս օպերատիվ վերահսկման, սակայն սահմանափակում է ռազմավարական ներդրումային քաղաքականությունը:

Բուհը դեռևս չունի ֆինանսավորման այլընտրանքային ուղիների դիվերսիֆիկացման ռազմավարություն, որը կարող է խոչընդոտել երկարաժամկետ ռազմավարական պլանավորման իրագործելիությունը:

Ի հավելումն, ռազմավարական նպատակների գնահատման համակարգը ներկայումս հիմնված է ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների վրա, սակայն ռեկտորների պարբերական փոփոխությունները հանգեցրել են այդ հաշվետվությունների ձևաչափի և կառուցվածքի տարբերության: Սա կարող է խոչընդոտել ռազմավարական արդյունքների վերլուծության համաչափությանն ու տվյալների համադրելիությանը: Հետևաբար, անհրաժեշտ է սահմանել հաշվետվությունների միասնական ձևաչափ, որը թույլ կտա իրականացնել ռազմավարական ծրագրի երկու տարին մեկ վերլուծություն՝ հիմնված համադրելի տվյալների վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում առկա չէ ռազմավարական մակարդակի բազմակողմ վերահսկողություն իրականացնող կառավարման մարմին, որը կներառեր արտաքին շահակիցներ (շրջանավարտներ, գործատուներ, ոլորտային մասնագետներ), իսկ այդ գործառույթները ներկայումս ամբողջությամբ իրականացվում են միայն ներքին ներկայացուցիչներից բաղկացած հիմնադիր խորհրդի կողմից, ֆինանսական պլանավորումը կրում է կարճաժամկետ բնույթ, և բուհը չունի ֆինանսավորման դիվերսիֆիկացման ռազմավարություն՝ առկա է ուսման վարձավճարներից բարձր կախվածություն, արտաքին գործոնների ուսումնասիրությունները համակարգված չեն իրականացվում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական

չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Հայկական բժշկական ինստիտուտում առկա ուսուցման ձևով իրականացվում են անընդհատ և ինտեգրված «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրերը: Շնորհվող որակավորումները համապատասխանում են ՀՀ որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակին: Շրջանավարտներին շնորհվում են բժշկի և բժիշկ-ստոմատոլոգի որակավորումներ:

Հաշվի առնելով նախորդ հավատագրման խորհրդատվությունները, հաստատությունն իր ռազմավարական ծրագրի խնդիր 1.1-ում ամրագրել է իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային բարեփոխումներ՝ ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխան:

Վերանայվել են երկու ՄԿԾ-ների մասնագրերը, բոլոր առարկայական նկարագրերը, հստակեցվել են ՄԿԾ-ներում նշված վերջնարդյունքները: Դրանց հիման վրա կազմվել է ուսումնական պլանի նոր քարտեզ, որն արտահայտում է ՄԿԾ վերջնարդյունքների և դասավանդվող առարկաների միջև կապը:

2024թ. օգոստոսին գիտական խորհրդում հաստատվել են «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրերի փաթեթները, որոնցում համապարփակ ներկայացված են այդ մասնագիտությունների մասնագրերն իրենց վերջնարդյունքներով, ծրագրերի նպատակը և խնդիրները, հմտությունները և կարողությունները, ուսուցման և դասավանդման մոտեցումները, գնահատման մեթոդները, ուսումնական պլանները, առարկայական նկարագրերը:

ՀԲԻ ՄԿԾ մասնագրերում ներկայացված են նաև մասնագիտական գործունեության ոլորտները և հնարավորությունները:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերանայվել են մի շարք դասընթացների ժամաքանակները, օրինակ՝ ավելացվել է «Ընտանեկան բժշկություն» դասընթացի ժամաքանակը: Պահանջարկից ելնելով՝ վերականգնվել է որոշ առարկաների դասավանդումը, մասնավորապես՝ «Վիրուսաբանություն» դասընթացը: «Մարդու անատոմիա» առարկայի դասավանդումը տեղափոխվել է առաջին կուրսից երկրորդ կուրս: Դրա փոխարեն առաջին կուրսի ուսանողների համար մշակվել և հաստատվել է նոր՝ «Մասնագիտության ներածություն» դասընթացը, որի նպատակն է նախապատրաստել ուսանողներին երկրորդ կուրսում «Մարդու անատոմիա» առարկայի առավել արդյունավետ ընկալմանը:

Առարկայական նկարագրերում ներկայացված է դասընթացի նպատակը, ակնկալվող վերջնարդյունքները, միջառարկայական կապերը, դասավանդման և ուսումնառության ձևերն ու մեթոդները, գնահատման մեթոդներն ու ստուգման ձևերը, դասընթացի բաժինները, գրականության ցանկը:

Մշակվել և ներդրվել է դասի պլանի միասնական ձևաչափ: Այն ներառում է դասի նպատակը, խնդիրները, դասի անցկացման մեթոդները, ակնկալվող վերջնարդյունքները: Կամընտրական առարկաներ կրթական ծրագրերում առկա չեն:

Հաշվի առնելով, որ ՀԲԻ-ի կրթական ծրագրերը կառուցված են որպես ինտեգրված, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեմատիկ ինտեգրումը առարկաների միջև դեռևս ամբողջական չէ: Սակայն փորձագիտական հանդիպումներն ու քննարկումները վկայում են, որ բուհը ձեռնարկել է կոնկրետ քայլեր՝ այդ ուղղությամբ զարգացում ապահովելու համար:

Մասնավորապես, կրթական ծրագրերում ինտեգրման բաղադրիչը բուհը փորձում է ապահովել տարբեր առարկաների համատեղ դասերի կազմակերպմամաբ և հանձնարարվող առաջադրանքների միջոցով: Բացի այդ, կլինիկական հմտությունների վաղ զարգացման նպատակով ուսանողներն արդեն երկրորդ կուրսից անցնում են «Քույրական գործ» դասընթացը, որի շրջանակում ծանոթանում են կլինիկայի տարբեր բաժանմունքների կառուցվածքին, ուսումնասիրում հիվանդի խնամքի առանձնահատկությունները՝ ստեղծելով տեսական և գործնական բաղադրիչների կապ:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

2024թ. հաստատված «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրերի համար բուհը մշակել է առարկայական նկարագրերի միասնական ձևաչափ, որտեղ ներառված են նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դասախոսները կիրառում են գիտելիքների փոխանցման և հմտությունների ձևավորման տարբեր մեթոդներ, ինչպիսիք են՝ դասախոսությունները, սեմինարներն ու գործնական պարապմունքները, առաջադրանքների և ինքնուրույն հետազոտական աշխատանքների ձևակերպումը: Մեթոդների ընտրությունն իրականացվում է հիմնականում դասավանդող մասնագետի կողմից՝ ըստ առարկայի առանձնահատկությունների: Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ նույն դասընթացը տարբեր խմբերում դասավանդող դասախոսներ երբեմն կիրառում են տարբեր մեթոդներ:

Կլինիկական մտածողության զարգացման նպատակով տարբեր առարկաների շրջանակում իրականացվում են իրավիճակային խնդիրների քննարկումներ: Ուսանողական ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով կազմակերպվում են նաև բաց դասեր, որոնց ընթացքում ուսանողները ներկայացնում են նախապես ընտրված թեմաներ և պատասխանում են լսարանի հարցերին: Որոշ դասընթացների պարագայում կիրառվում է CBL (Case-Based Learning) մեթոդաբանությունը՝ դեպքերի քննարկման միջոցով նպաստելով կլինիկական մտածողության ձևավորմանը:

Հազվադեպ հանդիպող պաթոլոգիաների դեպքում, երբ ուսանողները հնարավորություն չեն ունենում անմիջականորեն դիտարկել բժշկական միջամտությունները, դասախոսները կիրառում են տեսանյութերի ցուցադրման, բացատրության և վերլուծության մեթոդներ: Օրինակ՝ «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» դասընթացում կիրառվում են նման միջոցառումներ:

2022թ . ՀԲԻ-ն սահմանել է ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմեր գործնական պարապմունքների համար . 1-3-րդ կուրսերի ուսումնական խմբերում ընդգրկվում են 12-14 ուսանող, իսկ կլինիկական առարկաների պարագայում՝ 3-5 ուսանող:

«Բուժական գործ» կրթական ծրագրի ուսանողներն ներգրավվում են տարբեր բժշկական միջամտությունների՝ վիրակապում, բնական ծննդաբերություն, կեսարյան հատում, արհեստական վիժումներ, դիահերձում, դիալիզ, վիրահատություններ: Կլինիկական առարկաների ուսուցումը մեծ մասամբ կազմակերպվում է «Էրեբունի» բժշկական կենտրոնում:

Ուսանողները շփվում են հիվանդների հետ, հավաքում են անամնեզ, կատարում են զննում, ձևակերպում նախնական ախտորոշում՝ զարգացնելով գործնական հմտությունները:

«Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի շրջանակում ուսանողները աշխատում են մուլյաժների վրա, կատարում տեղային անզգայացում, ընտրում և հիմնավորում են պրոթեզավորման տարբերակներ, զարգացնում պլոմբման հմտություններ՝ հեռացված ատամների վրա աշխատելով: Դասընթացների որոշ փուլերում ուսանողներին հնարավորություն է տրվում աշխատել նաև իրական բուժառուների հետ:

Այցի ընթացքում իրականացված դիտարկումները վկայում են, որ դասախոսներն օգտագործում են բացատրության, տեսացուցադրման, ատլասի վրա ցուցադրման, հարց ու պատասխանի, անհատական խորը հարցման, իրավիճակային վերլուծության և քննարկման մեթոդներ: Դասավանդման գործընթացում նկատվում է նախագիտելիքների վրա հիմնվելու և միջառարկայական կապերի ձևավորման միտում:

Ինքնավերլուծության համաձայն՝ ինտեգրված ուսուցման ապահովման նպատակով բուհում ներդրվել են համատեղ դասեր: Այդ դասերը արդեն իրականացվել են հետևյալ առարկաների շրջանակում՝ «Մասնագիտության ներածություն» և «Մարդու նորմալ անատոմիա», «Ախտաբանական ֆիզիոլոգիա» և «Ֆարմակոլոգիա», «Մանրէաբանություն» և «Ֆարմակոլոգիա», «Համաճարակաբանություն» և «Մանրէաբանություն», «Անատոմիա» և «Ֆիզիկա», «Ռուսաց լեզու» և «Մշակութաբանություն»:

Ուսուցման և դասավանդման արդյունավետ մեթոդների տարածումն ապահովելու նպատակով ՀԲԻ-ն պարբերաբար կազմակերպում է դասախոսների վերապատրաստումներ, այդ թվում՝ «Արհեստական բանականությունը որպես օժանդակ գործիք» և «Խնդիրների վրա հիմնված ուսուցման առանձնահատկությունները» թեմաներով:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Բուհում գործում է 2025 թվականին նոր խմբագրված «ՀԲԻ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգը, ըստ որի ուսանողների գնահատման համակարգը ենթադրում է բազմագործոնային գնահատում: Ուսանողների գիտելիքների գնահատումը ներառում է հետևյալ բաղադրիչները. դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում, դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում, ամբողջ դասընթացի (մոդուլի) եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ստուգման արդյունքների ինտեգրում: Բուհի կողմից սահմանված է 100 միավորանոց գնահատման համակարգ, որից հաճախումներին տրվում է 25 բալ, սեմինարներին (հարցումների և թեստերի հանձնում)՝ առավելագույնը 25 բալ, ինքնուրույն աշխատանքի համար՝ առավելագույնը 20 բալ, քննությունների հանձնման համար՝ առավելագույնը 30 բալ: Իսկ քննությունը գնահատվում է 10 թվային սանդղակով, որտեղ 10 թվանշանը համապատասխանում է 30 բալին:

Դասընթացների գնահատումն իրականացվում է երկու ձևով՝ եզրափակիչ գնահատումով և առանց եզրափակիչ գնահատման (ստուգարքային) դասընթացներ: Կիսամյակի ընթացիկ ստուգումների, լաբորատոր, գործնական աշխատանքների կատարման և հանձնման, սեմինարների և նման այլ հանձնարարությունների գնահատումը կատարվում է թվանշանային միավորով (1-10):

Եզրափակիչ քննություններն անցկացվում են բանավոր։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ կլինիկական որոշ դասընթացների քննական տոմսերում ներառված են իրավիճակային խնդիրներ, մասնավորապես՝ «Ռևմատոլոգիայից» և «Էնդոկրինոլոգիայից»։ Նման մոտեցում ոչ բոլոր առարկաների շրջանակում է կիրառվում։

Այցի ընթացքում պարզվեց, որ մինչև 30% բացակայության դեպքում ուսանողին տրվում է հնարավորություն՝ լրացնելու դասընթացի ընթացքում բացակայած թեմաները՝ դասավանդողի սահմանած պայմանների համաձայն։ Օրինակ՝ թեմայի լրացումը կատարվում է հավելյալ պարապմունքների միջոցով, դրանք կազմակերպվում են դասերից հետո, իսկ ցիկլային առարկաների դեպքում՝ երեկոյան ժամերին։ Կիրառվում է նաև ռեֆերատի, պրեզենտացիայի ներկայացման տարբերակը։ 30%-ից ավելի բացակայության դեպքում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ստուգարքին կամ քննությանը և «ՀԲԻ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգի 8-րդ կետի համաձայն, մեծաքանակ բացակայությունները հեռացման հիմք են հանդիսանում։ Ուսանողները չեն կարող նաև քննական պարտքերով հաջորդ կուրս փոխադրվել. նրանք իրավունք ունեն մասնակցելու քննությանը կամ ստուգարքին մեկ անգամ և լուծարքային շրջանում երկու անգամ։ Այս տրված հնարավորություններին չմասնակցելու պարագայում ուսանողը թողնվում է նույն կուրսում։

Կլինիկական հմտությունների ձևավորման համար կրթական ծրագրերում ներառված է նաև պրակտիկա։ Մասնագիտական պրակտիկաները նախատեսված են 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կուրսերում։ «Բուժական գործ» կրթական ծրագրի պրակտիկայի համար ընդհանուր առմամբ հատկացված է 10,5 կրեդիտ։ Ուսանողները պրակտիկան հաջորդաբար անցնում են քույրական գործ, շտապ օգնություն, մասնագիտական (ներքին հիվանդություններ, վիրաբուժական հիվանդություններ, մանկաբարձություն), գինեկոլոգիա ուղղություններով։

«Ստոմատոլոգիական գործ» կրթական ծրագրի պրակտիկայի համար ընդհանուր առմամբ հատկացված է 9 կրեդիտ։ Ուսանողները պրակտիկան հաջորդաբար անցնում են քույրական գործ, շտապ օգնություն, մասնագիտական (թերապևտիկ և մանկական հասակի ստոմատոլոգիա, վիրաբուժական ստոմատոլոգիա, օրթոպեդիկ ստոմատոլոգիա) ուղղություններով։ Արդյունավետության գնահատման համար կիրառվում են արտադրական պրակտիկայի օրագիրը, գործնական ունակությունների ատեստավորման գրքույկը, արտադրական պրակտիկայի մատյանը։ Պրակտիկայի մատյանը վարում է պրակտիկայի ղեկավարը՝ նշումներ կատարելով ուսանողների հաճախումների վերաբերյալ։ Պրակտիկայի ընթացքում ուսանողը վարում է պրակտիկայի օրագիր, որտեղ հակիրճ արձանագրվում է կատարված աշխատանքը (ախտորոշումները, ցուցաբերված միջամտությունները)։ Ատեստավորման գրքույկն օգնում է ուսանողին ունենալ իր ձեռքի տակ տվյալ պրակտիկայի թեմատիկ պլանը, որտեղ արվում են համապատասխան նշումներ՝ ըստ աշխատանքների կատարման (կատարվել է/չի կատարվել)։ ՀԲԻ-ում պրակտիկաներն ավարտվում են ստուգարքով, ըստ կարգի ստուգարքը ստանում է պրակտիկա անցած, օրագրում լրացումներ ունեցող, պրակտիկայի հաշվետվությունը ներկայացրած և հաշվետվությունը հաջող պաշտպանած ուսանողը։

Հաստատությունում կատարվել է «Պետական ավարտական ատեստավորման քննությունների կարգի» լրամշակում, սակայն բուհը նախատեսում է այդ փաստաթղթի հետագա լրամշակումը, քանի որ ՀԲԻ-ն նախատեսում է հնարավորիս արագ գործարկել սիմուլյացիոն կենտրոնները երկու ՄԿԾ-ների համար և քննություններ անցկացնել նաև

գործնական հմտությունների գնահատման համար (Կառուցվածքային օբյեկտիվ կլինիկական քննություն՝ OSCE): «Բուժական գործ» անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով «Բժիշկ» որակավորման ավարտական քննությունները անցկացվում են «Ներքին հիվանդություններ», «Մանկաբարձություն և գինեկոլոգիա», «Վիրաբուժական հիվանդություններ» առարկաներից, իսկ «Ստոմատոլոգիա» անընդհատ և ինտեգրված ծրագրով «Բժիշկ-ստոմատոլոգ» որակավորման ավարտական քննությունները՝ «Թերապևտիկ և մանկական ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա» առարկաներից: Ըստ ինքնավերլուծության պետական ավարտական ատեստավորման քննությունների հարցաշարերը կազմում են մասնագիտական ամբիոնները, հաստատում է ՀԲԻ-ի ֆակուլտետների խորհուրդը: Փորձագիտական վերլուծության արդյունքում պարզվեց, որ ավարտական ատեստավորման քննություններն անցկացվում են տոմսերով, որոնք ներառում են տեսական հարցեր և իրավիճակային խնդիրներ: Պետական ավարտական ատեստավորման քննությունների արդյունքները գնահատվում են 10 բալանի գնահատման սանդղակով:

Հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ բուհը նախատեսում է ավարտական քննությունները կազմակերպել եռափուլ ձևաչափով՝ թեստային, բանավոր և գործնական հմտությունների գնահատում: Նախորդ ուսումնական տարում փորձնական փուլով իրականացվել են նախնական գնահատման գործընթացներ, որոնց արդյունքում քննությանը մասնակցած ուսանողների մոտ 40–45%-ն հաղթահարել են շեմը: Ներկայումս ուսումնական բաժինը զբաղված է տարբեր առարկաների թեստերի մշակմամբ՝ նպատակ ունենալով համակարգված ձևով ներդնել թեստային ձևաչափով ավարտական քննություններ:

Հաստատությունում գործում են «Ուսանողների բողոքների դիտարկման կարգը», «ՀԲԻ-ի ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման կարգը», «Ակադեմիական ազնվության երաշխավորման և գրագողության կանխարգելման կարգը», որը սահմանում է գիտահետազոտական աշխատանքների, քննաշրջանի, միջանկյալ ատեստավորման և ամփոփիչ ատեստավորման (պետական քննություն և այլն) ընթացքում ակադեմիական ազնվության խախտումների բացահայտման պարագայում կիրառվող միջոցները:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

2023թ. ՀԲԻ-ն իրականացրել է «Բուժական գործ» մասնագիտական կրթական ծրագրի համեմատական վերլուծություն «ՀԲԻ-ի գործունեության արդյունավետության համեմատական վերլուծության (բենչմարքինգի) սկզբունքների, նպատակների, խնդիրների, քաղաքականության, ընթացակարգի և սխեմատիկ կառուցվածքի կարգի» համաձայն: Այս գործընթացի համար ըստ կարգի կազմվել է աշխատանքային խումբ, նշանակվել են պատասխանատուներ, ժամկետներ: Ուսումնասիրվել և համեմատվել է ՀԲԻ-ի «Բուժական գործ» մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքները տարբեր երկրների առաջատար բուհերի նմանատիպ ծրագրերի վերջնարդյունքների հետ, ուսումնասիրվել է ՀԲԻ-ի պետական ավարտական ատեստավորման գործընթացը տարբեր երկրների առաջատար բուհերի նմանատիպ ծրագրերի ավարտական քննական գործընթացների հետ, ներկայացվել առաջարկություններ հաջողած փորձերը ՀԲԻ-ում ներդնելու վերաբերյալ:

Համեմատական վերլուծության է ենթարկվել ՀԲԻ պետական ավարտական ատեստավորման քննությունների անցկացման կարգը: Ըստ ներկայացված փաստաթղթի ուսումնասիրության՝ կատարվել է ավարտական քննությունների համեմատական վերլուծություն ռուսաստանյան և եվրոպական բժշկական համալսարանների օրինակներով, մանրամասն ներկայացված են և տեսական հարցերի, և իրավիճակային խնդիրների, ինչպես նաև ավարտական քննությունների փուլային առանձնահատկությունները: Փաստաթղթի վերջում բերված է աշխատանքային խմբի համապատասխան առաջարկությունները, մասնավորապես՝ պետական ավարտական քննություններում հնարավոր փոփոխություններ ներմուծելու հարցը . բուժական գործ ՄԿԾ-ում թեստային քննության անցկացում, ստոմատոլոգիական ֆակուլտետում բանավոր նախապետական քննությանը թեստային հանձնարարությունների ավելացում, ինչպես նաև երկու ֆակուլտետների պրակտիկաները Կառուցվածքային օբյեկտիվ կլինիկական քննությունով (OSCE) ավարտելու հնարավորություն:

Ըստ ինքնավերլուծության ՀԲԻ-ի կրթական ծրագրերը՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա», հնարավորություն են ընձեռում ուսումը շարունակել ՀՀ բժշկական ուսումնական հաստատություններում՝ անհրաժեշտության դեպքում տվյալ ուսումնական հաստուտությունում հանձնելով առարկայական տարբերությունները: Սակայն ինչպես նշում է բուհը, հաստատությունը հիմնականում առաջնորդվում է Ռուսաստանի դաշնությունում կիրառվող բժշկական բուհերի, ինչպես նաև Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ծրագրերով, ուսումնական պլաններով և ավարտական քննությունների անցկացման ձևաչափով:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՀԲԻ-ում մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման համար գործում են «ՀԲԻ-ի մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման» ընթացակարգը, «Հայկական բժշկական ինստիտուտի կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման» կարգը: Վերջինիս համաձայն, կրթական ծրագրի մոնիթորինգի գործընթացը նախաձեռնում և իրականացնում է ֆակուլտետը՝ երկամյա պարբերականությամբ, մոնիթորինգի անցկացման ժամանակացույցին համապատասխան:

Հաստատությունում կրթական ծրագրերի մշտադիտարկման հիմնական մեխանիզմներն են դասալսումները, ուսանողների և դասախոսների հետ իրականացվող քննարկումները, նրանց շրջանում կազմակերպվող հարցումները: Այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսական կազմի կողմից ներկայացված առաջարկությունները նախ քննարկվում են ամբիոնի նիստում, այնուհետև ներկայացվում գիտական խորհրդի քննարկմանը: Ֆակուլտետային խորհրդում ներգրավված ուսանողներն էլ իրենց առաջարկություններն են ներկայացնում դեկանին, որոնք փոխանցվում են ուսումնական մասին և հետագա քննարկման դրվում գիտական խորհրդում:

Փորձագիտական այցի ընթացքում ներկայացվեց, որ պետական ավարտական քննության ընթացքում ի հայտ եկած խնդիրները և թերությունները հիմք են հանդիսանում կրթական ծրագրում համապատասխան փոփոխություններ իրականացնելու համար: Քննությունից հետո հանձնաժողովի նախագահը ներկայացնում է առաջարկություններ՝

ուղղված կրթական ծրագրի շարունակական բարելավմանը: Սակայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ որակի հետագա բարելավմանն ուղղված առաջարկությունների շրջանակում ընդգրկված են միայն հանձնաժողովի կազմում տարբեր նեղ մասնագիտացմամբ մասնագետների (ռևմատոլոգ, ինֆեկցիոնիստ, հեմատոլոգ, նեֆրոլոգ) ներգրավման առաջարկներ: Ընդ որում, երեք իրար հաջորդող տարիների ընթացքում հեմատոլոգի ներգրավման վերաբերյալ առաջարկություն է արվել:

Փորձագիտական հանդիպումների և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ վերջին տարիներին մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման գործընթացում իրականացվել են մի շարք փոփոխություններ՝ հիմնված կատարված ուսումնասիրությունների, ոլորտային միտումների և շահակիցների կարծիքների վրա: Մասնավորապես՝ «Ընտանեկան բժշկություն» դասընթացի կարևորությունը հաշվի առնելով՝ ավելացվել է դրա ժամաքանակը: Ստոմատոլոգիական ֆակուլտետում, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, ներդրվել է «Ստոմատոլոգիական նյութագիտություն» առարկան: COVID-19 համավարակից հետո վերականգնվել է «Վիրուսաբանություն» դասընթացը: Ուսանողների առաջարկով և ժամաքանակի նախորդ կրճատումից հետո վերականգնվել են «Գինեկոլոգիա» առարկայի ժամերը: Բացի այդ, ավարտական քննությունների արդյունքների և ուսանողների ակնկալիքների հիման վրա «Ռևմատոլոգիա» դասընթացից ավելացվել է մեկ շաբաթյա լրացուցիչ ցիկլ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո հաստատությունը ձեռնարկել է կառուցվածքային և բովանդակային խորքային բարեփոխումներ մասնագիտական կրթական ծրագրերում: Այս բարեփոխումներն արտահայտվում են վերջնարդյունքների հստակեցմամբ, առարկայական նկարագրերի վերանայումով, ուսումնական պլանի արդիականացմամբ և ուսուցման ինտեգրված ձևերի ներդրմամբ:

Կլինիկական մտածողության զարգացմանն ուղղված առաջադրանքների ձևակերպումը պրակտիկ բժիշկների կողմից, ինչպես նաև այն փաստը, որ ուսումնական գործընթացը կազմակերպվում է անմիջապես հիվանդանոցային միջավայրում՝ ստեղծելով տեսական գիտելիքի և գործնական փորձի միահյուսված կապ, դիտարկվում են որպես ուսուցման որակի բարձրացման էական գործոններ: Սա հնարավորություն է տալիս ուսանողներին ուսումնասիրել իրական դեպքեր, կիրառել ուսուցման ընթացքում ձեռք բերած գիտելիքները և զարգացնել մասնագիտական ունակությունները:

Դրական է նաև այն, որ հաստատությունն աստիճանաբար ընդլայնում է ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքների կիրարկումը՝ ներառելով ակտիվ մեթոդներ՝ CBL, բաց դասեր, դեպքերի վերլուծություն: Ուսումնական բեռնվածության ճշգրտումը և ուսումնական խմբերի սահմանափակ քանակով ձևավորումը նպաստում են ուսուցման անհատականացված կազմակերպմանը:

Գնահատման համակարգի վերանայումը, բազմաշերտ գնահատման ներդրումը և նոր ձևաչափերի կիրառման փորձարկումը դրական միտում է: Սակայն անհրաժեշտ է գործնական հմտությունների գնահատմանն ուղղված համակարգային մոտեցում՝ ապահովելու համար գնահատման համահունչությունը ուսումնական նպատակներին: OSCE քննության ներդրման ուղղությամբ իրականացվող քայլերը դիտվում են որպես ռազմավարական առաջընթաց,

սակայն այն պետք է դառնա համատարած կիրառվող և ամբողջական բաղադրիչ՝ ինչպես միջանկյալ, այնպես էլ ամփոփիչ գնահատման փուլերում:

Բուհը ակտիվացրել է նաև կրթական ծրագրերի վերանայման գործընթացները՝ հիմնվելով ոլորտային միտումների, շահակիցների կարծիքների և շահառու կողմերի կարիքների վրա: Այս մոտեցումը կարևոր հիմք է ծրագրերի շարունակական բարելավման և ժամանակակից պահանջներին արձագանքելու համար: Միաժամանակ, կարևոր է ապահովել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների առաջարկությունների վերլուծությունը՝ այդ տեղեկատվության հիման վրա ձևավորելով հիմնավոր որոշումներ կրթական ծրագրերի շարունակական բարելավման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ՀԲԻ-ն ձեռնարկել է մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային բարեփոխումներ՝ համահունչ ազգային և ոլորտային չափանիշներին, իրականացրել է դասընթացների վերանայումներ, ներդրել ուսուցման ինտեգրված տարրեր, ինչպես նաև ներդրել են ուսուցման հիվանդանոցային պայմաններում կազմակերպման մեխանիզմներ՝ ապահովելով ուսանողների իրական գործնական փորձառություն, գնահատման գործընթացում փորձ է արվել ներդնել OSCE քննություններ, ինչպես նաև կլինիկական մտածողության ձևավորմանն ուղղված առաջադրանքներ ձևակերպվում են պրակտիկ մասնագետների կողմից, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ին բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՀԲԻ-ի Ռազմավարական ծրագրի 4-րդ կետը նպատակ ունի զարգացնելու ապագա դիմորդների նախաբուհական աջակցման համակարգը: ՀԲԻ-ի կրթական ծրագրերի ընդունելությունը իրականացվում է համաձայն ՀՀ պետական և ոչ պետական բուհերի ընդունելության կարգի 26 . 04 . 2012 N 597-Ն որոշման: Յուրաքանչյուր տարվա կտրվածքով ինստիտուտը իրավունք ունի ընդունել բուժական ֆակուլտետ և ստոմատոլոգիական ֆակուլտետ համապատասխանաբար՝ 70 և 90 ուսանող: 2023-2024թթ դրությամբ ՀԲԻ-ում սովորում է 782 ուսանող: Ինստիտուտում կարող են նաև ուսումնառել ՀՀ քաղաքացի չհանդիսացող ազգությամբ հայ երիտասարդներ, ովքեր նախապես դիմում են ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչություն՝ ահրաժեշտ թույլատվություն ստանալու համար: Դասապրոցեսը իրականացվում է հայերեն լեզվով: Ըստ ներկայացված տվյալների՝ 50 սփյուռքահայ ուսանող ընդունվել է 2024-2025թթ ընթացքում: ՀԲԻ-ում իրականացվում է նաև ընդունելություն անմիջապես երկրորդ կուրս, որի

հնարավորություն տրվում է այն ուսանողներին, ովքեր բժշկական ուղղվածության քոլեջներ ավարտելուց հետո ցուցաբերել են բարձր առաջադիմություն։

Ինստիտուտում գործում է 2022-2023 ուսումնական տարվանից Հայկական բժշկական ինստիտուտի կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի նոր խմբագրությունը և ըստ 8-րդ կետի՝ կիսամյակում ուսանողի դասընթացներից 30% բացակայությունը հիմքեր է ստեղծում ուսանողին տվյալ կուրսից հեռացնելու համար, քննական պարտքերով ուսանողները չեն կարող հաջորդ կուրս փոխադրվել։ Այս որոշման հետ կապված՝ 2023-2024թթ. երկու ֆակուլտետից հեռացվել են 35 ուսանող։

Ինստիտուտում ուսանում են ինչպես միասնական քննություններով ընդունված, այնպես էլ՝ քոլեջներում բարձր առաջադիմությամբ ավարտած ուսանողները։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԲԻ ընտրության հիմնական շարժառիթներն են պրակտիկ կրթության հնարավորությունը և վարձավճարների համեմատաբար մատչելիությունը։

ՀԲԻ-ն ունի ուսանողական ուղեցույց։ ՈՒսանողական ուղեցույցում ներկայացված է ընդհանուր տեղեկատվություն ՀԲԻ-ի և ինստիտուտի գործունեության մասին։ ՈՒղեցույցում ներկայացված է դասընթացների, գիտելիքի ամփոփման, գիտելիքի գնահատման, կրեդիտային համակարգի, ՈՒԽ-ի, ուսանողի իրավունքների պաշտպանության, գիտահետազոտական աշխատանքների, ուսանողական նպաստների և այլնի մասին բովանդակալից տեղեկատվություն։

Ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման նպատակով Հայկական բժշկական ինստիտուտը համակարգված ձևով իրականացնում է համագործակցություն հանրակրթական դպրոցների հետ։ Այս շրջանակում ինստիտուտի ուսանողները և դասախոսները պարբերաբար կազմակերպում են այցելություններ դպրոցներ՝ ներկայացնելու ՀԲԻ-ի կրթական առաջարկները, ինչպես նաև իրականացնելու առողջապահական իրազեկման միջոցառումներ։ Ուսանողական կառույցների նախաձեռնությամբ անցկացվում են թեմատիկ զեկուցումներ՝ ուղղված աշակերտների հոգեբանական և ֆիզիկական առողջության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը։ Բացի այդ, ինստիտուտը հյուրընկալում է դպրոցական խմբեր՝ ապահովելով շրջայցեր և այցեր մասնագիտական ենթակառուցվածքներ, ինչպիսին է, օրինակ, անատոմիայի թանգարանը։

Հարկ է նշել, որ այս միջոցառումների արդյունավետության գնահատում չի կատարվել՝ հասկանալու, թե որքանով են դրանք նպաստում դիմորդների թվի աճին։

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հայկական բժշկական ինստիտուտում ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացը կազմակերպվում է ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ մեխանիզմների միջոցով։ Ինստիտուտի ներքին կանոնակարգերով սահմանված է ուսանողների մասնակցությունը որոշում կայացնող մարմիններին և տարբեր խորհուրդներին, ինչի միջոցով ապահովվում է կապը ուսանողների և ղեկավար կազմի միջև։

Կրթական կարիքների վերհանման հիմնական գործիքը հարցումների մեթոդն է։ Որակի ապահովման կենտրոնի նախաձեռնությամբ պարբերաբար իրականացվում են ուսանողական հարցումներ՝ ուղղված ուսուցման որակի, կրթական ռեսուրսների և ծրագրային բարելավումների գնահատմանը։ Բացի այդ, ՀԲԻ-ում գործում է «անանուն արկղի» մեխանիզմ,

որի միջոցով ուսանողները կարող են անանուն ձևով ներկայացնել իրենց առաջարկները, խնդիրներն ու դիտարկումները:

Հենց այս ուղիներով է, որ, օրինակ, վերհանվել է սիմուլյացիոն կենտրոնի անհրաժեշտությունը: Այս կարիքը ուսանողները բարձրաձայնել են ինչպես հարցումներում, այնպես էլ վարչական հանդիպումների ընթացքում: Արդյունքում, բուհում սկսվել են աշխատանքներ՝ սիմուլյացիոն զույգի ձեռքբերման և կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

Ուսանողական խորհուրդը (ՈՒԽ) նույնպես մասնակցում է կարիքների վերհանման գործընթացին՝ հանդիսանալով կապող օղակ ուսանողների և ինստիտուտի վարչական կառույցների միջև: ՈՒԽ-ն իր ակտիվ մասնակցությունն ունի նաև տարբեր բարելավումների առաջարկման, կրթական գործընթացում արձագանքների փոխանցման և կազմակերպչական հարցերի լուծման գործընթացում:

Ինստիտուտի ղեկավար կազմը՝ ռեկտոր, դեկաններ, վարչական ստորաբաժանումների ղեկավարներ, պարբերաբար մասնակցում են ուսանողների հետ հանդիպումներին՝ քննարկելու նրանց կողմից բարձրաձայնված հարցերն ու առաջարկները:

ՀԲԻ-ն կիրառում է սոցիալական աջակցության նպատակով նախատեսված զեղչային քաղաքականություն՝ որոշակի ուսանողական խմբերի համար ուսման վճարի չափի նվազեցմամբ: Զեղչ ստանալու իրավունք ունեն ուսանողները, ովքեր ունեն ՀԲԻ-ում սովորող եղբայր կամ քույր, որոնց ծնողը հանդիսանում է ինստիտուտի աշխատակից:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ՀԲԻ-ն ապահովում է ուսանողների խորհրդատվության և լրացուցիչ պարապմունքների կազմակերպման հնարավորություններ՝ ուղղված նրանց առաջադիմության բարելավմանն ու մասնագիտական գիտելիքների զարգացմանը: Այս աջակցությունը ներառում է խորացված բացատրություններ առարկայական բարդ թեմաների շուրջ, ինչպես նաև մասնագիտական հմտությունների ձևավորմանը նպաստող խորհրդատվություն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասապրոցեսում առաջացած բացերը լրացնելու նպատակով կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ՝ հատկապես ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար: Դասախոսները պատրաստակամ են աշխատելու ուսանողների հետ նաև դասաժամերից դուրս՝ տրամադրելով հավելյալ առաջադրանքներ, ռեֆերատներ, ինչպես նաև թեմաների բացատրություններ:

Թեև ուսանողներին անհատական խորհրդատուներ դեռևս չեն նշանակվում, վերջիններս ստանում են անհրաժեշտ խորհրդատվություն ինստիտուտի համապատասխան ստորաբաժանումներից՝ ուսումնառության կազմակերպման, կրթական գործընթացի բարելավման և առաջադիմության բարձրացման նպատակով:

Ուսանողների փոխանցելի հմտությունների զարգացման համար առկա չեն լրացուցիչ պարապմունքներ:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Ըստ ՀԲԻ-ի ինքնավերլուծության՝ ուսանողները կարող են դիմել տարբեր վարչական ստորաբաժանումներ՝ հաշվապահություն, ռեկտորատ, դեկանատներ, ուսումնական բաժին և այլն՝ ստանալու անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն: Թեպետ ինստիտուտը չունի ուսանողի դիմելու հստակ կանոնակարգված ընթացակարգ կամ սահմանված ժամանակացույց, սակայն ստեղծված է միջավայր, որտեղ ուսանողները կարող են դիմել համապատասխան վարչական մարմիններին ցանկացած պահին՝ առանց սահմանափակումների:

Ինստիտուտում նաև պարբերաբար՝ կիսամյակում 1-2 անգամ, կազմակերպվում են հանդիպումներ տարբեր կուրսերի ուսանողների հետ: Հանդիպումներին մասնակցում են ռեկտորը, դեկանները, ամբիոնների վարիչները, ամբիոնի որակի ապահովման պատասխանատուները: Այս ձևաչափով ուսանողներին ներկայացվում են ուսումնական գործընթացի հետ կապված նոր ընթացակարգերը, սահմանված կարգավորումները, ինչպես նաև ընձեռվում է հնարավորություն ուղղակիորեն բարձրաձայնելու իրենց հուզող հարցերն ու առաջարկությունները:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ՀԲԻ-ում ներկայումս չի գործում առանձին կարիերայի կենտրոն, սակայն կարիերայի ուղղորդման աշխատանքներ իրականացնում են ամբիոնները և դասախոսական կազմը: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից շատերը նաև հանդես են գալիս որպես պոտենցիալ գործատուներ՝ աջակցելով ուսանողների մասնագիտական կողմնորոշմանն ու կարիերայի առաջխաղացմանը:

2023–2024 ուսումնական տարում ինստիտուտը իրականացրել է շրջանավարտների կարիերայի հետազոտման նպատակով հարցումներ: 2024 թվականի տվյալներով՝ բուժական ֆակուլտետի 50 շրջանավարտների հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ 65%-ը դիմել է օրդինատուրա՝ մասնագիտական կրթություն ստանալու համար: Այս հարցումների տվյալների համաձայն՝ ստոմատոլոգիական ֆակուլտետի 60 շրջանավարտների 81%-ն է դիմել օրդինատուրա:

Բուհը պայմանագրային հիմունքներով համագործակցում է մի շարք բժշկական կենտրոնների և հիմնարկների հետ, որտեղ ուսանողները անցնում են կլինիկական առարկաներ և պրակտիկա: Այս կենտրոնները հաճախ նաև դառնում են շրջանավարտների ապագա աշխատավայրեր, ինչն ուղղակիորեն նպաստում է ուսանողների կարիերայի ձևավորմանն ու մասնագիտական ներգրավվածությանը:

Ինստիտուտում շրջանավարտների միություն չի գործում: Շրջանավարտների հետ կապը պահպանվում է որակի ապահովման կենտրոնի և ամբիոնների և դեկանների միջոցով:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՀԲԻ-ն խրախուսում է ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին: Մասնավորապես, 2023 թ. մայիսի 19-ին ՀԲԻ-ում կազմակերպվել է միջբուհական ուսանողական գիտաժողով, որի արդյունքներով հրապարակվել է թեզիսների ժողովածու:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԲԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք ներկայացուցիչներ ակտիվորեն մասնակցում են գիտահետազոտական գործունեությանը՝ լինելով տարբեր գիտահետազոտական

ինստիտուտների և կենտրոնների աշխատակիցներ։ Նրանք ուսանողներին ներգրավում են այդ հաստատություններում իրականացվող հետազոտական ծրագրերին, ներառում դրամաշնորհային նախագծերում և աջակցում գիտական հոդվածների համահեղինակության և հրապարակման գործընթացներում։

Վերջին շրջանում ՀԲԻ-ում վերագործարկվել է Ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) գործունեությունը։ ՈԻԳԸ-ն համակարգվում է ՈԻԳԸ կուրատորի կողմից, ով հանդիսանում է պրոֆեսորադասախոսական կազմի անդամ և ակտիվ գիտահետազոտական գործունեությամբ է զբաղվում։ Կուրատորը կատարում է ոչ միայն կազմակերպչական, այլև մենթորական դեր՝ ուղղորդելով ուսանողներին գիտական հետազոտություններում ներգրավվելու գործընթացում։

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՀԲԻ-ում ուսանողներն ազատ են օգտվելու իրավաբանական բաժնի ծառայություններից՝ անհրաժեշտության դեպքում։ Իրավունքների պաշտպանության գործընթացում ներգրավվում են նաև դեկանատները, ռեկտորատը և համապատասխան վարչական ստորաբաժանումները։

Ինստիտուտում գործում է ուսանողական խորհուրդ (ՈԻԽ), որի հիմնական առաքելությունը ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությունն է։ ՈԻԽ անդամները ներգրավված են ֆակուլտետային հանձնաժողովների աշխատանքներում՝ 25% համամասնությամբ։ ՈԻԽ-ն ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով։ Յուրաքանչյուր ֆակուլտետային կուրս բաց քվեարկությամբ ընտրում է խորհրդի 1 անդամի, ում լիազորությունների ժամկետը 2 տարի է։ Տվյալ անդամի վերընտրման դեպքում լիազորությունների ժամկետը 3 տարի է։ ՈԻԽ անդամների պարտականությունները, իրավունքները սահմանվում եմ ՈԻԽ կանոնադրության միջոցով։ ՈԻԽ ղեկավար մարմինը հանդիսանում է ՈԻԽ նախագահությունը, աշխատանքները ղեկավարում է նախագահը։ Վերջինիս բացակայության դեպքում լիազորությունները իրականացնում է փոխնախագահը։ Ուսանողական խորհուրդը մշակում և ղեկավար մարմիններին է ներկայացնում ուսումնակրթական գործընթացներին առնչվող հարցերը, ներկայացնում է նախագծեր և նպաստում դրանց իրականացմանը։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ հիմնականում ակտիվ գործունեություն են ծավալում դեկանատները։ ՈԻԽ-ն հանդես է գալիս որպես ուսանողական հարցերի բարձրաձայնման հարթակ, սակայն ուսանողները նախընտրում են ուղղակիորեն դիմել դեկաններին կամ դեկանատի աշխատակիցներին՝ առաջացած խնդիրների դեպքում։

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման համար կիրառվում են հետևյալ մեխանիզմները . իրականացվում են պարբերական հարցումներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, գործում է «անոնիմ արկղ», որի միջոցով ուսանողները կարող են ներկայացնել բողոքներ և առաջարկություններ։ Հավաքագրված տվյալները վերլուծվում են, ներկայացվում

համապատասխան ստորաբաժանումներին, մասնավորապես դեկանատներին և ՈԱԿ-ին, որոնք արդյունքների հիման վրա իրականացնում են բարելավումներ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում դիմորդների հավաքագրման առկա փորձերը, սակայն խորհուրդ է տալիս գնահատել այդ միջոցառումների արդյունավետությունը և մշակել համակարգված ռազմավարություն՝ ՀԲԻ-ն ներկայացնելու դիմորդների ավելի լայն շրջանակի համար։ Դրական է, որ ՀԲԻ-ում առկա են ուսանողակենտրոն քաղաքականության տարրեր և միտում կա դրանք շարունակաբար զարգացնելու։ Մասնավորապես, արձանագրվել են խորհրդատվության, լրացուցիչ պարապմունքների, սոցիալական աջակցման, ինչպես նաև ուսանողներից տեղեկատվություն ստանալու մի շարք ձևաչափերի առկայություն։ Այսուամենայնիվ, ուսանողներին մատուցվող ծառայությունները մեծապես հիմնված են բուհի անհատական ստորաբաժանումների նախաձեռնության վրա և դեռևս չունեն ամբողջական և համակարգային կառուցվածք։

Բուհում առկա է ուսանողական խորհրդատվության և աջակցության ծառայությունների համակարգման կարիք։ Ուսանողների կրթական, սոցիալական և կարիերային կարիքներին արձագանքելու նպատակով նպատակահարմար է ձևավորել ուսանողական աջակցության ծառայությունների միասնական համակարգ՝ հստակ ընթացակարգերով, պատասխանատու ստորաբաժանումներով և տեղեկատվական հետադարձ կապի ամրագրված մեխանիզմներով։ Կարևորվում է հատկապես քննություններին պատրաստվելու շրջանում ուսանողներին աջակցություն տրամադրելու գործընթացի ինստիտուցիոնալացումը։

Բուհում կարիերայի զարգացմանն ուղղված գործողությունները ներկայումս իրականացվում են հիմնականում ամբիոնների և դասախոսների նախաձեռնությամբ։ Առկա պրակտիկաները կարող են հիմք հանդիսանալ կարիերայի կենտրոնի ստեղծման համար, որը կունենա համապատասխան գործառույթներ՝ գործատուների հետ համագործակցության համակարգում, շրջանավարտների հետ հետադարձ կապի ձևավորման, շրջանավարտների տվյալների բազայի ստեղծման և թարմացման, ինչպես նաև ուսանողների կարիերային կողմնորոշման միջոցառումների պլանավորման ուղղությամբ։ Ակնհայտ է նաև շրջանավարտների միության ստեղծման անհրաժեշտությունը, որը կարող է դառնալ կամուրջ շրջանավարտների, գործատուների և բուհի միջև։

Ուսանողների միջազգային շարժունության և օտարերկրյա ուսանողների ներգրավման ուղղությամբ բուհը կարող է դիտարկել փուլային զարգացում՝ նախ կազմակերպելով կարճաժամկետ դասընթացներ, ապա միայն առաջ անցնելով ամբողջական կրթական ծրագրերի իրականացմանը։ Առաջնահերթություն պետք է տրվի օտարերկրյա ուսանողների կրթական և սոցիալական ինտեգրման համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը։ Այս գործընթացում նպատակահարմար է ուսումնասիրել համադրելի միջազգային փորձը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ ՀԲԻ-ն ապահովում է ուսանողների ներգրավվածությունը կրթական գործընթացների բարելավման և որոշումների կայացման որոշ մակարդակներում, ձևավորել է խորհրդատվական որոշակի հնարավորություններ, կիրառում է ուսանողների կարծիքի վերհանման մեխանիզմներ և արձագանքման որոշ պրակտիկա, ինչպես նաև խրախուսում է ուսանողների մասնակցությունը

գիտահետազոտական և արտաուսումնական գործունեություններին, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ին բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՀԲԻ 2022-2026թթ ՌԶԾ-ի համաձայն ինստիտուտն իր առջև նպատակդրել է «Զարգացնել ինստիտուտի մարդկային ռեսուրսների համակազմը, ապահովել որակյալ դասախոսական ներուժ և ժամանակակից աշխատանքային միջավայր»: Վերոհիշյալ նպատակի իրագործման համար սահմանվել են հետևյալ քայլերը՝ կատարելագործել դասախոսի աշխատանքի տեղակալման չափանիշները, ձեռնարկել խոստումնալից կադրերի խրախուսման, աջակցման միջոցառումներ, իրականացնել դասախոսների մանկավարժական, մասնագիտական և հետազոտական հմտությունների կատարելագործմանը նպաստող միջոցառումներ, խթանել դասախոսական կազմի մասնակցությունը Ինստիտուտի կառավարման գործընթացում, շարունակաբար իրականացնել «Տարվա լավագույն դասախոսներ» մրցույթ, ներգրավել լավագույն շրջանավարտներին ուսումնական գործընթացում:

Ինքնավերլուծության համաձայն՝ հիմնադրման օրվանից պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը, ամբիոնի վարիչի համաձայնությամբ, իրականացվել է ինստիտուտի ռեկտորի հետ կնքած պայմանագրերի հիման վրա: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ Հիմնադիր խորհրդի անդամները բժիշկներ են, ովքեր ունեն կայացած մասնագիտական կապեր իրենց կոլեգաների հետ: Վերջինս էական նշանակություն ունի դասախոսական կազմի համալրման և ներգրավման գործընթացում: 2017թ. ընդունվել է ՀԲԻ-ի դասախոսների ընտրության ընթացակարգը, որի կից հավելվածում սահմանված է մրցութային կարգով ընտրության մեխանիզմը: Ինստիտուտի կադրերի բաժինը թափուր հաստիքների վերաբերյալ հայտարարությունները հրապարակում է Հայաստանի Հանրապետությունում տարածվող պարբերականներում, ինչպես նաև տարբեր կայքերում: Մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են դեկանը, ուսումնական մասի վարիչը, հանձնաժողովի այլ անդամներ: Մրցույթի ժամանակ հարցազրույց է անցկացվում՝ մասանկիցների մասնագիտական և անձնական հատկանիշների գնահատման նպատակով: Այցի ընթացքում պարզվեց, որ վերջերս, օրինակ՝ «Վիրաբուժական ստոմատոլոգիա» առարկայից նոր դասախոս է ընդունվել, և ընտրության գործընթացին մասնակցել են համապատասխան ամբիոնի վարիչներն ու ցիկլերի ղեկավարները: «Նորմալ ֆիզիոլոգիայի, մարդու անատոմիայի և հյուսվածաբանության» ամբիոնի դասախոսական

կազմը համալրելու նպատակով թեկնածու դասախոսները ներկայացրել են իրենց ինքնակենսագրականները, անցկացվել է հարցազրույց, և ընտրության գործընթացը իրականացվել է ինստիտուտի ուսումնական մասի կողմից: Մրցույթի արդյունքների հիման վրա, ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան, կնքվում է աշխատանքային պայմանագիր:

Համալսարանում սահմանված են պաշտոնների տեղակալման չափանիշներ, պաշտոնին համապատասխան մշակված են պաշտոնի անձնագրեր: ՀԲԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմը ընդգրկում է դասախոս, դոցենտ, պրոֆեսոր տարակարգերը:

2022թ մշակվել է «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ», որի համաձայն ՊԴ կազմի ձևավորման հիմքում ընկած է դասախոսի որակավորումը, գիտական աստիճանը և կոչումը, դասախոսական աշխատանքի փորձը, մեթոդական գործունեության ցուցանիշները, հետազոտական աշխատանքի ցուցանիշները: Փորձագիտական քննարկումների ընթացքում պարզվեց, որ ընտրության ընթացքում առավելություն է տրվում գիտական աստիճան, մանկավարժական փորձ ունեցող թեկնածուներին, կարևոր դեր են խաղում նաև մարդկային փոխհարաբերությունները և ուսանողների հետ արդյունավետ համագործակցելու կարողությունները: Այցից պարզ դարձավ, որ «Հյուսվածաբանություն» և «Ֆիզիոլոգիա» առարկաների համար առկա է լրացուցիչ դասախոսների կարիք, և ներկայումս աշխատանքներ են տարվում նոր մասնագետների ներգրավման ուղղությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի իրականացման համար դասավանդողների՝ անգլերեն լեզվի իմացության պարտադիր պահանջ սահմանված չէ: ՊԴ կազմը համալրվում է նաև բուհի շրջանավարտներով: Կլինիկական առարկաների դեպքում պրոֆեսորադասախոսական կազմի համալրումն իրականացվում է Ինստիտուտի հետ համագործակցող բժշկական կենտրոնների բժիշկներից («Էրեբունի» ԲԿ, «Զիլֆյան աչքի խնամքի կենտրոն», «Շենգավիթ» ԲԿ և այլն):

Ուսումնաօժանդակ կազմի թափուր հաստիքները համալրելու նպատակով ևս հայտարարություն է տեղադրվում, որից հետո հետաքրքրված անձինք դիմում են՝ աշխատանքի ընդունվելու նպատակով: Հայկական բժշկական ինստիտուտի վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրությունն ու գործունեությունը իրականացվում է բուհի կանոնադրության, էթիկայի կանոնների և աշխատանքային պայմանագրի դրույթներին համապատասխան:

Ինստիտուտի աշխատակազմում ներկայումս ընդգրկված է 203 աշխատող, որում դասավանդող անձնակազմը 174 հոգի է (86,7%), ուսումնաօժանդակ անձնակազմը՝ 29 (14,2%): Դասախոսական կազմում ընդգրկված են ինչպես հիմնական, այնպես էլ համատեղության կարգով և ժամավճարային հիմունքներով ներգրավված մասնագետներ: Պրոֆեսորադասախոսական կազմի 28%-ն ունեն գիտությունների թեկնածուի և 6,3%՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Համալսարանում ըստ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրերի առանձնացված չեն դասախոսական կազմին ներկայացվող պահանջները: 2017թ ընդունված

«Հայկական բժշկական ինստիտուտի կանոնակարգում» սահմանվել են «Դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ըստ ՄԿԾ-ների», որոնք կենտրոնանում են դասախոսների կարողությունների ընդհանուր շրջանակի վրա, ինչպես օրինակ, մասնագիտական կոմպետենցիաների պարագայում՝ ուսումնական առարկաների, մոդուլների և դրանց ուսումնա-մեթոդական ապահովման մշակումների ունակություն, ուսանողների կրթական-ճանաչողական գործունեության կազմակերպում, կրթական-տեղեկատվական միջավայր ձևավորելու ունակություն և այլն։

Ինքնավերլուծության և այցի արդյունքներից պարզ դարձավ, որ բուհը հաշվի է առնում դասախոսների կողմից դասավանդվող դասընթացների ուղղվածությանը համապատասխանող հենքային կրթությանը, որակավորմանը, դասավանդման փորձին, կարևորվում է նաև գիտահետազոտական գործունեությունը, իսկ կլինիկական առարկաների դասավանդման պարագայում՝ նաև առաջատար բժշկական կենտրոններում, կլինիկաներում աշխատելու և ուսումնական գործընթացը՝ բժշկական համայնքի հետ կապելու հնարավորությանը։

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար։

ՀԲԻ-ում ՊԴ կազմի դասավանդման որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում գործում են մի շարք կանոնակարգեր՝ «Հայկական բժշկական ինստիտուտի դասախոսների ատեստավորման կարգը»՝ 2019 թ., «Հայկական բժշկական ինստիտուտի կանոնակարգը»՝ 2017 թ., «ՀԲԻ Մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման ընթացակարգը»՝ 2022 թ. և այլն։ Գնահատման գործընթացում կիրառվող հիմնական մեխանիզմներն են ուսանողական հարցումները, դասալսումները և դասախոսների հետ քննարկումները։ Առկա է նաև դասախոսների ատեստավորման գործընթացը, որը այցի ընթացքում պարզ դարձավ, որ չի գործում վերջին չորս տարիներին։

Ուսանողների կարծիքը դասավանդման որակի վերաբերյալ պարբերաբար հավաքագրվում է՝ կիրառելով թղթային տարբերակով անցկացվող հարցաթերթիկներ, որոնք լրացվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին, քննաշրջանից հետո։ Հարցաթերթերում, ուսանողները հնարավորություն ունեն ներկայացնելու առաջարկներ։ Չնայած հարցումների վերլուծության արդյունքները ուսանողներին անմիջականորեն հասանելի չեն, փորձագիտական այցի ընթացքում ուսանողները նշեցին, որ իրենց կողմից արտահայտված դիտարկումները որոշ դեպքերում հանգեցնում են տեսանելի փոփոխությունների։ Հարցումների արդյունքները ներկայացվում են ֆակուլտետների դեկաններին, ուսումնական մասի ղեկավարին և ռեկտորին, ինչպես նաև քննարկվում են գիտական խորհրդի նիստերում։ Վերլուծության արդյունքներով կատարվել են մի շարք փոփոխություններ. օրինակ՝ ուսանողների արձագանքների հիման վրա որոշում է կայացվել խստացնել պրակտիկայի կազմակերպման վերահսկողությունը։ Լավագույն դասախոսների ցուցակում ներառվել են նաև ցիկլային դասախոսների տվյալները, ինչը ևս արձագանք է ուսանողների գնահատականներին։

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվեց, որ ՀԲԻ-ում դասալսումներն իրականացվում են ՈԱ կենտրոնի աշխատակցի, դեկանի, ամբիոնի վարիչների կողմից։ Փորձի փոխանակման նպատակով բազմամյա փորձով դասախոսների մոտ դասալսումներ են

իրականացնում նաև նոր դասախոսները: Առկա է դասալսումների անցկացման կանոնակարգ, դասի որակի գնահատման, դասալսումների արձանագրության թերթիկ: Դասալսումների արդյունքները քննարկվում են նիստերի ժամանակ: Կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների ամփոփագրերը կազմում է ԿՈԱ կենտրոնի փորձագետը, ով միաժամանակ տրամադրում է համապատասխան խորհրդատվություններ և ներկայացնում է առաջարկություններ՝ դասապրոցեսի բարելավման նպատակով: Դրանց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուշադրություն է դարձվում ուսումնական նյութի մատուցմանը, ցուցադրական նյութին, տեխնիկական միջոցներին, ուսանողների ներգրավվածությանը, դասավանդման մեթոդաբանությանը: Արձանագրված թերությունների շտկման ուղղությամբ կատարված առաջարկությունները, ըստ ինքնավերլուծության, ներկայացվում են բուհի ռեկտորին, դեկաններին, ուսումնական մասին, դասախոսներին: Դասալսումի արդյունքներով դասավանդման հաջողված փորձեր են բացահայտվել, որոշվել է դրանք տարածել:

Դասավանդման որակի և արդյունավետության խթանման նպատակով, ՀԲԻ-ում անցկացվում է «Լավագույն դասախոս» մրցանակաբաշխություն, որը հիմնվում է ուսանողական հարցումների, դասալսումների և ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների վրա, մասնագետին հատկացվում է դրամական խրախուսում: Առաջադրված դասախոսների թեկնածությունը սկզբում հավանության է արժանանում համապատասխան դեկանի և ուսումնական մասի կողմից: Վերջնական հաստատումը գիտական խորհրդի կողմից է իրականացվում:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

«Հայկական բժշկական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական վերապատրաստումների և մասնագիտական որակավորումների բարձրացման» կանոնակարգի համաձայն, յուրաքանչյուր դասախոս պարտավոր է ոչ պակաս, քան հինգ տարին մեկ անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում՝ աստիճանաբար կուտակելով սահմանված կրեդիտների քանակը (30 կրեդիտ):

Հանդիպումների ընթացքում և վերապատրաստումների գրաֆիկի ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ վերջին երեք տարիներին պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է մի շարք վերապատրաստումների: Դրանք հիմնականում ուսումնամեթոդական են: Վերապատրաստումներ իրականացվել են մասնագիտական կրթական և առարկայական ծրագրերի բարելավման, դասերի պլանավորման, ուսանողների գնահատման գործընթացի, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և այլ թեմաներով: Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ իրականացվել են ակտիվ քննարկումներ՝ նվիրված նանոտեխնոլոգիաներին, դրանց ազդեցությանը օրգանիզմի վրա, արհեստական բանականությանը և այլ արդի թեմաների: Դասախոսների պահանջով իրականացվել է նաև վերապատրաստում՝ նվիրված ChatGPT-ի կիրառման հնարավորություններին և գործնական օգտագործմանը:

2023թ.-ին բուհի չորս դասախոս մասնակցել են «Կրթական ծրագրերի համահնչեցումը բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի չափորոշիչներին» թեմայով եռօրյա վերապատրաստումներին:

Դասախոսները սեփական նախաձեռնությամբ մասնակցել են նաև իրենց մասնագիտական ոլորտների այլ վերապատրաստումներին, մասնավորապես՝ ուղղված կլինիցիստների շարունակական մասնագիտական զարգացումը կարգավորող ՇՄԶ կրեդիտների կուտակմանը՝ համաձայն ոլորտում գործող կարգավորումների:

Փոստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասախոսների մասնագիտական զարգացման ծախսերը կազմում են բյուջեի 0,5%-ը:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Ինքնավերլուծության համաձայն՝ բուհի ՊԴ կազմի 174 դասախոսներից 54-ը (31%) հիմնական աշխատակիցներ են: Ուսանողների թիվը խմբերում 12-14 է, իսկ մեկ դասախոսի կողմից դասավանդվող առարկաների առավելագույն քանակը ներկայումս չորս է: Ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2024թ. դեկտեմբերի դրությամբ կազմում է 796:174=4.5:1:

Դասախոսական կազմի կայունության ապահովման նպատակով բուհում առկա է կադրային ռեզերվ, որտեղ այս պահին 15-20 մասնագետ է ընդգրկված: Համալսարանը նեղ մասնագիտական ուղղություններով ներգրավում է տարբեր առաջատար բժշկական կենտրոնների և ստոմատոլոգիական կլինիկաների բժիշկներին ու ստոմատոլոգներին, ովքեր կազմում են պրոֆեսորադասախոսական կազմի մոտ 50%-ը: Բուհը քայլեր է ձեռնարկում ՊԴ կազմի համալրման ուղղությամբ՝ նախապատվություն տալով ինչպես երիտասարդ մասնագետներին, այնպես էլ ինստիտուտի լավագույն շրջանավարտներից ընտրված կադրերին: Համալսարանի դասախոսական կազմի միջին տարիքը 58 է: Այսպիսով, ինստիտուտում աշխատող ՊԴ կազմի միջին տարիքը 5 տարվա ընթացքում երիտասարդացել է 5 տարով:

Ինքնավերլուծության համաձայն՝ վերջին տարիներին պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի վարձատրության դինամիկ աճ է դիտվել. 2023 թվականին աշխատավարձային ֆոնդը գրեթե եռակի գերազանցել է 2020 թվականի ցուցանիշը: Փորձագիտական հանդիպումների ընթացում նաև պարզվեց, որ նախորդ տարվա մեկ ամսվա աշխատավարձային ֆոնդը կազմել է շուրջ 24 մլն դրամ, իսկ ընթացիկ տարվա համար՝ մոտ 28 մլն դրամ: Առանձին աշխատակիցների աշխատավարձերը վերջին մի քանի տարում ևս բարձրացվել են. 2021-2023 թթ. ընթացքում դասախոսության մեկ ժամվա վարձատրությունը աճել է 67%-ով՝ առանց գիտական կոչման աշխատակիցների համար, եռակի՝ գիտությունների թեկնածուի, 2.8 անգամ՝ գիտությունների դոկտորի, և 2.5 անգամ՝ ազգային ակադեմիայի ակադեմիկոսների համար: Գործնական պարապմունքների մեկ ժամվա վարձատրությունը աճել է 70%-ով՝ առանց գիտական կոչման աշխատակիցների համար, կրկնապատկվել է գիտությունների թեկնածուի պարագայում, և աճել 2.4 անգամ՝ գիտությունների դոկտորի համար:

Ըստ «Հայկական բժշկական ինստիտուտի ներքին կարգապահական կանոնների», աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման պարագայում խրախուսանքներ են նախատեսված՝ շնորհակալության հայտարարման, միանվագ դրամական

պարգևատրման, պատվոգրի հանձնման, հուշանվերով պարգևատրման եղանակներով: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բարձր մասնագիտական մակարդակով դասընթացներ անցկացնելու, աշխատանքային պարտականությունները պատշաճ, բարեխղճորեն կատարելու, ուսանողական հարցման արդյունքում ՀԲԻ լավագույն ճանաչված դասախոսներին, հիմնական աշխատակիցներին միանվագ դրամական պարգևատրումներ են հատկացվել: Հաստատության ներքին պարգևատրումները բյուջեի 0.3%-ն են կազմում:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀԲԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմը ընդգրկում է հետևյալ տարակարգերը՝ դասախոս՝ 140 (80.5%), դոցենտ՝28 (16,1%), պրոֆեսոր՝ 6 (3.5%): Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ, որ բուհը հավելավճարի տարբերություններ է սահմանում պրոֆեսոր և դոցենտ կոչումների համար:

Բուհը 2022թ հաստատել է «ՀԲԻ դասախոսական կազմի խրախուսման, պարգևների և պատվավոր կոչումների շնորհման կանոնակարգը», որով սահմանում է բուհի պատվավոր պրոֆեսորի և պատվավոր ամբիոնի վարիչի շնորհման կարգը: Նախորդ հավատարմագրման խորհրդատվության համաձայն, մշակվել է «Երիտասարդ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման և խրախուսման ընթացակարգ», որում դրամական պարգևատրում է նախատեսված՝ տպագրված հոդվածների, մենագրությունների, ուսումնամեթոդական ձեռնարկների, թեկնածուական և դոկտորական ատենախոսության պաշտպանության, դոցենտի կամ պրոֆեսորի կոչման արժանանալու պարագայում:

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվեց, որ դասախոսների խրախուսման հիմք են ծառայել ուսանողական հարցումները: ՀԲԻ-ն աջակցում է նաև ուսումնամեթոդական ձեռնարկների և դասագրքերի հրապարակմանը:

Հաստատությունը կարևորում է նաև վարչական աշխատակիցների խրախուսումը, ովքեր աշխատանքի ընթացքում աչքի են ընկել իրենց գիտելիքներով, աշխատասիրությամբ և նվիրումով: Այդպես են նշանակվել ԿՈԱ կենտրոնի ղեկավարը, ամբիոնի վարիչներ, ցիկլի ղեկավար:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ՀԲԻ-ի ուսումնաօժանդակ անձնակազմը բաղկացած է 29 հոգուց, որոնց գործառույթները և պարտականությունները սահմանված են պաշտոնի անձնագրերով:

Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը վերապատրաստումների կարիք ունի, որոշ աշխատակիցներ արդեն վերապատրաստվել են: Բուհն աջակցում է վերապատրաստումների իրականացմանը: Օրինակ՝ վարչական կազմը մասնակցել է էլեկտրոնային պայմանագրերի կազմման վերապատրաստման դասընթացի:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհն ունի հստակ ձևավորված քաղաքականություն և ընթացակարգեր՝ ուղղված պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության, գնահատման և շարունակական զարգացման գործընթացներին, ինչը հնարավորություն է տալիս ապահովել դասավանդման կայուն որակ և ներդաշնակել կրթական ծրագրերի նպատակների իրագործումը

համապատասխան մարդկային ռեսուրսներով: Դրական է նաև, որ դասախոսների խրախուսման, մասնագիտական առաջընթացի ապահովման և երիտասարդ մասնագետների ներգրավման առումով իրականացվում են նպատակային քայլեր, ներառյալ ֆինանսական խթանումը, լավագույն փորձի տարածումը, ինչպես նաև ուսանողական կարծիքների հաշվի առումը:

Դրական է, որ դասավանդման որակի ապահովման գործընթացում կիրառվում են մի շարք գործիքներ՝ ուսանողական հարցումներ, դասալսումներ, որոնք ուղեկցվում են կառուցողական խորհրդատվությամբ և առաջարկությունների ներկայացմամբ: Նկատվում է նաև դասախոսական կազմի որակի և գիտական ներուժի բարելավման միտում՝ մասնավորապես վերապատրաստումների, հետազոտական գործունեության խթանման և ակադեմիական աստիճանների ավելացման ուղղությամբ: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ բուհն անհրաժեշտություն ունի մշակելու հստակ պլան՝ դասախոսական կազմի վերապատրաստումների համար, ինչպես նաև բուհը կարող է դիտարկել բժիշկ դասախոսների կողմից փորձի փոխանակման միջոցառումների պլանավորված իրականացմանը, որին կարող են մասնակցել ինչպես դասախոսներ, այնպես էլ ուսանողներ:

Դրական է, որ բուհն արձագանքում է աշխատաշուկայի պահանջներին՝ համագործակցելով առաջատար բժշկական հաստատությունների հետ, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում ներգրավել ոլորտում գործող փորձառու մասնագետներ, ինչպես նաև ձևավորել կադրային ռեզերվ և ապահովել դասավանդման շարունակականություն:

Եզրահանգում: Հաշվի առնելով պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության, գնահատման և շարունակական զարգացման ձևավորված քաղաքականությունը, առկա է խրախուսման և երիտասարդացման մեխանիզմների գործարկում, ինչպես նաև դասավանդման որակի ապահովման ուղղությամբ կիրառվում են բազմաբնույթ գործիքակազմ, դասավանդման գործընթացում ներգրավված են բժշկական կենտրոնների փորձառու բժիշկներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ին բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6 . 1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՀԲԻ գիտական գործունեությունը համակարգվում է Գիտական խորհրդի միջոցով, որի կազմում ընդգրկված են ինստիտուտի ղեկավար կազմի ներկայացուցիչներ, ամբիոնների վարիչներ, ուսանողության և կլինիկական բազաների ներկայացուցիչներ: Գիտական գործունեության ընդհանուր ղեկավարը ռեկտորն է:

Հետազոտական ներուժը պայմանավորված է հիմնականում ինստիտուտի դասախոսների անհատական գիտական գործունեությամբ, որը հաճախ իրականացվում է ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների հետ համագործակցությամբ, մասնավորապես՝ նուրբ օրգանական քիմիայի, կենսաքիմիայի, ֆիզիոլոգիայի ոլորտներում: Ուսանողները ներգրավվում են այդ հետազոտական միջավայրում՝ իրականացնելով փորձարարական աշխատանքներ, ինչպես նաև որոշ դեպքերում՝ կլինիկական հետազոտություններ՝ համագործակցող բժշկական հաստատություններում (օր.՝ Էրեբունի ԲԿ, Արյան փոխներարկման կենտրոն, Դատաբժշկական փորձաքննության լաբորատորիա):

Թեև ինստիտուտը ներկայում հետազոտական հաստատության դիրք չի զբաղեցնում, վերջին տարիներին կատարվել են որոշակի քայլեր՝ հետազոտական մշակույթի ձևավորման ուղղությամբ: Նախորդ հավատարմագրման դիտարկումներից հետո բուհը ստեղծել է Ուսանողական Գիտական Ընկերություն (ՈՒԳԸ), որը նախաձեռնվել է բուհում իրականացվող հետազոտությունների ուղղությունների սահմանում: Ստոմատոլոգիական ֆակուլտետի համար նախատեսվել են «Ռեգեներատիվ բուժում», «Դեղորայքային թերապիա», «Հյուսվածքային ինժեներիա» ուղղությունները, իսկ բուժական ֆակուլտետի համար՝ «Ֆունդամենտալ բժշկություն», «Ցիրկադային ռիթմեր», «Լեղաքարային հիվանդություններ»:

Գիտական գործունեության համար նախատեսված ռեսուրսները ՀԲԻ բյուջեի մոտ 2%-ն են կազմում (Հաստատության ներքին պարգևատրումներ - 0,3%, Լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերման ծախսեր - 1%, Հրատարակումների ծախսեր - 0 %, Հետազոտությունների խրախուսման ծախսեր - 0%, ուսանողական գիտաժողովների և սեմինարների մասնակցության ծախսեր - 0,2%, այլ ծախսեր՝ 0,5%): ՀԲԻ-ն լաբորատորիաների հագեցման, սարքավորումների ձեռք բերման նպատակով դրամաշնորհային ծրագրերի չի դիմել:

6 . 2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Բուհում գործում են «ՀԲԻ գիտական հետազոտությունների ռազմավարության կարգը» և «ՀԲԻ գիտահետազոտական աշխատանքների ընթացակարգը», որոնց համաձայն՝ Հայկական բժշկական ինստիտուտը գիտահետազոտական գործունեության իրականացման նպատակով մշակում և կիրառում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր: Հետազոտական ոլորտում բուհի երկարաժամկետ հետաքրքրություններն ու հավակնություններն արտացոլված են համալսարանի զարգացման 2022-2026թթ Ռազմավարական ծրագրում և գործողությունների կատարման պլանում: Հետազոտական ոլորտի զարգացման քայլերը պլանավորվել են երկարաժամկետ հեռանկարում, միջնաժամկետ պլանավորում առկա չէ: Փորձագիտական այցի արդյունքում արձանագրվեց, որ բուհում առկա է ուսանողներին հետազոտական գործընթացներին ներգրավելու դրական միտում, որը դրսևորվում է ինչպես դասախոսների անհատական նախաձեռնությունների, այնպես էլ ուսանողների ինքնուրույն հետաքրքրության միջոցով: Միևնույն ժամանակ, հետազոտական գործունեության և կրթական գործընթացի կապի խորացման և այդ գործընթացների համակարգված պլանավորման ուղղությամբ առկա է ներուժի հետագա զարգացման հնարավորություն:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

2022թ հաստատված «ՀԲԻ դասախոսական կազմի խրախուսման, պարգևների և պատվավոր կոչումների շնորհման կարգով» սահմանվում են համալսարանի պատվավոր պրոֆեսորի և ամբիոնի պատվավոր վարիչի կոչումների շնորհման, ինչպես նաև խրախուսման համապատասխան դրույթները:

Երիտասարդ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման և խրախուսման նպատակով հաստատված 2022թ ընթացակարգի համաձայն՝ պարգևատրումներ են նախատեսվում գիտական և ուսումնամեթոդական ակտիվության համար, մասնավորապես՝ գիտական հոդվածների տպագրության, ուսումնամեթոդական ձեռնարկների, մենագրությունների հրատարակման, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության, դոցենտի և պրոֆեսորի կոչմանն արժանանալու դեպքում:

Համալսարանի պրոֆոսորադասախոսական կազմը մասնակցել է գիտաժողովների, տպագրել հոդվածներ, հեղինակել և/կամ վերահրատարակել դասագրքեր, ձեռնարկներ և ուսումնական նյութեր: Վերջին տարիներին հրապարակումների թվի ավելացում է նկատվում: Մասնավորապես, 2020–2022 թթ. տարեկան միջինում հրապարակվել է շուրջ 25 հոդված և թեզիս (գիտաժաղովի նյութեր), մինչդեռ 2023 և 2024 թթ. այդ թիվը էականորեն աճել է՝ գրանցելով գրեթե կրկնակի ցուցանիշ: Փաստաթղթերի վերլուծությամբ պարզվեց, որ 2020-2024 թթ ընթացքում համալսարանի դասախոսական կազմը հոդվածներ է տպագրել Q1 - Q4 քվարտիլներով (գիտական ազդեցության մակարդակ) միջազգային ամսագրերում, մասնավորապես՝ Q4՝ 11 ,Q3՝ 7, և Q1՝ 10 հոդվածներ: Սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հրապարակումների մեծ մասում ՀԲԻ դասախոսները հանդես են գալիս ոչ որպես բուհի ներկայացուցիչներ, այլ որպես տարբեր գիտական կազմակերպությունների աշխատակիցներ:

Այցի ընթացքում պարզվեց նաև, որ բուհի դասախոսները տարբեր ճանապարհներով ուսանողներին ներգրավում են հետազոտական աշխատանքներում: Օրինակ, գիտության կոմիտեի կողմից հայտարարված մրցույթներում երկու ծրագրեր դասախոսները շահել են և դրանց իրականացման գործընթացում ներգրավվել են նաև ՀԲԻ-ի ուսանողներ: Ընտրվում են այն ուսանողները, ովքեր ցուցաբերել են ինքնուրույն աշխատելու, համագործակցելու կարողություններ:

Հաճախ ուսանողները սեփական նախաձեռնությամբ մասնակցում են հետազոտական աշխատանքներին . մասնավորապես, քիմիական փորձերի ընթացքում առաջացած հետաքրքրությունը նպաստել է նրանց ներգրավմանը գիտահետազոտական կենտրոններում իրականացվող աշխատանքներում: Բուհի ուսանողները դասախոսների հետ համատեղ ունեն գիտական հրապարակումներ, այդ թվում նաև միջազգային գիտական պարբերականներում (International journal of Biometeorology, Chronobiology in Medicine, Insights in Biomedicine, Микроэлементы в медицине, Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի տեղեկագիր):

Փորձագիտական հանդիպումների ժամանակ պարզվեց, որ տպագրությունների խրախուսման նպատակով նախատեսված միջոցները դասախոսներին հատկացվել են որպես ընդհանուր պարգևատրման մաս՝ առանց դրանց առանձին արտահայտման կամ նպատակային նշման:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՀԲԻ-ի ՊԴ կազմը մասնակցել է միջազգային գիտաժողովներին (Թաիլանդ, Բելգիա, Իսպանիա, Իտալիա, Ռուսաստան) և ներկայացրել է մի շարք միջազգային ամսագրերում հրապարակումներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գործատուները նույնպես ուսանողներին հնարավորություն են ընձեռում մասնակցելու բժշկագիտության տարբեր ոլորտներին նվիրված միջազգային գիտաժողովների: Օրինակ, ուսանողների մասնակցությունն ապահովվել է Զիլֆյան Աչքի Խնամքի Կենտրոնի կողմից կազմակերպվող ամենամյա միջազգային կոնֆերանսին, ինչպես նաև այլ բժշկական ասոցիացիաների նախաձեռնած միջոցառումներին:

6 . 5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Ըստ ինքնավերլուծության՝ ՀԲԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմը ուսումնական բազաներում և ՀՀ ԳԱԱ տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում բարձր կուրսի ուսանողներին ընդգրկում է հետազոտական աշխատանքներում: Կատարված հետազոտությունների արդյունքներով կազմակերպվում են ամենամյա ուսանողական միջբուհական գիտական կոնֆերանսներ, որոնց նյութերը հրապարակվում են գիտական ժողովածուի տեսքով: 2023 թվականին անցկացվել է միջբուհական գիտաժողով՝ նվիրված Լևոն Հրանտի Անդրիասյանի հիշատակին, որի արդյունքներով հրատարակվել է թեզիսների ժողովածու (Երևան, «Հայրապետ» հրատ., 2023):

Ցածր կուրսի ուսանողների համար կազմակերպվում են այցեր դեպի գիտահետազոտական ինստիտուտներ՝ հետազոտական միջավայրի և մեթոդաբանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու նպատակով: Օրինակ, ուսանողները ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտում ծանոթացել են ԴՆԹ-ի հալման փորձարարական մեթոդներին և իրականացրել պրակտիկ հաշվարկներ՝ գնահատելու համար ԴՆԹ-ի մաքրության աստիճանը:

Ուսանողները ներգրավվում են նաև գործնական հետազոտական նախաձեռնություններում: Ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողները, դասախոսի անմիջական ղեկավարությամբ, իրականացրել են կարիեսի համաճարակաբանական ուսումնասիրություն Երևանի դպրոցներում՝ 12-14 տարեկան աշակերտների շրջանում (ընդհանուր՝ 286 աշակերտ): Ուսանողները ուսումնասիրել են բերանի խոռոչի հիգիենիկ վիճակը, կծվածքի ձևերը և իրականացրել են իրազեկման աշխատանքներ՝ բերանի խոռոչի առողջության պահպանման վերաբերյալ: Աշխատանքի արդյունքները ներկայացվել են ՀԲԻ-ում կազմակերպված «Փնտրվում է կարիես» խորագրով միջոցառման շրջանակում:

Բուժական ֆակուլտետի ուսանողներից մեկը դասախոսի ղեկավարությամբ իրականացրել է հետազոտություն Արցախի դեղաբույսերի վերաբերյալ՝ ներկայացնելով դրանց բուժական հատկությունները և կիրառությունները ժողովրդական բժշկության մեջ:

ՀԲԻ ուսանողները մասնակցել են նաև ՀՀ ԳԱԱ-ի կողմից կազմակերպվող «Գիտության շաբաթ» միջոցառմանը:

Փաստաթղթերի և հանդիպումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողական հետազոտական աշխատանքները հիմնականում ունեն վերլուծական բնույթ և հիմնված են գրականության ուսումնասիրման և դեպքերի վերլուծության (case study) վրա: Որոշ առարկաների շրջանակում ներառված են հետազոտական բաղադրիչներով տնային հանձնարարություններ (օր.՝ «Էպիթելների զարգացման մասին հետազոտական նյութ»,

«Մակրոֆագերի դերը իմունիտետում»։ Առարկայական նկարագրերում ընդգրկված են թեմատիկ զեկուցումներ (կենսաանօրգանական և կենսաօրգանական քիմիա), ինքնուրույն նախագծերի իրականացում (բժշկական կենսաբանություն և գենետիկա) և դրանց արդյունքների ներկայացում։

ՀԲԻ-ի կողմից 2020-2024թթ. հրատարակվել, վերահրատարակվել են դասագրքեր, ձեռնարկներ և ուսումնական նյութեր, մասնավորապես՝ Մինասյան Ա. Մ., Ադամյան Ծ. Ի., Սարգսյան Ն. Վ., Մարդու ֆիզիոլոգիա (2020); Мкртчян Г.А., Уроки русского языка для студентов медицинского профиля (2021); Մ. Հովհաննիսյան, Կենսաքիմիա առարկայի լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկ (2024); Ա. Հ. Մելիքյան, Որովայնային ցավերի բնութագիր, ախտորոշումը, վիրաբուժական պատճառները (2024); Լ. Սարգսյան, Բժշկական էթիկա և դեոնտոլոգիա (2024)։

Դատողություններ: Դրական է, որ բուհում առկա են ուսանողական գիտաժողովների կազմակերպման, հետազոտությունների ներկայացման, գիտական նյութերի պատրաստման և հրապարակման հնարավորություններ։ Հատկանշական է, որ ուսանողները ներգրավվում են հետազոտական գործընթացներում՝ ինչպես դասախոսների նախաձեռնությամբ, այնպես էլ սեփական հետաքրքրության հիման վրա, իսկ վերջիններս համագործակցում են տարբեր գիտահետազոտական կենտրոնների հետ, ինչը կարող է դառնալ համակարգային համագործակցության զարգացման հիմք։ Դրական է նաև այն, որ բուհն ունի ՈՒԳԸ կառուցվածքային միավոր, որի համակարգմամբ կատարվում են թեմատիկ ուղղությունների ձևակերպումներ՝ նպաստելով հետազոտական միտվածության զարգացմանը։

Միաժամանակ, դիտարկելով առկա ներուժը՝ ներառյալ դասախոսական կազմի մեծ քանակը, գիտահետազոտական ինստիտուտների հետ կապերը և առկա փորձը, հնարավոր է ձևավորել հստակ հետազոտական քաղաքականություն և հաստատության համար բնութագրական հետազոտական պրոֆիլ։ Այսպիսի մոտեցումը կարող է ապահովել հետազոտական գործունեության ուղղորդում և ներքին զարգացման ռեսուրսների համախմբում։ Դրական քայլ կլինի հետազոտական նախագծերի պարտադիր ընդգրկումը ուսումնական ծրագրերում՝ այդ թվում թեզային աշխատանքների ձևով, որը կնպաստի նաև վերլուծական և հետազոտական մտածելակերպի ձևավորմանը։

Ուշագրավ է, որ ՀԲԻ-ում դասախոսներն ունեն գիտական ակտիվություն՝ ներգրավված լինելով տարբեր հրապարակումներում։ Այս հիմքի վրա կարելի է մշակել գիտական նախագծերի ներկայացման մեխանիզմներ, ներքին գրանտային ծրագրեր և խրախուսման ավելի հստակ քաղաքականություն՝ կապված հետազոտական տպագրությունների, կոնֆերանսների մասնակցության, ինչպես նաև միջազգայնացման հնարավորությունների ընդլայնման հետ։ Հատկապես կարևոր է հետազոտական միջավայրի բարելավմանն ուղղված ներդրումների ավելացումը՝ բարձրացնելով հետազոտական նպատակներով նախատեսված բյուջետային բաժինը, զարգացնելով լաբորատոր հնարավորությունները և խթանելով կլինիկական, վիճակագրական ու հիմնարար հետազոտությունների իրականացումը։

Հետազոտական կարողությունների զարգացումն ու գնահատումը կարող է դառնալ բուհում որակի ապահովման համակարգի բաղադրիչ, ինչը թույլ կտա ստանալ ամբողջական պատկեր հետազոտական ներուժի վերաբերյալ և պլանավորել դրա շարունակական զարգացումը՝ համակարգային մակարդակով։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո արձանագրված թերությունների հիման վրա բուհում ձեռնարկվել են որոշակի գործողություններ՝ ուղղված հետազոտական գործունեության խթանմանը, մասնավորապես՝ վերագործարկվել է ՈՒԳԸ կառույցը, սահմանվել են առաջնային հետազոտական ուղղություններ, ձեռնարկվել են ուսանողների ներգրավման քայլեր գիտահետազոտական գործընթացում, բուհում առկա է գիտահետազոտական միտումներ՝ ուսանողների և դասախոսների ակտիվ ներգրավվածությունը գիտաժողովներին, գիտական ինստիտուտների և կլինիկական բազաների հետ համագործակցությունը փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ին բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՀԲԻ-ն իր գործունեությունն իրականացնում է 9500 մ² տարածքում, որից գլխավոր մասնաշենքը զբաղեցնում է 5660 մ², ինչպես նաև կլինիկական ամբիոններում, որոնք գործում են 27 բժշկական կենտրոններում վարձակալության հիմունքներով: Հաստատությունում բացի լսարաններից առկա են լաբորատորիաներ, համակարգչային լսարան, գրադարան, ընթերցասրահ, մարզադահլիճ, բուժկետ, հասարակական սննդի կետ:

2023–2024 թվականների ընթացքում ՀԲԻ-ի գրադարանը զգալիորեն համալրվել է մասնագիտական և ուսումնամեթոդական գրականությամբ՝ նպատակ ունենալով բարելավել ուսանողների ուսումնառության ռեսուրսային ապահովումը: Հիմնականում համալրվել են այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են վիրաբուժական ստոմատոլոգիան, մարդու անատոմիան, հյուսվածաբանությունը, ռազմադաշտային վիրաբուժությունը, բժշկական մանրէաբանությունը, կենսաքիմիան, բժշկական էթիկան և դեոնտոլոգիան: Գրադարանային նոր գրականությունը ներառում է ինչպես դասագրքեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ, այնպես էլ նոր թողարկված մասնագիտական աշխատանքներ: Գրքերի օրինակների քանակը նույնպես վկայում է նպատակային համալրման մասին՝ ապահովելով ուսանողների և դասախոսների լայն հասանելիություն ուսումնական նյութերին:

Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ, որ գրադարանն ունի վերանորոգման և թվայնացման անհրաժեշտություն, չնայած որոշ մասնագիտական գրքեր տեղադրված են հաստատության պաշտոնական կայքում:

Հաստատության զարգացման ռազմավարական ծրագրի (2022–2026թթ.) 5-րդ ռազմավարական ուղղության 5.3 խնդիրն ուղղված է ինստիտուտի կրթական ծրագրերի կարիքներին համահունչ՝ լսարանային, ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի զարգացմանն ու արդիականացմանը: Որպես առաջընթացի գնահատման ցուցիչներ սահմանված են նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներով վերազինված,

արդիականացված և թվայնացված գրադարան ու ընթերցասրահ, տարեկան առնվազն երկու լսարանների վերանորոգում և վերազինում, ինչպես նաև նյութատեխնիկական բազայի կարիքների գնահատման պլանների առկայություն:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ վերոնշյալ ցուցիչներից որոշները դեռևս ամբողջությամբ չեն իրագործվել: Մասնավորապես՝ գրադարանի արդիականացման գործընթացը դեռևս ավարտված չէ, իսկ լսարանների վերանորոգման աշխատանքների մի մասը արդեն իրականացվել է, մյուս մասը գտնվում է ընթացքի մեջ:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ վերոնշյալ ցուցիչներից մի շարք ուղղություններով կատարված են որոշակի աշխատանքներ: Մասնավորապես՝ ընթանում է սիմուլյացիոն լաբորատորիաների ստեղծման գործընթացը թե՛ ստոմատոլոգիական, թե՛ բուժական ֆակուլտետների համար:

Ստոմատոլոգիական և բուժական գործ կրթական ծրագրերում մասնագիտական գրականության հասանելիությունը կատանվում է դասախոսների և ոլորտում գործող բժիշկների կողմից ուսանողներին տրամադրվող ոլորտի վերջին կլինիկական ուղեցույցներով ու արդի բժշկական տեղեկատվությամբ:

2020-2024 հաստատությունը ձեռք է բերել մեկ ինտերակտիվ գրատախտակ, 3 հատ պրոյեկտորներ, 15 հատ նոթբուքեր, 2 հատ պատճենահանման սարք: ՀԲԻ-ի ողջ շենքը ապահովված է ինտերնետային կապով և համացանցին կապակցման հնարավորությամբ (WI-FI): 2024-2025 ուսումնական տարում 7 լսարան կահավորվել է ժամանակակից էկրաններով, որոնք միացած են համացանցին:

Ըստ ինքավերլուծության 2022-2023 ուստարում բյուջեում կատարվել են հատկացումներն ըստ հետևյալ տոկոսային հարաբերության՝ մասնագիտական զարգացման համար 4%, գրադարանների թարմացման և հարստացման համար 1%, սարքավորումների, գույքի ձեռքբերման համար 3,2%, վերանորոգման համար 33,6%, իսկ ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ 2023-2024 ուստարում կապիտալ վերանորոգվել և կահավորվել է հաստատության 4-րդ հարկը, ներկայումս վերանորոգման մեջ էր գտնվում 3-րդ հարկը, և բուհը պլանավորել է ամբողջ շենքի էտապային վերանորոգումը:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ըստ ինքնավերլուծության և կից ներկայացված փաստաթղթերի՝ ՀԲԻ-ի ֆինանսական ռեսուրսները գոյանում են ուսանողների վարձավճարներից (98,31%), իսկ ծախսերի 48-52%-ը կազմում է աշխատավարձը, որից դասախոսական կազմի աշխատավարձը՝ 42,35%, վարչական աշխատողների աշխատավարձը՝ 9%, ուսումնաօժանդակ և տեխնիկական անձնակազմի աշխատավարձերը՝ 2%, պետական բյուջե վճարումները՝ 5%, ուսման վարձերի զեղչերը՝ 2%, պրակտիկաների կազմակերպման ծախսերը՝ 5%, ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսերը՝ 11%, գրադարանային ծախսերը՝ 2%, ուսանողական խորհրդի հետ կապված ծախսերը՝ 0,05%, որակի ապահովման գործընթացների ծախսերը՝ 0,5%, գործուղման ծախսերը՝ 1%, գիտության ծախսերը՝ 2%, վարձակալության ծախսերը՝ 2,5%, կոմունալ ծախսերը՝ 5%: ՀԲԻ-ն չունի դրամաշնորհներ և ֆինանսական այլ հոսքեր, ինչպես նաև ֆինանսների կառավարման արդյունավետության վերաբերյալ վերլուծություններ առկա չեն:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՀԲԻ-ն ֆինանսական միջոցները բաշխում է՝ առաջնորդվելով կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման և դրանց շարունակականության ապահովման սկզբունքով: Ըստ ինքնավերլուծության և փաստաթղթերի ուսումնասիրության բուհը բյուջեի 0,5% տրամադրում է դասախոսների մասնագիտական զարգացման համար, մասնավորապես, 2023թ. և 2024թ. ընթացքում իրականացվել են պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ՝ համապատասխանաբար 1,600,000 դրամ և 1,270,000 դրամ ծախսերով, նպատակ ունենալով բարձրացնել կրթության որակը և զարգացնել դասախոսների մասնագիտական կարողությունները:

Ինչպես նաև, հաստատությունում ներդրված են նաև խրախուսման մեխանիզմներ՝ պարգևատրումներ, որոնք տրամադրվում են թե՛ պրոֆեսորադասախոսական կազմին, թե՛ ուսումնաօժանդակ կազմին, ինչը կարևոր ներդրում է կրթական միջավայրի կայունության և որակի զարգացման գործում:

ՀԲԻ-ն իրականացնում է ֆինանսական ներդրումներ կլինիկական դասընթացների կազմակերպման նպատակով՝ կնքելով պայմանագրեր կլինիկական բազաների հետ ինչպես վճարովի, այնպես էլ անվճար հիմունքներով:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ըստ ռեսուրսների դիտարկման ՀԲԻ-ի Ռազմավարական ծրագրով նախատեսված երկու ՄԿԾ-ների համար սիմուլյացիոն կենտրոնների գործարկումն ընթացքի մեջ է: Ստոմոտոլոգիական մասնագիտության համար սիմուլյացիոն կենտրոնն արդեն վերանորոգված լսարանում սարքավորումների տեղադրման փուլում էր, և այդ կենտրոնի վերջնական գործարկումը հաստատությունը նախատեսում է արդեն սեպտեմբերին: Իսկ բուժական մասնագիտության համար սիմուլյացիոն կենտրոնի վերանորոգումն ավարտված էր, սպասվում էր համապատասխան սարքավորումների ստացման և տեղադրման գործընթացը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ կլինիկական դասընթացների համար համապատասխան բուժական հաստատությունների ռեսուրսների օգտագործումը բուհի ուսանողներին հնարավորություն է տալիս դիտարկել և օգտվել ժամանակակից բուժական սարքավորումներից: ՀԲԻ-ի գլխավոր կլինիկական բազան «Էրեբունի» ԲԿ-ն է, որի հետ համագործակցությունը հաստատության ուժեղ կողմերից է, քանի որ այն ամրապնդում է ուսուցման գործնական բաղադրիչը՝ ապահովելով ուսանողների անմիջական մասնագիտական ինտեգրում բուժական միջավայրին:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ՀԲԻ-ի արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառության ապահովման ընթացակարգը, ինչպես նաև այդ գործընթացներում պատասխանատու ստորաբաժանումների գործառույթների սահմանումը կանոնակարգվում են ներքին կարգապահական կանոններով, վերահաստատված 2017 թ., և արխիվացման կարգով:

Ըստ ինքնավերլուծության հաստատությունում գործում են ցանցային ծրագրեր, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել փաստաթղթաշրջանառության թվայնացում, ինչպես նաև ապահովել Ինստիտուտի ներքին և արտաքին փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության արագ և ճշգրիտ փոխանակումը:

Բուհն ունի պաշտոնական կայք, ֆեյսբուքյան էջ, ամսաթերթ, որոնց միջոցով ևս տարածում է տեղեկատվություն ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ, սակայն ՀԲԻ-ն դեռ չի իրականացրել կայքէջի և ֆեյսբուքյան էջի հրապարակումների վերլուծություն:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Ինստիտուտում 2025թ. տեղադրվել է հակահրդեհային համակարգ:

ՀԲԻ-ում գործում են առաջին օգնության բուժկետ, որն ապահովված է անհրաժեշտ դեղորայքով և պարբերաբար թարմացվող առաջին օգնության նյութերով:

Հաստատությունում բարելավել է հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար պայմանները՝կառուցվել են թեքահարթակներ շենքին մոտենալու համար:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ըստ ինքնավերլուծության ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով հաստատությունը պարբերաբար հարցումներ, մշտադիտարկումներ է անցկացնում շահակիցների շրջանում: Հարցումների արդյունքում ուսումնառողների 60%-ն բավարարված ռեսուրսների ապահովությունից, իսկ դասավանդողների՝ 70%-ը: Հարցումների արդյունքում շահակիցները հիմնականում նշում են հետևյալ բարելավման ենթակա կողմերը՝ գրադարանային ֆոնդի արդիականացում, էլեկտրոնային գրատախտակների և համակարգիչների ավելացում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ հաստատությունը հետևողական աշխատանք է իրականացնում կրթական գործընթացի նյութատեխնիկական հիմքի բարելավման ուղղությամբ՝ հատկապես կլինիկական հմտությունների զարգացման համար: Դրական է, որ ստոմատոլոգիական և բուժական ֆակուլտետների համար ընթացքի մեջ է սիմուլյացիոն լաբորատորիաների ստեղծման գործընթացը, ինչն ուղղված է ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Դրական է նաև, որ բուհը կիրառում է գործընկեր բժշկական հաստատությունների (օրինակ՝

«Էրեբունի» ԲԿ) ռեսուրսները, ներառյալ մուլյաժները, գործնական հմտությունների ուսուցման նպատակով:

Նկատվում է գրադարանի համալրման միտում՝ ուսանողներին և դասախոսներին հասանելի դարձնելով արդիական մասնագիտական գրականություն, ներառյալ ուղեցույցներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ և մասնագիտական դասագրքեր: Բացի այդ, ուսանողները հաստատության բժիշկ-դասախոսներից ստանում են ոլորտի վերջին կլինիկական ուղեցույցները՝ համալրելով կրթական ռեսուրսների շրջանակը:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ձևակերպել հստակ ռեսուրսների զարգացման և արդիականացման քաղաքականություն, հատկապես՝ նախակլինիկական և բազային առարկաների ուսուցման համար: Հատուկ կարիք ունեցող ուսանողների կրթական պայմանների ապահովման համար նպատակահարմար է մշակել ներառականության սկզբունքներին համահունչ ռեսուրսային քաղաքականություն:

Կարևոր է, որ հաստատությունը իրականացնի ռեսուրսների պարբերական գնահատում՝ ներառյալ լաբորատոր, գրադարանային, տեխնիկական և ֆինանսական հենքը՝ հաշվի առնելով կրթական ծրագրերի զարգացման տեմպերը, ուսանողների քանակական աճը և ռազմավարական նպատակները: Հստակեցված ֆինանսական պլանավորումը, ռիսկերի վերլուծությունը և այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների ներգրավումը կնպաստեն հաստատության ռեսուրսային կայունության ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հաստատությունում վերջին տարիներին իրականացվել են մի նյութատեխնիկական ռեսուրսների բարելավման աշխատանքներ, ստոմատոլոգիայի և բուժական գործ կրթական ծրագրերի համար ստեղծվում են սիմուլյացիոն լաբորատորիաներ, արդյունավետորեն օգտագործվում են «Էրեբունի» ԲԿ-ի հնարավորությունները, իսկ գրադարանը 2023–2024 թվականներին համալրվել է մասնագիտական գրականությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ի բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՀԲԻ-ում հաշվետվողականության համակարգն ընդգրկում է կրթական, ֆինանսական և որակի ապահովման ենթահամակարգերը: Հիմնական հաշվետու ստորաբաժանումներն են ուսումնական բաժինը, դեկանատները, ամբիոնները, որակի ապահովման կենտրոնը և գլխավոր հաշվապահությունը: Հաշվետվությունների բովանդակությունը ներառում է ինչպես ոլորտային ցուցանիշների վերլուծություն, այնպես էլ հիմնախնդիրների նկարագրություն և արդյունքների ամփոփում: ԿՈԱ կենտրոնի հաշվետվությունները հաճախ ներառում են նաև

հարցումների արդյունքների վերլուծություն և կրթական ծրագրերի վերանայման վերաբերյալ տվյալներ։

Հաշվետվողականության ամենաբարձր մակարդակում՝ ռեկտորի կողմից կազմվող տարեկան հաշվետվությունները ներկայացվում են հիմնադիրների խորհրդին։ Սակայն տարբեր տարիներին այդ հաշվետվությունների ձևաչափերը և խորությունը տարբեր են։ Այս փաստաթուղթը ներկայումս չի հրապարակվում արտաքին շահակիցների համար։

Ներքին շահակիցների՝ մասնավորապես ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի հետ իրականացվում են հանդիպումներ ինչպես ֆորմալ (գիտական խորհուրդ, ԿՈԱ, ուսումնական մաս), այնպես էլ ոչ ֆորմալ մակարդակով՝ հանդիպումներ, քննարկումներ։

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը։

ՀԲԻ-ում թափանցիկության ապահովման հիմնական գործիքներն են պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջը, դասախոսների համար նախատեսված վայբերյան փակ խումբը, ինչպես նաև «Էրեբունի ամսաթերթ»-ը, որը ծառայում է որպես հաղորդակցման և ներբուհական կյանքի լուսաբանման լրացուցիչ հարթակ։ Պաշտոնական կայքում հրապարակվում են բուհի գործունեության, ուսումնական գործընթացների, իրադարձությունների մասին տեղեկություններ, իսկ ֆեյսբուքյան էջը ծառայում է տեղեկատվության, կրթական և ժամանցային բովանդակության տարածման նպատակով։ Դասախոսների համար նախատեսված հաղորդակցության փակ խումբը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով փոխանցել կարևոր հաղորդագրություններ։

Թափանցիկության ապահովման նպատակով իրականացվում է կայքի պարբերական թարմացում, իսկ հասարակության հետ կապը իրականացվում է նաև էլեկտրոնային փոստի միջոցով՝ ղեկավարման կազմին ուղղակի դիմելու հնարավորությամբ։ Կայքում տեղադրվում են կանոնադրական և ռազմավարական փաստաթղթեր։ Ինստիտուտը ձեռնամուխ է եղել կայքի և ֆեյսբուքյան էջի եռալեզու տարբերակի մշակման գործընթացին՝ նպատակ ունենալով բարձրացնել տեղեկատվության հասանելիությունը՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների համար։ Մինչև ընթացիկ տարվա սեպտեմբեր նախատեսվում է կայքի եռալեզու տարբերակի գործարկումը, ֆեյսբուքյան էջի բազմալեզու դարձնումը, ինչպես նաև «Էրեբունի ամսաթերթ»-ի թվայնացումը։

Ներկայումս կայքի և այլ տեղեկատվական հարթակների վերաբերյալ ծախսերը ընդգրկված են ընդհանուր ընթացիկ բյուջեում՝ առանց առանձին նախատեսված տողի։ Հրապարակվող նյութերի ճշգրտությունը վերահսկվում է ուսումնական մասի և ՈԱԿ-ի կողմից, իսկ հրապարակումների վերաբերյալ իրականացվում է որոշակի վիճակագրական վերլուծություն, թեև դրա փաստաթղթային ամրագրումը բացակայում է։

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ։

Փորձագիտական այցի ընթացքում հաստատվեց, որ հետադարձ կապն իրականում հիմնականում իրականացվում է էլեկտրոնային փոստի միջոցով, որն ապահովում է պաշտոնական և արձանագրվող հաղորդակցում։ Կայքում տեղադրված է նաև

հեռախոսահամար, որը լրացուցիչ հնարավորություն է տալիս հարցերի ուղղման և արձագանք ստանալու համար։

Շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման շրջանակում բուհում կազմակերպվում են շաբաթական ընդունելության օրեր, որոնց ընթացքում ուսանողները հնարավորություն ունեն հանդիպելու ռեկտորի, ուսումնական մասի ղեկավարի կամ դեկանների հետ։ Արտաքին շահակիցների հետ հանդիպումների համակարգումը վստահված է աշխատակազմի ղեկավարին, ով ընդունում է հարցերը, պատասխանում կամ անհրաժեշտության դեպքում ուղղորդում է համապատասխան ստորաբաժանում։ Այս գործընթացները նպաստում են բուհի գործունեության նկատմամբ վստահության ամրապնդմանը և հարցերի օպերատիվ լուծմանը։

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ՀԲԻ-ում հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցումը իրականացվում է մի շարք ձևաչափերով։ Կազմակերպվում են գիտաբժշկական և բժշկական ոլորտի արդի հիմնախնդիրներին նվիրված բաց դասախոսություններ և լրացուցիչ կրթական դասընթացներ՝ ինչպես ներքին լսարանի, այնպես էլ արտաքին շահակիցների համար։

Ինստիտուտը նաև ակտիվ համագործակցում է դպրոցների և մանկապարտեզների հետ։ 2023 թվականից վերսկսվել են ավագ դպրոցներ այցերը, որտեղ ՀԲԻ ուսանողները ներկայացնում են ինստիտուտը և նվիրում գրքեր։ Ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողները դասախոսի ղեկավարությամբ այցելել են դպրոցներ՝ ուսումնասիրելու կարիեսի տարածվածությունը և իրականացրել են բերանի խոռոչի հիգիենայի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ։ Նախատեսվում է ընդլայնել այդ ծրագրերը՝ ներառելով նաև մանկապարտեզների սաների և ծնողների հետ ուղղակի աշխատանք։

ՀԲԻ ուսանողները ներգրավվում են նաև կամավորական աշխատանքներում՝ աշխատելով և հերթապահելով հիվանդանոցներում ու շտապ օգնության բրիգադներում, ինչպես նաև աջակցելով միայնակ տարեց անձանց՝ բժշկական օգնության և կենցաղային խնդիրների լուծման հարցում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՀԲԻ-ում ձևավորված են հասարակության հետ արդյունավետ փոխհարաբերությունների, թափանցիկության և հաշվետվողականության ապահովման որոշակի կառուցակարգեր։ Դրական է, որ հաշվետվողականության համակարգը ներառում է մի շարք ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններ, որոնք ներկայացնում են ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունները։ Թեև ռեկտորի հաշվետվությունները ներկայացվում են հիմնադիրների խորհրդին, սակայն դրանց հրապարակման բացակայությունը սահմանափակում է արտաքին շահակիցների տեղեկատվացվածությունը։

Թափանցիկության ապահովման ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք քայլեր՝ մասնավորապես կայքի և ֆեյսբուքյան էջի եռալեզու դարձնելու և Էրեբունի ամսաթերթը թվայնացնելու նախաձեռնությունները, որոնք կարող են մեծացնել ինստիտուտի ճանաչելիությունն ու հասանելիությունը լայն հասարակությանը։ Այս տեսակետից բուհը կարիք ունի զարգացնելու հանրային կապերի և մեդիա հաղորդակցության

քաղաքականությունը, հստակեցնելով՝ ինչ տեղեկատվություն է ներկայացվում կայքում և սոցիալական հարթակներում, ինչպես է իրականացվում թիրախային լսարանի հետ կապը, ինչպես են ներկայացվում բուհի նախաձեռնությունները և ներդրումը հանրային բարեկեցության գործում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՀԲԻ-ում հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման մշակույթը ձևավորված է և արտահայտվում է տարբեր նախաձեռնությունների միջոցով: Այս գործունեությունները խթանում են ուսանողների սոցիալական պատասխանատվության ձևավորումը և հասարակության հետ համալսարանի շարունակական կապի ամրապնդումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԲԻ-ում ձևավորված են հասարակական պատասխանատվության մշակույթն ու գործընթացները՝ ներառյալ հաշվետվողականության կառուցակարգերը, թափանցիկության ապահովման մեխանիզմները, հետադարձ կապի գործիքները, ինչպես նաև գիտելիքի և արժեքների փոխանցման նախաձեռնությունները, փորձագիտական խումբը գտնում է, որ ինստիտուտը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հաստատության 2022-2026թ. ռազմավարական ծրագրի 7-րդ ուղղությունը վերաբերում է արտաքին կապերին և միջազգայնացմանը: Այս ուղղության համար դրված է երկու խնդիր՝ ընդլայնել և բազմազանեցնել ինստիտուտի ներպետական և միջազգային կապերը և նպաստել սփյուռքահայ ուսանողների համակազմի աճին ՀԲԻ-ում:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ չնայած հռչակված նպատակներին, բուհի արտաքին կապերի քաղաքականությունը չունի համակարգային գործողությունների պլան, ժամանակացույց, կատարողականի ցուցիչներ, ինչպես նաև պատասխանատվության հստակ մեխանիզմներ:

Դասախոսների և ուսանողների մասնակցությունը միջազգային գիտաժողովների և վերապատրաստումների հիմնականում իրականացվում է անհատական մակարդակով: Շրջանավարտների ՌԴ-ում, ԱՄՆ-ում և այլ երկրներում կրթություն շարունակելու փաստերը ցույց են տալիս հաստատությում ստացած կրթության որոշակի միջազգային ճանաչում:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Դեռ նախորդ հավատագրման ընթացքում բուհին տրվել էր խորհրդատվություն, հստակեցնելով ՀԲԻ միջազգայնացման երկարաժամկետ նպատակները՝ մշակել միջազգային համագործակցության խթանման գործիքակազմ, սահմանել դրա կիրառման պատասխանատուներ:

Ըստ ինքնավերլուծության ՀԲԻ-ն դեռ չունի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը և կոնկրետ պատասխանատուներ: Սփյուռքահայ ուսանողների հետ կապված գործընթացները համակարգում են ուսումնական մասի վարիչը և ֆակուլտետների դեկանները: Ըստ ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանի ինտիտուտի ակադեմիական կապերի և համագործակցության համար որպես պատասխանատուներ են նշված ռեկտորը, ԿՈԱ կենտրոնը, դեկանները:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ՀԲԻ-ն առաջին հերթին համագործակցում է տեղական բժշկական և ստոմատոլոգիական հաստատությունների հետ՝ ուսանողական մասնագիտական պրակտիկաների կազմակերպման նպատակով: Բուհն ունի շուրջ 40 գործընկեր կառույց, որոնց հետ կնքված են համապատասխան պայմանագրեր: Ըստ ինքնավերլուծության՝ 2023–2024 ուսումնական տարվա ընթացքում ՀԲԻ-ի ուսանողներին հնարավորություն է ընձեռվել պրակտիկա անցնելու նաև արտերկրում՝ մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունում, Վրաստանում և Աբխազիայում:

Բուհն ունի համագործակցության պայմանագրեր մի շարք միջազգային հաստատությունների և կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ՀՀ Առողջապահության ազգային ինստիտուտի, Ա.Դ. Սախարովի անվան Բելառուսիայի միջազգային պետական էկոլոգիական ինստիտուտի, Հայկական Ծառատունկ Ծրագրի (ATP), Սանկտ Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի ինստիտուտի, Թբիլիսիի թիվ 1 ստոմատոլոգիական կլինիկայի, «ՆՅՈՒ ՎԻԺՆ» ինստիտուտի, Միջազգային Կարմիր Խաչի Հայաստանյան ինստիտուտի և Բնական գիտությունների եվրոպական ակադեմիայի (Հանովեր, Գերմանիա) հետ: Սակայն ըստ ինքնավերլուծության՝ նշված համագործակցությունների կիրառումը սահմանափակ է, և պայմանագրերի ներուժը լիարժեք չի օգտագործվում:

Չնայած առկա միջազգային կապերին՝ միջազգային համագործակցության ռազմավարությունը բուհում դեռևս ձևավորման փուլում է: Գործնականում համագործակցությունները հիմնականում իրականանում են անհատական մակարդակով կամ սփյուռքահայ ուսանողների ներգրավմամբ, մինչդեռ բացակայում են ինստիտուցիոնալ մակարդակով իրականացվող ծրագրեր, ինչպիսիք են, օրինակ, «Erasmus+»-ը կամ երկկողմ կրթական նախաձեռնությունները:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ըստ ՀԲԻ-ի կողմից բերված տվյալների հաստատության պրոֆեսորադասախոսական կազմը լիովին տիրապետում է ռուսերենին, իսկ անգլերենին՝ մոտ 45%-ը: Թեև ռուսերենի իմացության բավարար մակարդակին՝ բուհը չի ձեռնարկել ռուսաստանյան բուհերի հետ

փոխանակման գործուն ծրագրեր: Ուսանողների մոտ օտար լեզուների իմացության մակարդակը վերջին տարվա կտրվածքով հետևյալ է՝ «Բուժական գործ» մասնագիտությունում 31%-ը տիրապետում է անգլերենին, իսկ ռուսերենին՝ 54%-ը, «Ստոմատոլոգիա»մասնագիտությունում 20%-ը տիրապետում է անգլերենին, իսկ ռուսերենին՝ 53%-ը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ օտար լեզուներից լրացուցիչ պարապմունքներ չեն կազմակերպվում, ինչպես նաև ուսանողները ցանկություն ունեին բացի ռուսերեն և անգլերեն լեզուները ուսումնասիրել գերմաներեն և իսպաներեն, քանի որ բժշկական ոլորտում կրթության շարունակության առումով այս լեզուները անհրաժեշտ են:

Դատողություններ: Դրական է, որ ՀԲԻ-ն նախաձեռնել է համագործակցության գործընթացներ մի շարք արտասահմանյան բուհերի հետ, ներառյալ ռուսական, գերմանական և իտալական գործընկերներ, ինչպես նաև շարունակական կապ է պահպանում սփյուռքահայ մասնագետների և ուսանողների հետ, ինչը կարող է հիմք հանդիսանալ միջազգայնացման համակարգված զարգացման համար:

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը արձանագրում է, որ միջազգային համագործակցության քաղաքականությունը գտնվում է ձևավորման փուլում: Չնայած առկա պայմանագրերին, փոխանակման ծրագրեր և համատեղ կրթական նախաձեռնություններ գրեթե չեն իրականացվում: Ինստիտուտը չունի մշակված միջազգայնացման ռազմավարություն, իսկ զարգացման ծրագրերում և առաքելության հայտարարության մեջ բացակայում է միջազգային համագործակցության վերաբերյալ հստակ ձևակերպում: Միջազգային գործընկերների ներգրավվածությունը հիմնականում սահմանափակվում է անհատական կամ սփյուռքահայ ուսանողների ներկայությամբ, և ինստիտուցիոնալ շարժունության ծրագրեր, ինչպես «Erasmus+»-ը կամ համատեղ կրթական նախագծերը, չեն իրականացվում:

Բուհը չունի պատասխանատու ստորաբաժանում կամ համակարգող անձ միջազգայնացման ոլորտում: Օտար լեզուների՝ մասնավորապես անգլերենի իմացության պակասը, ինչպես նաև դասախոսների և ուսանողների միջազգայնացման ներքին պատրաստվածության ցածր մակարդակը խոչընդոտում են միջազգային ինտեգրման գործընթացը: Թեպետ ռուսերենի իմացությունը համընդհանուր է, այն չի ապահովում լիարժեք միջազգային մասնակցություն բազմաբնույթ ծրագրերում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԲԻ-ն չունի մշակված միջազգայնացման ռազմավարություն և գործողությունների ծրագիր, բացակայում է միջազգային համագործակցության համակարգային մոտեցումը, միջազգային ծրագրերի իրականացման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում կամ պատասխանատու անձ, ինչպես նաև ուսանողների և դասախոսների շարժունության կազմակերպված գործընթաց, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԲԻ-ին չի բավարարում չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

2013 թվականին ռեկտորի հրամանով ՀԲԻ-ում ստեղծվել է Կրթության որակի ապահովման կենտրոն (ԿՈԱԿ), որի հիմնական նպատակն է կրթության որակի շարունակական բարելավումը, կրթական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացումն ու ուսման վերջնարդյունքների վրա հիմնված կրթական համակարգի ձևավորումը: Որակի քաղաքականությունն ընդգրկում է հաշվետվողականության, թափանցիկության և շահակիցների բավարարվածության սկզբունքները՝ միտված որակի ապահովման մշակույթի զարգացմանը:

Հաստատությունում ներդրված է որակի ապահովման կառուցվածք՝ բաղկացած ամբիոնների որակի պատասխանատուներից, ֆակուլտետային որակի հանձնաժողովներից և ինստիտուտի ԿՈԱ կենտրոնից: ԿՈԱԿ-ը հաշվետու է ռեկտորին և գիտական խորհրդին: Որակի ապահովման գործընթացներն իրականացվում են հաստատված կանոնակարգերի, ռազմավարության և ընթացակարգերի հիման վրա, ներառյալ՝ «Շահակիցների հետ աշխատանքների կանոնակարգ»-ը, որը սահմանում է ներքին և արտաքին շահակիցների ներգրավման դաշտը:

Որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակում գործի են դրված մի շարք մեխանիզմներ.

- դասալսումներ, այդ թվում՝ փորձի փոխանակման նպատակով,
- ուսանողական հարցումներ՝ կրթության բովանդակության, գնահատման, դասավանդման մեթոդների և պրակտիկաների արդյունավետության վերաբերյալ,
- կրթական ծրագրերի մշտադիտարկում և վերանայում,
- արտագնա պրակտիկաների ֆոկուս խմբային քննարկումներ ուսանողների և դասախոսների մասնակցությամբ,
- պետական ավարտական ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների ներգրավվածություն և եզրակացությունների օգտագործում ծրագրերի բարելավման նպատակով:

Հարցումների արդյունքներն ամփոփվում և ներկայացվում ռեկտորատին: Ուսանողական մասնակցության բարձր մակարդակ ապահովելու նպատակով հարցումները կազմակերպվում են դասաժամերի ավարտին՝ ընդգրկելով մինչև 70-80% ուսանողության:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀԲԻ-ի Որակի ապահովման ձեռնարկում ներկայացվում է որակի քաղաքականության իրականացման մեջ ներգրավված հիմնական դերակատարների՝ գիտական խորհրդին կից գործող ՈԱ-ի հանձնաժողով. որը պատասխանատու է ՈԱ քաղաքականության և հայեցակարգի բարելավմանն ուղղված առաջարկների ուսումնասիրության,

կանոնակարգային, ընթացակարգային, չափորոշիչ փաստաթղթերի և կրթական ծրագրերի վերանայման ու ներդրման քննարկման և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար, ինչպես նաև Կրթության որակի ապահովման կենտրոնը, որն էլ իր հերթին պատասխանատու է ՈԱ-ի քաղաքականության և հայեցակարգի իրագործման, ՈԱ գործընթացների մշտադիտարկման, վերանայման և բարելավման համար: ԿՈԱԿ-ը համագործակցում է ամբիոնային ՈԱ-ի պատասխանատուի, ՀԲԻ-ում ՈԱ հանձնաժողովի և ֆակուլտետների/ամբիոնների հանձնաժողովների հետ և հաշվետու է ՀԲԻ ի ռեկտորին: Հաստատությունում գործում են որակի ապահովման ֆակուլտետների հանձնաժողովներ և ամբիոնային պատասխանատուներ:

ՀԲԻ-ի Կրթության որակի ապահովման կենտրոնն ունի մեկ դրույք զբաղվածությամբ ղեկավարի պաշտոն, մեկ դրույք զբաղվածությամբ կենտրոնի պատասխանատու և կենտրոնի փորձագետ, որի հիմնական պարտականությունը դասալսումների անցկացումն է:

Հաստատության Կրթության որակի ապահովման կենտրոնն ապահովված է առանձին սարքավորումներով հագեցած տարածքով, որը պարբերաբար թարմացվում է: ՀԲԻ-ի բյուջեի 0,5%-ը տրամադրվում է որակի ապահովման գործընթացների իրականացման համար:

ԿՈԱԿ-ի աշխատակազմը պարբերաբար անցնում է մասնագիտական վերապատրաստումներ:

Կրթության որակի ապահովման կենտրոնի պատասխանատուն յուրաքանչյուր ուսումնական տարվա համար մշակում է աշխատանքային պլան, տարվա վերջում ներկայացնում է հաշվետվություն: Աշխատանքային պլանում տրված են գործառույթները, հստակ ժամանակահատվածը և պատասխանատուները, որոնց մեջ ներառված են ոչ միայն կենտրոնի աշխատակիցները, այլև հաստատատության ներքին շահակիցները՝ դասախոսներ, ՈՒԳԸ, ՈՒԽ և վարչական աշխատողներ:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

ՀԲԻ-ում սահմանված է շահակիցների ներգրավման քաղաքականություն, որը կարգավորված է 2022 թ. ընդունված «Շահակիցների հետ աշխատանքների կանոնակարգ»-ով: Փաստաթուղթն արձանագրում է ներքին և արտաքին շահակիցների հետ համագործակցության ձևաչափերը, փոխադարձ կապի գործառույթները, քննարկման հիմնախնդիրների շրջանակը և բարելավման հնարավոր ուղղությունները:

Ներքին շահակիցների շրջանակում բուհը ներառում է ուսանողներին, դասախոսներին, վարչական և օժանդակ անձնակազմը: Նրանց մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում իրականացվում է տարբեր գործիքակազմի միջոցով, ներառյալ՝ դասալսումներ, հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ: Կրթության որակի ապահովման կենտրոնը պարբերաբար կազմակերպում է դասալսումներ, որոնց արդյունքները ամփոփվում են և ներկայացվում ղեկավարությանը՝ հետագա բարելավումների նպատակով: ՀԲԻ-ում ուսանողները, շրջանավարտները և դասախոսները պարբերաբար ընդգրկվում են կրթական գործընթացի որակի վերաբերյալ հարցումներում՝ ուսուցման բովանդակության, դասավանդման մեթոդների, գնահատման մոտեցումների, կրթական միջավայրի և ծրագրային բարեփոխումների վերաբերյալ:

Ուսանողական խորհուրդն ու ուսանողական գիտական ընկերությունը ներգրավված են որակի ապահովման նախաձեռնություններին: Հարցումների արդյունքներն օգտագործվում

են կառավարչական որոշումների կայացման համար և փոխանցվում են շահակիցներին՝ ներքին հաղորդակցման միջոցներով: Ուսանողների և շրջանավարտների հարցումները իրականացվում են համապատասխանաբար ուսումնական տարվա առաջին կիսամյակում և պետական ավարտական քննություններից հետո:

Գործատուների ներգրավումը հիմնականում իրականացվում է առցանց հարցումների միջոցով: Մասնավորապես, վերջին շրջանում 14 ուղարկված հարցաշարերից ստացվել է 9 պատասխան:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հաստատությունում 2019թ. ընդունվել է «Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգ», ըստ որի ինստիտուտում որակի ներքին ապահովման համակարգի վերանայումը ենթադրում է որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսների վերլուծությունը, վերանայումը կամ վերափոխումը:

2022թ . վերանայվել է դասի որակի վերաբերյալ հարցման հարցաթերթիկը, իսկ առաջին կուրսեցիների համար կազմվել նոր հարցաթերթիկ: 2023-2024 ուսումնական տարում ԿՈԱ կենտրոնի և ուսումնական մասի հետ համատեղ իրականացրել է կրթական ծրագրերի վերանայում, կազմվել հաշվետվություն, որտեղ մանրամասն տրված են վերանայման հիմնական խնդիրները՝ ծրագրի որակի վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների կարծիքների ուսումնասիրությունը, գործատուների բավարարվածությունը ծրագրի շրջանավարտներից, ծրագրի կառուցվածքում և մեթոդներում կատարված փոփոխությունների ազդեցության գնահատումը:

Ներքին շահակիցների հետ արդյունքները կիսվում են փակ հաղորդակցման ալիքներով, իսկ հարցաշարերը վերանայվում են՝ հիմք ընդունելով ինչպես ներքին վերլուծությունը, այնպես էլ արտաքին փորձը (օրինակ՝ Սեչենովի համալսարանի փորձի ուսումնասիրումից հետո հարցաշարերի վերափոխում):

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հաստատության համար ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների ինքնավերլուծության իրականացման երկրորդ փորձն է: ՀԲԻ-ի 2021թ. ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո, հաստատությունը հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ներկայացրել է թերությունների վերացման պլան, հետագայում կատարել է թերությունների վերացման ծրագրի կատարողականի հաշվետվություն: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ինքնավերլուծությունն իրականացնող խմբում ընդգրկված են եղել և ակտիվ մասնակցություն են ունեցել ղեկավար կազմի, դասախոսական և ուսանողական համակազմի ներկայացուցիչները:

Ինքնավերլուծության զեկույցի կազմման ժամանակ ըստ չափանիշների հավաքագրված տվյալները որակի կենտրոնի կողմից համադրվել են ռազմավարական ծրագրի պլանի ԳԱՑ-երի, պարզելու դրանցից որոնք են իրականացվել, որոնք ոչ:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ՀԲԻ-ի կայք էջում տեղադրված են ՀԲԻ-ի գործունեության կարգերը և ընթացակարգերը: Պաշտոնական կայքէջը և ֆեյսբուքյան էջն ապահովում են տեղեկատվության հասանելիություն լայն շրջանակների համար: Սակայն տեղեկատվության բովանդակության վերաբերյալ ըստ դիտարկումների առկա չեն տարեկան հաշվետվություններ հասարակական տարբեր շահակիցների համար, որը կամփոփեր ՀԲԻ-ի հիմնական ձեռքբերումները, մարտահրավերները և ռազմավարական նպատակները:

ՀԲԻ-ի կայքէջում առանձնացված է ԿՈԱԿ-ի համար բաժին, որտեղ ներկայացված են կենտրոնի նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև տեղադրված են ՈԱ վերաբերյալ փաստաթղթերը (ՈԱ Ձեռնարկ և այլն):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՀԲԻ-ում ձևավորված է որակի ապահովման կառուցվածքային ամբողջական համակարգ, որը ներառում է ամբիոնների որակի պատասխանատուներին, ֆակուլտետային հանձնաժողովները և Կրթության որակի ապահովման կենտրոնը: Նշված մարմինները գործում են հստակ սահմանված գործառույթներով և ունեն փոխկապակցված դերեր հաստատության ՈԱ գործընթացների կազմակերպման և իրականացման հարցում: Դրական է նաև, որ հաստատության որակի ապահովման քաղաքականությունն ընդգրկում է ոչ միայն կրթական ծրագրերի շարունակական բարելավման նպատակները, այլև ընդգծում է թափանցիկության, հաշվետվողականության և շահակիցների ներգրավման սկզբունքները:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև այն փաստը, որ հաստատությունում կիրառվում են մի շարք գործիքներ՝ դասալսումներ, ուսանողական և գործատու հարցումներ, ֆոկուս խմբեր, ծրագրերի վերանայումներ, ինչը հիմք է ձևավորող որակի մշակույթի կայացման համար:

Միևնույն ժամանակ, համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով խումբը կարևորում է մի շարք բարելավումներ: Մասնավորապես փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտ է ամրապնդել տվյալահեն որոշումների կայացման պրակտիկան՝ ապահովելով, որ հարցումների, դիտարկումների և դասալսումների արդյունքները վերլուծվեն ոչ միայն ամփոփման, այլ նաև պարբերաբար գործողությունների պլանների մշակման և իրականացման համար: Այս մոտեցումը կապահովի ՊԻԳԲ շրջափուլի ավելի ամբողջական կիրառում և կխորացնի որակի կառավարման մշակույթը: Կարևոր է, որ որակի ապահովման գործընթացները չսահմանափակվեն միայն կրթական բաղադրիչով: Խորհուրդ է տրվում ընդլայնել ՈԱ գործառույթները՝ ընդգրկելով նաև կառավարման, ռեսուրսների բաշխման, միջազգային համագործակցության և ռազմավարական պլանավորման ոլորտները: Սա թույլ կտա ձևավորել որակի ապահովման համակարգի ինստիտուցիոնալ ամբողջական մոտեցում, որն առավել համահունչ կլինի հաստատության համակողմանի զարգացմանը: Խորհուրդ է տրվում խորացնել արտաքին շահակիցների, հատկապես՝ գործատուների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին: Հարցաշարային համագործակցությունից դուրս պետք է ձևավորել ոլորտային խորհրդակցությունների, համատեղ կրթական նախաձեռնությունների և շրջանավարտների աշխատաշուկայում տեղավորման հետագծման մշտադիտարկման

գործիքակազմ: Սա կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համահունչ բարելավումների իրականացմանը և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման փուլից հետո ՀԲԻ-ում կատարվել են նշանակալի բարելավումներ որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ, մշակվել և գործարկվել են կանոնակարգային փաստաթղթեր և որակի ապահովման ձեռնարկ, որոնք ծառայում են որպես աշխատանքային ուղեցույցներ, ներդրվել են տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմներ, որոնք հիմք են հանդիսանում բարելավման գործողությունների համար, իսկ շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում՝ ապահովելով ներառականություն և հետադարձ կապ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՀԲԻ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Հերմինե Գրիգորյան
Փորձագիտական խմբի ղեկավար

19-ը հունիսի, 2025 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հերմինե Գրիգորյան՝ 1992թ.-ին ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է (2008), դոցենտ (2011): 1992 թվականից դասավանդում է Վանաձորի պետական համալսարանում (ՎՊՀ): Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար: Վարում է «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ», «Դիֆերենցիալ հավասարումներ», «Կոմպլեքս անալիզ», «Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Շատ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Ֆինանսական մաթեմատիկա» դասընթացները: Զբաղվում է փոփոխական հաստության անիզոտրոպ սալերի եզրային խնդիրների հարցերով: 2019թ.-ից որպես արտաքին փորձագետ ներգրավվել է մի շարք ՄՈՒՀ-երի արտաքին գնահատման գործընթացներում:

Նինո Չիչիվեյշվիլի՝ 2002–2008թթ. սովորել է Թբիլիսիի պետական բժշկական համալսարանում՝ ստանալով բժշկի որակավորում (MD), 2008–2015թթ. անցել է կանանց հիվանդությունների և ծննդաբանության ռեզիդենտուրա: 2017թ-ից սովորում է Թբիլիսիի պետական համալսարանի կլինիկական և թարգմանական բժշկության դոկտորական ծրագրում: 2008–2015թթ. աշխատել է «Նյու Լայֆ» կլինիկայում որպես ռեզիդենտ բժիշկ, 2008–2013թթ.՝ շտապ օգնության բժիշկ: 2017–2020թթ. եղել է «Գեոմեդ» համալսարանի բժշկական ֆակուլտետի դեկան, 2020–2022թթ.՝ շարունակական կրթության բաժնի ղեկավար, 2022–2023թթ.՝ ռեզիդենտուրայի և մասնագիտական զարգացման բաժնի փոխտնօրեն: 2023թ-ից հանդիսանում է «Հերա 2011» կլինիկայի որակի բաժնի ղեկավար, 2024թ-ից նաև որակի մենեջեր նեոնատալ «QIRON+» կլինիկայում: Միաժամանակ հանդիսանում է միջազգային հավատարմագրման խորհրդատու և Կանանց գիտական միավորման հիմնադիր-նախագահ: 2024թ-ից դասավանդում է միկրոբիոլոգիա և պատոլոգիա ԲՏԱ ակադեմիայում:

Ռոլֆ Հոյսեր՝ 1980-ականների վերջերին ստացել է հանրային առողջության մագիստրոսի աստիճան Կալիֆոռնիայի համալսարանում (Բերկլի): Մինչև 2024թ. աշխատել է Ցյուրիխի համալսարանի համաճարակաբանության, կենսվիճակագրության և կանխարգելման ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող: 2000–2010թթ. եղել է Շվեյցարիայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալության (AAQ) տնօրեն: 2004–2014թթ. եղել է Եվրոպական Հավատարմագրման Կոնսորցիումի (ECA) նախագահ: 2010–2018թթ. գլխավորել է Շվեյցարիայի քաղցկեղի ազգային ռեգիստրը: Եղել է խորհրդատու, փորձագետ և վերլուծաբան մի շարք երկրների հավատարմագրման հանձնաժողովներում՝ ներառյալ Լյուքսեմբուրգ, Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄԷ և այլուր: Դասավանդել է ETH Zurich-ում և այլ բուհերում: 2018թ. արժանացել է ETH Zurich-ի «Լավագույն դասախոս» մրցանակին:

Նաիրա Հունանյան՝ 2002թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության բակալավրի ծրագիրը գերազանցությամբ, 2004թ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ կրկին գերազանցությամբ: 2013թ. պաշտպանել է կենսաբանական գիտությունների թեկնածուի ատենախոսություն՝ «Կենսաքիմիա, մոլեկուլային կենսաբանություն և ֆիզիոլոգիա» ոլորտում: 2004–2008թթ. աշխատել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի բժշկական կենսաբանության կենտրոնում որպես կրտսեր գիտաշխատող, 2006–2007թթ.՝ Կալիֆոռնիայի համալսարանի (Սան Ֆրանցիսկո) բջջաբանության և հյուսվածաբանության դեպարտամենտում՝ որպես կրտսեր մասնագետ: 2013թ. դասախոսել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում: 2017–2024թթ. եղել է Ավանդական բժշկության համալսարանի ամբիոնի վարիչ և դասախոս: 2022թ-ից ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող է, դասավանդում է նաև Մխիթար Գոշ և Ավանդական բժշկության համալսարաններում: 2005թ. արժանացել է ԱՄՆ CRDF հիմնադրամի գիտական մրցանակի:

Աստղիկ Համբարձումյան՝ 2020–2024թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան: 2024թ-ից նույն համալսարանում ուսանում է մագիստրոսական ծրագրում: 2024թ-ից աշխատում է Երևանի պետական համալսարանում՝ որպես ավագ լաբորանտ: 2023թ. դարձել է «100 գաղափար Հայաստանին» մրցույթի հաղթող՝ «Գյուղատնտեսական և կենսաբանական գիտություններ» անվանակարգում: Մասնակցել է մի շարք միջազգային և տեղական գիտաժողովների՝ ներառյալ «Biochemistry is my profession», «AI Conf Armenia», DataFest2023, Feminno 2023: 2024թ. հանդես է եկել համահեղինակությամբ գիտական աշխատությամբ՝ նվիրված կենսաբանական ծագմամբ արծաթի նանոմասնիկների հակաբակտերիալ, հեմոլիտիկ և հակաուռուցքային հատկություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	28.04.2025 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում ռեկտորի հետ	09:30	10:20	50 րոպե
2	Հանդիպում ուսումնական մասի ղեկավարի հետ	10:30	11:20	50 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:30	12:20	50 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:20	50 րոպե
5	Հանդիպում ինստիտուտի Հիմնադիր խորհրդի հետ	13:30	14:20	50 րոպե
6	Հանդիպում գործատուների հետ	14:30	15:20	50 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:30	16:00	30 րոպե

	29.04.2025 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում դեկանների հետ	09:30	10:20	50 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	11:40	12:40	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5	Հանդիպում ուսանողների (8-10 հոգի) հետ	14:00	15:00	60 րոպե
6	Հանդիպում ՈՒԽ և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ	15:20	16:00	40 րոպե
7	Հանդիպում շրջանավարտների հետ	16:10	17:00	50 րոպե
8	Ռեսուրսների դիտարկում	17:10	18:40	90 րոպե
9	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:50	19:30	40 րոպե

	30.04.2025 թ.		***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Բուժական գործ» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	09:30	10:20	50 րոպե
2	Հանդիպում «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Բուժական գործ» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:30	11:20	50 րոպե

3	Հանդիպում «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Բուժական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	11:30	12:30	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		12:40	13:40	60 րոպե
5	Հանդիպում ստորաբաժանումների (Հաշվապահ, Գրադարանավար, Կադրերի տեսուչ, Աշխատակազմի ղեկավար) ղեկավարների հետ		13:50	14:50	60 րոպե
6	Բաց հանդիպում		15:00	15:40	40 րոպե
7	Հանդիպում Կրթության որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ		15:50	16:50	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		17:00	19:00	120 րոպե

	01.05.2025 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	10:00	11:00	60 րոպե
2	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:10	11:40	40 րոպե
3	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ	14:10	14:40	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Էթիկայի կանոնագիրք	2
2.	Ռեկտորին կից խորհրդակցական մարմնի գործունեությունը կարգավորող փաստաթղթային հենք (առկայության դեպքում)	2
3.	Խորհուրդների արձանագրություններ	2
4.	Ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիր	2
5.	Ֆակուլտետային խորհրդի և ուսումնամեթոդական հանձնաժողովների նիստերի արձանագրություններ	2
6.	Ֆակուլտետի կատարված աշխատանքների տարեկան և եռամսյակային (ամսական) հաշվետվություններ	2
7.	Ամբիոնի գործունեության տարեկան պլան	2
8.	Ամբիոնի նիստերի արձանագրություններ	2
9.	Ամբիոնի կատարված աշխատանքների տարեկան և եռամսյակային (ամսական) հաշվետվություններ	2
10.	Մասնագիտությունների ուսումնական պլաններ	3
11.	Ուսանողների ակադեմիական թերթիկներ	3
12.	ՄԿԾ-ների մասնագրեր	3
13.	ՈՒսանողների գնահատման կարգը և չափանիշները	3
14.	Կլինիկական առարկաների փաթեթ	3
15.	Ավարտական թեստերի օրինակներ	3
16.	Մատյաններ	3
17.	Անվանական կրթաթոշակների նշանակման կանոնակարգ (նմանատիպ թոշակների առկայության դեպքում):	4
18.	«Ուսանողի ուղեցույց»	4
19.	Ուսանղի անձնական գործեր	4
20.	Դասալսումների, փոխադարձ դասալսումների ժամանակացույցները	5
21.	Ամբիոնների արձանագրությունները՝ դասալսումների արդյունքների քննարկման վերաբերյալ	5
22.	Դասախոսների խրախուսման վերաբերյալ փաստաթղթային հենք	5
23.	Դասախոսների տպագրության ֆինանսավորման հիմքերը	5
24.	Դասալսումների լրացված ձևաթղթեր	5
25.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	5
26.	Վերապատրաստման փաթեթներ	5
27.	«Երիտասարդ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման և խրախուսման ընթացակարգի» ընդունման պահից երիտասարդ մասնագետների խրախուսման հիմքերը	5

28.	Գիտական կենտրոնների կամ համալսարանների հետ ինստիտուտի համագործակցության պայմանագրեր	6
29.	ՊԴ կազմի տվյալներ, ովքեր ՀԲԻ-ում դասավանդման հետ մեկտեղ գիտահետազոտական կենտրոնների աշխատակիցներ են	6
30.	Ամենամյա ուսանողական միջբուհական գիտական կոնֆերանսների բոլոր առկա ժողովածուներ	6
31.	Կազմակերպված միջբուհական գիտական կոնֆերանսների թիվ	6
32.	Միջազգային գրախոսվող պարբերականներում հրապարակված հոդվածների թիվ	6
33.	Գրադարանավարի հաշվետվություն	7
34.	Մասնագիտական ռեսուրսների գնամն հիմքեր	7
35.	2023-2024թթ. գործատուների հարցման վերլուծություն	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ, մասնագիտական կաբինետներ
2. Համակարգչային լսարան
3. Լաբորատորիաներ
4. Ստոմատոլոգիայի սիմուլյացիոն կաբինետ
5. Գրադարան
6. Ընթերցասրահ
7. Անատոմիական թանգարան
8. Սպորտային դահլիճ
9. Բուժկետ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ
ՀԲԻ - Հայկական բժշկական ինստիտուտ
ԿԳՄՍ նախարարություն- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ- որակի ապահովում
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ
ՊԴ կազմ-պրոֆեսորադասախոսական կազմ
ՌԾ- ռազմավարական ծրագիր
ՌԻԳԸ- ուսանողական գիտական ընկերություն
ՌԻԽ- ուսանողական խորհուրդ
ՌԻՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ